

5-6(363-364)
20.03.2014
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն եւ գիտարար, իմանալ զբանս հանձարոյ

ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ՝ ՄԵԿ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՐՅԱՆ ՄԻՋՆՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԼՍՈՒՄՆԵՐ



Մարտի 3-5-ը աշխատանքային այցով Արցախում եր գտնվում ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը: Նա մասնակցեց ԼՂՀ Ազգային ժողովում կազմակերպված՝ «Ավագ դպրոց. առկա վիճակը և զարգացման հեռանկարները թեմայով» լուսններին, ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանի հետ վավերացրեց երկու նախարարությունների համագործակցության 2014-2020թթ. ծրագիրը, ծանոթացավ Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի՝ ՀՀ ԿԳՆ-ի նվիրատվությանը համակարգչային դասարանի գործունեությանը:

ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանին ընդունել է Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը:

Լուսնները կազմակերպվել էին ԼՂՀ և ՀՀ Ազգային ժողովների կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հար-

ցերի մշտական հանձնաժողովների նախաձեռնությամբ: Ներկա էին ՀՀ ԱԺ համանուն հանձնաժողովի նախագահ Արտակ Դավթյանը, պատգամավորներ, կրթության ոլորտի պատասխանատուներ:

Լուսններին մասնակցում էր ԼՂՀ խորհրդարանի ղեկավար Աշոտ Ղուլյանը:

Բացման խոսքով հանդես եկավ ԼՂՀ ԱԺ կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արմեն Սարգսյանը, որն ասաց, որ այդ թեմայով լուսնների անցկացման գաղափարը ծնվել է անցած տարվա նոյեմբերին՝ հաշվի առնելով, որ ավագ դպրոցի անցումային փուլում առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնց լուրջ քննարկման արդյունքում ստացված առաջարկությունները կարող են օգնել առավել քիչ

թերություններով անցնելու հետագա ճանապարհը: Բացի այդ, ՀՀ-ում նախատեսվում է անցնել պարտադիր 12-ամյա հանրակրթության, և դրա անհրաժեշտության մասին երկու հանրապետությունների օրենսդիր և գործադիր իշխանությունների կրթության ոլորտի առաջին պատասխանատուներից անմիջապես լսելն ավելի ճիշտ կլինե:

Մասնակիցներին ողջունեց ԼՂՀ ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանը, ով ասաց, որ նման ձևաչափով քննարկումները վկայում են այն մշտական ուշադրության մասին, որ առկա է պետական կառավարման համակարգում: Հանրակրթության բարեփոխումների հիմնական խնդիրը կրթության որակի ապահովումն է, որն արդեն մի քանի տարի է՝ իրականացվում է 12-ամյա կրթության արմատավորմամբ: Նպատակը ոլորտի համապատասխանեցումն է հանըն-

դունելի միջազգային չափանիշներին: Նրա խոսքով, կրթական բարեփոխումների գործընթացն անցած տարիներին կուտակել է որոշակի փորձառություն, և այդ ընթացքում նկատելի են ինչպես հաջողություններ, այնպես էլ բացթողումներ: Գործընթացը պարբերաբար և միջանկյալ քննարկումների կարիք ունի թե՛ բարեփոխումների ծրագրային դրույթների և թե՛ իրականացման մեխանիզմների հստակեցման, օրենսդրական ու նորմատիվ ակտերի կատարելագործման նպատակով: Կոնկրետ առկա են հարցեր, որոնք վերաբերում են առանձնապես հանրակրթության երրորդ աստիճանում՝ ավագ դպրոցում կրթության որակի և արդյունավետության բարձրացման ու արդիականացման ծրագրերին: Խնդիրը կարևորվում է նաև այն առումով, որ ավագ դպրոցը համարվում է նախամասնագի-

տական կրթություն ապահովող հիմնական օղակը, որի գործունեությունից մեծապես կախված են սովորողների մասնագիտական ճիշտ կողմնորոշումը և հետագա ուսումնառության հաջողությունը: Ա. Ղուլյանի կարծիքով, չպետք է զոհանալ նախանշված ճանապարհի առաջին քայլերն անելով: Իսկ թե որոնք են այդ ճանապարհի հաջորդ՝ իրավական, քաղաքական, բացատրական քայլերը՝ այս և նման հարցերի պատասխանը գտնելու, առաջիկա անելիքները հստակեցնելու, թերությունները բացահայտելու, օպտիմալ ուղիներն ու միջոցները գտնելու ակնկալումով էլ կազմակերպվել են լուսնները:

Կրթական բարեփոխումների ընթացքի մասին զեկուցումներով հանդես եկան ԼՂՀ և ՀՀ ԿԳ նախարարներ Սլավա Ասրյանն ու Արմեն Աշոտյանը:

ՍԼԱԿԱ ԱՐՅԱՆ. ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ



Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ավագ դպրոցների ստեղծման գործընթացը սկսվել է 2009-2010 ուսումնական տարվանից՝ հիմք ընդունելով ԼՂՀ կառավարության միտի 05.08.2008 թվականի «Ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական և փորձնական ծրագրերին հավանություն տալու մասին» N18/23 արձանագրային որոշումը: Արդյունքում ԼՂՀ կառավարության 09.06.2009 թվականի N363-Ն որոշմամբ հաստատվեց ավագ և հիմնական դպրոցների ցանկը, ըստ որի՝ Ստեփանակերտի հ. 8, հ. 11 և Շուշիի Սուրբազանի անվան միջնակարգ դպրոցները վերակազմակերպվեցին որպես ավագ դպրոցներ, իսկ Ասկերանի, Մարտակերտի հ. 1, Մարտունու հ. 1, Ճարտարի հ. 1 և Հաղարթի միջնակարգ դպրոցները՝ որպես հոսքային ուսուցմամբ դպրոցներ: Հոսքային ուսուցում են իրականացնում նաև նախկինում ստեղծված Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղը, ԼՂՀ պաշտպանության նախարարության ռազմամարզական վարժարանը և Շուշիի Գ. Ղազարյանի անվան երաժշտական մասնագիտացված հանրակրթական դպրոցը:

Գործող 3 ավագ, 5 հոսքային միջնակարգ և Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղի 10-12-րդ դասարաններում ընդգրկված են 1642 սովորողներ, որից 10-րդ դասարանում՝ 637, 11-րդ դասարանում՝ 526, 12-րդ դասարանում՝ 479 սովորողներ: Ավագ դպրոցների 10-12-րդ դասարաններում ընդգրկվածները կազ-

մում են ընդհանուր սովորողների 42,1%-ը:

Ավագ դպրոցների կրթական գործընթացը եղել է նախարարության ուշադրության կենտրոնում: Իրականացված համակողմանի և թեմատիկ տեսչական ստուգումների, արտաքին ընթացիկ ստուգումների արդյունքների քննարկումների և դասավանդող ուսուցիչների ու դպրոցների ղեկավարների հետ հանդիպումների միջոցով ուսումնասիրվում, և կոնկրետ քայլեր են ձեռնարկվում բացահայտված թերությունների վերացման, սովորողների և դասավանդող ուսուցիչների ու դպրոցների ղեկավարների պատասխանատվության բարձրացման ուղղությամբ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ավագ դպրոցների ստեղծման քաղաքականությունն իրատեսական է, և հանրակրթության ոլորտի բարեփոխումների հիմնախնդիր հանդիսացող ուսման որակի բարձրացման ուղղությամբ տարվող աշխատանքները դրական տեղաշարժ են արձանագրում:

Ավագ դպրոցների ուսման առաջադիմության և որակի բարձրացման ուղղությամբ տարվող աշխատանքների ձեռքբերումները, թերություններն ու հիմնախնդիրները նշելու համար ներկայացնենք որոշակի վերլուծություն:

Ուսման որակի և առաջադիմության առումով առավել օբյեկտիվ ցուցանիշներ են հանդիսանում շրջանավարտների միասնական քննությունների արդյունքները: Ստորև ներկայացված են 2012-2013 ուստարվա տվյալները:

№№	Դպրոցներ	Դիմորդների քանակությունը	Հավաստված թվերը			
			0-7.25	7.5-13.25	13.25-17.25	17.5-20
1.	Ատեփ. ՌՑ	328	27%	46%	19%	8%
2.	Ատեփ. Ռ11	411	21%	47%	19%	13%
3.	Ֆիզմաթ	111	3%	32%	26%	39%
4.	ԱՍԿԵՐԱՆ	31	35%	59%	3%	3%
5.	Մարտակերտի Ռ1	73	36%	44%	14%	6%
6.	Մարտունու Ռ1	121	18%	51%	21%	10%
7.	Ճարտարի Ռ1	48	23%	44%	20%	13%
8.	Հարթոք	73	30%	52%	15%	3%
9.	Շուշիի Սուրբազանի	51	35%	55%	8%	2%
	ԸՆԴՀԱՆՈՒՐ	1247	25%	48%	16%	11%

Ավագ դպրոցների ընդհանուր ցուցանիշները համեմատելով ընդհանուր հոսքի միջնակարգ դպրոցների շրջանավարտների ցուցաբերած արդյունքների հետ՝ նշենք, որ ավագ դպրոցների շրջանավարտների միասնական քննությունների արդյունքներն անառաջադեմ միավորների համեմատությամբ ցածր է 12%-ով, միջակ միավորները (7,5-13,25) բարձր են 4%-ով, լավ միավորները (13,5-17,25)՝ 4%-ով և գերազանց միավորները (17,5-20)՝ 5%-ով:

ԼՈՒՄՆԵՐ

ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՇԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԱՎԱԳ ԴԴՐՈՅՈՒՄ

1 Ըստ դպրոցների՝ լավագույն արդյունք են ցուցաբերել ֆիզմաթ դպրոցը. անառաջադեմ միավորները՝ 3%, միջակ՝ 32%, լավ՝ 26%, գերազանց՝ 39%:

Անառաջադեմ միավորների առումով ցուցանիշները ցածր են Մարտակերտի հ. 1 (36%), Ասկերանի (35%), Շուշիի (35%), Հարությունի (30%) դպրոցներում, «լավ» և «գերազանց» միավորների առումով լավագույն արդյունքներ են ցուցաբերել ֆիզմաթ (65%), ճարտարի հ. 1 (33%), Ստեփանակերտի հ. 11 (32%), Մարտունու հ. 1 (31%) և Ստեփանակերտի հ. 8 (27%) դպրոցների շրջանավարտները, իսկ առավել ցածր արդյունքներ՝ Ասկերանի (6%) և Շուշիի (10%) դպրոցները:

Ավագ դպրոցների սովորողների ուսման որակի և խորացված գիտելիքների ցուցանիշների վերլուծության համար ներկայացվեցին դպրոցականների առարկայական օլիմպիադաներում ցուցաբերած արդյունքները:

Մրցանակային 51 տեղերից 21-ը գրավել են ավագ դպրոցների սովորողները, իսկ գովասանագրի արժանացած 76 սովորողներից 34-ն ավագ դպրոցների սովորողներ են, որը կազմում է համապատասխանաբար 41,2% և 44,7% կան միջինը՝ 43,3%, և եթե համեմատում ենք ավագ դպրոցներում սովորողների ընդհանուր ընդգրկվածության հետ (42,1%), ապա ստացվում է, որ ընդամենը 1,2%-ով են ցուցանիշներն ավել և չեն գոհացնում՝ հաշվի առնելով ավագ դպրոցների պոստեցիալ հնարավորությունները: Ըստ դպրոցների՝ լավագույն արդյունք են ցուցաբերել Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոցը՝ 9 մրցանակային տեղ և 4 գովասանագիր, Ստեփանակերտի հ. 11 դպրոցը՝ 5 մրցանակային տեղ և 7 գովասանագիր, Մարտունու շրջանի ճարտարի հ. 1 դպրոցը՝ 3 մրցանակային տեղ և 4 գովասանագիր և Մարտակերտի հ. 1 դպրոցը՝ 2 մրցանակային տեղ և 5 գովասանագիր: Ցածր արդյունքներ են ցուցաբերել Ասկերանի և Շուշիի Մուրազյանի անվան դպրոցները՝ 2-ական գովասանագրեր, ինչպես նաև Ստեփանակերտի հ. 8 դպրոցը՝ 1 մրցանակային տեղ և 1 գովասանագիր, Մարտունու հ. 1 դպրոցը՝ 1 մրցանակային տեղ և 4 գովասանագիր, Հարությունի՝ 6 գովասանագիր:

Արդյունքները վկայում են, որ ցածր ցուցանիշները պայմանավորված են նշված դպրոցներում ուսուցիչների կողմից դպրոցական առարկայական օլիմպիադաներում սովորողների նախապատրաստման աշխատանքների թույլ և անկարողակով՝ հատկապես բնագիտական առարկաների ուղղությամբ:

Ավագ դպրոցների առկա վիճակը բնութագրելու համար ներկայացվեցին 12-րդ դասարաններում սովորողների շրջանում նախարարության կողմից անցկացված հարցումների արդյունքները: Հարցմանը մասնակցել են ավագ դպրոցների (բացի ֆիզմաթ դպրոցից) 370 սովորողներ. ներկայացվեցին մի քանի հարցերի արդյունքները.

1. Որքանով է ավագ դպրոցը բավարարում Ձեր ուսումնական հետաքրքրությունները.

ա) լիովին բավարարում է իմ սպասելիքները - 18,1%.

բ) մասամբ է բավարարում իմ սպասելիքները - 67,8%.

գ) ընդհանրապես չի բավարարում իմ սպասելիքները - 13,2%:

2. Առարկան անհրաժեշտ մակարդակով ու չափանիշներով յուրացնելու համար ես.

ա) բավարարվում եմ տվյալ առարկայի ուսուցչի մատուցած գիտելիքներով - 30,4%.

բ) լրացուցիչ պարապմունքի կարիք գգալով՝ պարապմունքների են գնում իմ դասավանդող ուսուցչի մոտ - 19,1%.

գ) լրացուցիչ պարապմունքի են գնում այլ ուսուցչի մոտ - 50,5%.

դ) ստիպողաբար պարապմունքների են հաճախում իմ ուսուցչի մոտ - 1,6%:

3. Որքան հաճախ եք դասեր պարապում համակարգչային սեյնակում կամ համակարգչի կիրառմամբ

ա) շատ հաճախ - 2,9%

բ) հաճախ - 14,8%

գ) երբեմն - 63,2%

դ) երբեք - 19,1%:

4. Մասնագիտություններ, որոնք ընտրել են շրջանավարտները.

Տնտեսագիտական - 66, Իրավաբանական - 53, Քաղաքագիտություն - 20, Լեզուներ - 41, Բուժական գործ - 16, Շինարարություն - 21,

Լրագրություն - 11, Ֆիզկուլտուրա - 10, իսկ մնացած մասնագիտությունների գծով 10-ից քիչ թվով, այդ թվում ֆիզիկա - 2, Քիմիա - 1, իսկ Մաթեմատիկա՝ ոչ ոք, դեռևս չեն կողմնորոշվել - 23, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ - 5, ուսումը չեն շարունակում - 6 շրջանավարտներ:

Ըստ բուհերի՝ ՀՀ պետական բուհեր - 68, ԱրՊՀ - 206, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Ստեփանակերտի մասնաճյուղ - 10, «Գրիգոր Նարեկացի» համալսարան - 3, «Մեսրոպ Մաշտոց» համալսարան - 5, «Գյուրջյան» կիրառական արվեստի ինստիտուտ - 2, ռազմական ուսումնարաններ - 5:



5. Ի՞նչը կցանկանայիք փոխել ձեր դպրոցում.

ա) աշակերտական մթնոլորտը - 16,2%.

բ) ուսուցիչներին - 25,6%.

գ) բարելավել տեղեկատվական տեխնոլոգիաները - 23,2%:

Աշակերտներն այլ տարբերակի ներքո առաջադրել են նաև ավագ դպրոցում փոփոխություններ կատարելու մասին իրենց տեսակետները: Նրանք նշել են շտեմարանների վերացման մասին, որը դիտվում է որպես ճիշտ գիտելիքներ ցույց տալու կեղծ ճանապարհ: Ավագ դպրոցականները նշում են լավ և փորձառու մասնագետների կարիքի մասին (5 հոգի): Այլ տարբերակում երկու աշակերտներ նշել են ուսումնական ծրագրերի բեռնաթափման անհրաժեշտության մասին: Մեկ աշակերտ որպես առաջարկ, նշել է երկարօրյա պարապմունքների անհրաժեշտության մասին և վկայակոչել Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոցը: Աշակերտները նշում են դասագրքերի փոփոխության անհրաժեշտության մասին: Մեկ աշակերտ նշել է ուսուցիչների ճիշտ ընտրության, մեկը՝ աշակերտների հոգեբանությունը հասկացող ուսուցիչների անհրաժեշտության մասին: Աշակերտներից մեկն էլ նշել է, որ ուսուցիչները շահագրգռված չեն իրենց գիտելիքները լրիվությամբ մատուցելու գործում. եթե նրանք շահագրգռված լինեին, լրացուցիչ պարապմունքների անհրաժեշտությունը չէր լինի: Հետաքրքիր էր նաև մեկ աշակերտի այն առաջարկությունը, համաձայն որի՝ բոլոր աշակերտները չպետք է մուտք ունենան ավագ դպրոց, որպեսզի ավագ դպրոցի վարկանիշը պահպանվի:

Աշակերտները նշել են մասնագիտական բարձր գիտելիքներ ունեցող ուսուցիչների անհրաժեշտության և թույլ ուսուցիչների մոտքն ավագ դպրոց արգելելու (3 հոգի), դպրոցական ճաշարան ունենալու (2 հոգի), դպրոցական գույքը փոխելու (2 հոգի), դասղեկական աշխատանքի թույլ կողմերի մասին:

Ելնելով վերոնշյալ վերլուծությունից և հաշվի առնելով 2009-2013 թվականներին նախարարության կրթական պետական տեսչության, գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից իրականացված ստուգումների արդյունքները և մեր կողմից իրականացվող հոսքային ուսուցման հետ, հիմնականում բավարարում են «Ավագ դպրոցների համակարգի ստեղծման ռազմավարական ծրագրի» պահանջները, այն ինչ էլ հանդիսանում ըստ սովորողների մասնագիտությունների խորացված գիտելիքներ ստանալու, ապագա մասնագիտական կողմնորոշման և ինքնուրույն աշխարհայացքի ձևավորման համար:

Ինչպես արդյունքներն են վկայում, այսօր-

վա ավագ դպրոցն ուսման որակի և առաջադիմության առումով որոշակի առաջընթաց է արձանագրել և ընդհանուր միջնակարգ կրթություն տվող դպրոցների ուսման ցուցանիշների նկատմամբ ավելի բարձր ցուցանիշներ ունի, որը ներկայացվեց միասնական քննությունների, առարկայական օլիմպիադաների և այլ մրցույթների արդյունքներով: Կրթության ոլորտի մանկավարժական կոլեկտիվների ու հասարակության շրջանում ավագ դպրոցն արդեն իսկ դիտվում է որպես որակյալ կրթություն ապահովող համակարգ, որի ապագա առաջընթացը պայմանավորված է մի շարք հիմնախնդիրների լուծմամբ, որոնց վրա կցանկանայի հրավիրել ձեր ուշադրությունը.

1) Ավագ դպրոցների ստեղծման ռազմավարական ծրագիրը մեր համրապետությունում լիարժեքորեն չի իրականացվել. գյուղական վայրերի դպրոցները, բացառությամբ ճարտարի երկու համայնքների, դուրս են մնացել այդ ցանցից, և ստացվել է սոցիալական անհավասարություն գյուղական և քաղաքային բնակավայրերի միջև:

2) Ավագ դպրոցների 10-րդ դասարանների ընդունելությունն իրականացվում է՝ առանց հաշվի առնելու տվյալ հոսքի նկատմամբ սովորողների ունեցած գիտելիքների մակարդակը: Հաշվի առնելով հիմնական դպրոցի շրջանավարտների որակական գիտելիքների մակարդակը՝ կարող ենք ասել, որ ընդհանուր սովորողների 42,1% ընդգրկվածությունը նույնպես բարձր ցուցանիշ է: Համեմատության համար նշենք 2014թ. փետրվար ամսվա ընթացքում նախարարության պետական տեսչության կողմից Ստեփանակերտի հ. 1 հիմնական դպրոցի 9-րդ դասարաններում մաթեմատիկայից և հայոց լեզվից տրված ստուգողական գրավորների արդյունքները. հինգ 9-րդ դասարաններում մաթեմատիկայից մասնակցել են 85 աշակերտներ, որից 61,2%-ն ստացել է 1-3 միավոր, 35,3%-ը՝ 4-6 միավոր, 3,5%-ը՝ 7-10 միավոր: Հայոց լեզվից մասնակցել են 89 աշակերտներ, որից 26,8%-ն ստացել է 1-3 միավոր, 51,7%-ը՝ 4-6 միավոր, 22,5%-ը՝ 7-10 միավոր: Այսինքն, տվյալ դպրոցի ցուցանիշներով ավագ դպրոցի համար որակյալ կրթություն կարող են ապահովել մաթեմատիկայից՝ 3,5%-ի և հայոց լեզվից՝ 22,5%-ի չափով սովորողներ:

3) Ավագ դպրոցի ուսումնադաստիարակչական խնդիրների լուծման ամենակարևոր պայմանը որակյալ մանկավարժական կազմ ունենալն է, և միայն այն դպրոցներում են առավելագույն լավագույն արդյունքներ արձանագրվում, որոնցում հաջողվել է ստեղծել մասնագիտական ու մեթոդական լավագույն որակավորումներով օժտված ուսուցչական կոլեկտիվ, ինչն ակնհայտ էր վերլուծության արդյունքներում, և ցավով պետք է նշել, որ անարդյունավետ աշխատող որոշ առարկաների մասնագետների փոխարինումը որակյալ այլ մասնագետներով չի հաջողվում՝ նման մասնագետներ չունենալու պատճառով:

Դեռևս այդ դպրոցներում աշխատող ոչ բոլոր մանկավարժների մասնագիտական պատրաստականությունն է բավարարում ուսուցման արդի պայմաններին, և շրջանավարտների կողմից ուսուցիչների 25,6%-ը փոխելու առաջարկությունը վկայում է հենց այդ մասին:

4) Ավագ դպրոցի լիիրավ կայացման մասին դեռևս վաղ է խոսել, քանի դեռ ուսման որակի բարձրացման առումով այն առավելագույն աստիճանի չի հասել, քանի դեռ շրջանավարտների 68%-ը գիտելիքների պակասը լրացնում է կրկնուսուցման միջոցով, 18,1%-ի համար է ավագ դպրոցը լիովին բավարարում սովորողների սպասելիքները, 67,8%-ի համար մասամբ է բավարարում, իսկ 13,2%-ի համար ընդհանրապես չի բավարարում:

Կարծում են, շրջանավարտների դիտարկումները և մեր ուսումնափորություններն արտացոլում են ավագ դպրոցների առկա վիճակը, որը խստորեն մտահոգում է բոլորին:

5) Չնայած ավագ դպրոցներն ապահովված են համակարգչային կաբինետներով, սակայն դրանք արդյունավետ չեն օգտագործվում. այն ինչ առկա տեղեկատվական միջոցներն արդյունավետ ուսուցման կազմակերպման համար քիչ են, և անհրաժեշտ է յուրաքանչյուր կաբինետում ունենալ այդ միջոցները, ինչը հնարավորություն կտա ուսումնական ծրագրերի օգտագործմանը և անձնական ծրագրերի ներդրմանը:

6) Ավագ դպրոցներում ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացման խնդիրները եղել ու կլինեն նախարարության ուշադրության կենտրոնում, և մեր պահանջները կլինեն ավելի խիստ ու հետևողական՝ ինչպես դպրոցների ղեկավարների, այնպես էլ մանկավարժական կազմի նկատմամբ. պետք է հասնել նրան, որ յուրաքանչյուր ուսուցիչ աշխատի ուժերի նվիրումով, դասապրոցեսում ապահովվի գիտելիքների յուրացման բավարար մակարդակ, և վերջ դրվի կրկնուսուցման արատավոր երևույթին:

7) Ավագ դպրոցների կայացմանը ակնկալում ենք ծնողական հասարակության և այլ կառույցների օժանդակությունը, ծնողական կոմիտեների և աշակերտական ինքնավարության ակտիվ գործունեությունը՝ սովորողների գիտակցական կարգապահության և ուսման նկատմամբ ակտիվ մասնակցությունը ցուցաբերելու համար:

8) Գործող ավագ դպրոցներից Ասկերանի և Շուշիի Մուրազյանի անվան դպրոցները միասնական քննություններից և առարկայական օլիմպիադաներից ցուցաբերել են ամենացածր ցուցանիշները, ինչը պայմանավորված է նշված դպրոցների մանկավարժական համակազմի ոչ լիարժեք գործունեությամբ, ինչպես նաև հիմնական դպրոցից ավագ դպրոց անցման առավել քիչ թվով և մասամբ թույլ կրթական կարողություններ ունեցող շրջանավարտներով:

9) Ավագ դպրոցի կայացումն ու հետագա զարգացումը պետք է դիտարկել որպես ընդհանուր միջնակարգ կրթության գործընթացի բարձրագույն աստիճան, որի արդյունավետ գործընթացը հիմնվում է հիմնական կրթության հիմքի վրա, հետևաբար, առաջադեմ ավագ դպրոց կարող ենք ունենալ կայացած հիմնական դպրոցի առկայության պայմաններում, և հանրակրթության ոլորտում իրականացվող բարեփոխումները պետք է ապահովեն նրա բոլոր աստիճանների ներդաշնակ զարգացումը: Հարգելի պատգամավորներ, գործընկերներ

Եզրափակելով ավագ դպրոցների առկա վիճակի և զարգացման հեռանկարների մասին մեր նկատառումները՝ ցանկանում են հավաստիացնել, որ ավագ դպրոցների համակարգն ուսման որակի և արդյունավետության բարձրացման, շրջանավարտների խորացված գիտելիքների ձեռքբերման, մասնագիտական կողմնորոշման, ակտիվ կենսադիքի ձևավորման և հաջող կրթական աստիճաններում ուսումը շարունակելու լավագույն տարբերակն է, որի առաջընթացը պայմանավորված է մանկավարժական ողջ կազմի, ծնողական կոմիտեների և հասարակության լայն խավերի ամբիջական աջակցությամբ, տեղական ինքնակառավարման և պետական կառավարման մարմինների՝ պատշաճ վերահսկողություն և օժանդակություն ցուցաբերելու անհրաժեշտությամբ:

Համոզված են, որ ՀՀ և ԼՂՀ Ազգային ժողովների կրթության և գիտության ոլորտի մշտական հանձնաժողովների կողմից հրավիրված տույն լուսնները մեկ անգամ ևս բացահայտում են կրթության ոլորտի բարեփոխումների ընթացքի նկատմամբ մեր երկու հանրապետությունների իշխանությունների մտահոգությունները, և անկասկած, այսօրվա լուսններն ավագ դպրոցների կայացման գործում մեր ունեցած ձեռքբերումների կողքին ի հայտ կբերեն նաև առկա թերությունները ու հետագա անելիքները, ինչը հիմք կհանդիսանա առաջին հերթին ավագ դպրոցների տնօրինության և մանկավարժական կազմի աշխատելու ոճի բարելավմանը, նորի ըմբռնման, կատարողական կարգապահության ու պատասխանատվության բարձրացմանը, առավել բարձր ցուցանիշների ձեռքբերմանը, և այդ գործընթացում համապատասխան ուսումնամեթոդական և նյութատեխնիկական աջակցություն կցուցաբերվի միևնույն կրթական տարածքում գործող Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունների կողմից:

Այս առումով ցանկանում են շնորհակալական խոսք ուղղել ՀՀ կրթության և գիտության նախարար պարոն Արմեն Աշոտյանին՝ կրթության և գիտության ոլորտում մշտական աջակցություն ցուցաբերելու և ներկա այդ նախօրյակին ԼՂՀ հանրակրթական դպրոցներին 110 նոր համակարգիչներ նվիրելու համար:

ԼՈՒՄՆԵՐ

ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ. 12-ԱՄՅԱ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՒՆԻ ՇԵՏԱՊԱՐԳ ՃԱՆԱՊԱՐԶ



ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը նշեց կոնկրետ ձեռքբերումներն ու հին խնդիրները: Այն խնդիրները, որոնց մասին խոսեց ԼՂՀ ԿԳ նախարարը, հատուկ են նաև Հայաստանին: Երկու մեծ խնդիր առայսօր իրենց լուծումը չեն ստացել: 12-ամյա կրթության անցումը և առանձնացված ավագ դպրոցների համակարգի ստեղծումը: Հասարակության մի սովոր գանգվածի մոտ այդ բարեփոխումը որպես պարտադիր և երեխաների կրթական համակարգի համար նպաստավոր բարեփոխում լինելու հանգամանք չի ընկալվում: «Մենք առայսօր ստիպված ենք պայքարել, կոտրել դիմադրություն, համոզել, որ ավագ դպրոցները բարեփոխումներին մեջ անշրջելի կրթական համագրված են», - ասաց նա: Առաջին պիլոտային ավագ դպրոցները Հայաստանում սկսեցին գործել 2008 թվականից, 2009-ից անցան լայնածավալ ավագ դպրոցների ցանցի ստեղծման: Այս բարեփոխումները Հայաստանում սկսվեցին տնտեսական համեմատաբար վերելքի պայմաններում: Այսօր Հայաստանում գործում է 107 առանձնացված ավագ դպրոց: 2009-ից սկսված տնտեսական դժվարությունների պատճառով պետությունը չի կարողանում համարժեք ներդրումներ կատարել ավագ դպրոցում՝ վերազինման և արդիականացման համար և ստեղծել այն արժանապատիվ, արդիական կրթական միջավայր, որն ինքնին ավագ դպրոցների գովազդը կլինեք, ինչը նույնպես կոտրեց վստահությունը բարեփոխման նկատմամբ:

Հաջորդ խնդիրը, Ա. Աշոտյանի խոսքով, ուսումնական ծրագրերի անկատարությունն է: Այստեղ, սակայն, կա մի դրական հանգամանք. ավագ կրթական աստիճանում թույլատրվում է, որ դպրոցներն իրենց կրթական բովանդակության 70%-ը որոշեն ինքնուրույն: Պետական պարտադիր չափորոշիչը ընդամենը 30% է պարտադրվում ավագ դպրոցներին կամ ավագ դասարաններին: «Հատուկ են դպրոցներից բացի որևէ լուրջ միտում, որ դրանից ոգևորվել են, ստեղծագործական մոտեցում են սկսել ցուցաբերել, ես չեմ կարող արձանագրել», - ասաց Ա. Աշոտյանը: Ընդհակառակը, այդ ազատականացումը բերեց նրան, որ դպրոցները չեն կարողանում օգտվել առաջին հայացքից օրենքում ամրագրված այն առաջադեմ մտքից, որ դպրոցը պետք է ինքնուրույն բանաձևի իր բովանդակությունը, ուսուցիչը պետք է դասարանում անհատական պլանով: «Մեր մանկավարժական հանրույթը պատրաստ չէր այդ ազատականությունը», - ասաց նախարարը: Տապալված ազատականության մյուս դրսևորումը վերաբերում է ուսումնական պլանի այն կետին, որն ասում է, թե 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում աշակերտն ինքը կարող է ընտրել իր դասերի կետը: Սակայն իրականում դպրոցի տնօրենը կամ ինքն է պարտադրում, թե ինչպես բաժանեն այդ դասաժամերը՝ մի ինչ-որ ուսուցչի ծանրաբեռնվածություն և ապահովելու համար, կամ էլ թույլ է տալիս, որ աշակերտը չգա դասի, գնա կրկնուսույցների մոտ, և հասարակության մեջ այն տպավորությունն է ստեղծվում, թե ավելորդ է վերջին տարին: Այս առնչությամբ Ա. Աշոտյանն անդրադարձավ կրկնուսուցման երևույթին: Ավագ դպրոցների ստեղծման գաղափարի հիմքում դրված էր նաև կրկնուսույցներից ազատվելու խնդիրը: Իսկ այսօր նա ասում է. «Ես հեռու եմ այն մտքից, որ ավագ դպրոցի ստեղծման գա-

ղափարում տեսնենք կրկնուսույցների դեմ պայքար: Դա պետք է ինքնին ստացվի»: Եվ վկայակոչեց միջազգային փորձը: 40 երկրների փորձի ուսումնասիրումը բացահայտել է, որ կրկնուսույցների ինստիտուտը զարգացած է ճապոնիայում, որի կրթական համակարգը համարվում է լավագույններից մեկն աշխարհում: Նմանապես զարգացած է Ֆրանսիայում, ԱՄՆ-ում և շատ այլ երկրներում, որտեղ մասն համակարգի հետ առերեսվում են պետական դպրոցները, բայց թշնամություն չկա: Ավելին, Հայաստանում նույնիսկ քննարկվում է կրկնուսույցներին օրինական դաշտ բերելու հարցը: Նախարարի հաշվարկով տարեկան մոտավորապես 25-30 մլն դոլարի շրջանառություն է լինում Հայաստանում՝ կրկնուսույցների շուկայում: Բերել օրինական դաշտ՝ նշանակում է լիցենզավորել, արգելել կոնկրետ ժամերի պարապել, չափորոշիչներ դնել, թե ով կարող է լինել կրկնուսույց և այլն: «Եթե մի բան չենք կարողանում վերացնել, այն պետք է կանոնակարգել և հնարավորինս վերահսկել», - ասաց նա՝ դա որպես առաջարկություններ կայացնելով քննարկման համար՝ քաջ գիտակցելով, որ կարող են քննադատել, բայց այս պահին ուրիշ տարբերակ վիճակն այդ ճակատում բարելավելու չի տեսնում: Հաջորդ խնդիրը ՀՀ ԿԳ նախարարը նշեց կադրերի հարցը: Ավագ դպրոցում ենթադրվում է ամենատարակյալ մասնագետներն ունենալ: Բայց միշտ չէ, որ դա հաջողվում է: Իհարկե, կան բավական կայացած ավագ դպրոցներ, որոնք կայացել են՝ շնորհիվ դեկավարության և մանկավարժական կադրերի: Եվ բերեց երևանի հ. 118 ավագ դպրոցի օրինակը, որն իր բնագիտական բաղադրությամբ բավական գրավիչ է, շատ երեխաներ են այնտեղ հաճախում: Ընդհանրապես, ավագ դպրոցի երեխաների առաջադիմությունը դեռևս գիշում է մասնագիտացված վարժարանների և դպրոցների՝ ֆիզմաթ, «Այբ» դպրոցներին, «Քվանտ» վարժարանին և այլն, բայց ավելի բարձր է, քան միջնակարգ դպրոցի ավագ կրթական աստիճանինը: Եվ շատ ավելի բարձր, քան ուսումնարանների ու քոլեջների առաջադիմությունն է: Հայաստանում ավագ դպրոցների կայացման հաջորդ լուրջ խոչընդոտն այն է, որ այդ տարիքային խմբի՝ 16-18 տարեկանների համար փաստացի «պայքարում» են երեք կարգի ուսումնական հաստատություններ՝ քոլեջները, ուսումնարանները և ավագ դպրոցները: Այսօր ծնողը հնարավորություն ունի իր երեխային տանել ավագ դպրոց, ուսումնարան կամ քոլեջ: Շատերը նախընտրում են քոլեջները և ուսումնարանները ոչ թե նրա համար, որ բարձր են գնահատում մասնագիտական կրթության հնարավորությունները, այլ՝ որ երեխան ավելի հեշտ չգնա դասի և ավելի հեշտ գնա կրկնուսույցների մոտ: Ա. Աշոտյանը տեղեկացրեց, որ դրա դեմ առնելու համար օրենսդրական նախաձեռնություն են ներկայացրել Ազգային ժողով: Դրական եզրակացության դեպքում հուսով է ունենալ այդ դաշտն ավելի պարզեցված դարձնելու իրավական լուծումները: Նա թվարկեց նաև ավագ դպրոցների մի քանի ձեռքբերումներ: Լավագույն կադրերն, այնուամենայնիվ, ավելի շատ ավագ դպրոցում են: Հայաստանում կա տարակարգ ստացած շուրջ 200 ուսուցիչ, որոնց կեսն աշխատում է ավագ դպրոցներում: Հաջորդ ձեռքբերումն այն է, որ ավագ դպրոցներում, այնուամենայնիվ, ստանում են ավելի խորացված նախաձեռնագիտական կրթություն, և դրան նպաստել է այն հանգամանքը, որ դպրոցները սերտ կապի մեջ են մտել բուհերի հետ, վերջիններս շեֆություն են վերցրել որոշ ավագ դպրոցների նկատմամբ, մի շարք առարկաներ դասավանդում են ճանաչված դասախոսներ, և համապատասխանաբար հոսքը դեպի տվյալ բուհեր՝ առկա է: Համակարգիչներով հագեցվածության աստիճանն ավագ դպրոցներում այսօր երկու անգամ բարձր է, քան հանրապետության միջինն է: Այս չորս տարիներին իրականացվել է ավագ դպրոցներին լաբորատորիաներով,

համակարգչային տեխնիկայով, գրադարանային ֆոնդով, կահույքով վերազինելու հատուկ ծրագիր: Համաշխարհային բանկի հետ բանակցությունների արդյունքում ավագ դպրոցների վերակառուցման-վերազինման համար շուրջ 17 մլն դոլարի հատկացում է եղել, որը գնալու է ամեն մարզում մեկական ավագ դպրոցի վերազինման ու վերակառուցմանը. յուրաքանչյուր մարզում կլինի գերժամանակակից, հանրակացարանային պայմաններով արդիական դպրոց՝ գյուղի լավ սովորող երեխաների համար: 2-3 դպրոց էլ կավելացվի երևանում: Ա. Աշոտյանը տեղեկացրեց նաև, որ նախատեսվում է հաջորդ տարվանից վերանայել հանրակրթության ուսումնական պլանը և առարկայական ծրագրերը: Սոտակա չորս տարիներին կփորձեն նոր կրթական բովանդակություն տալ դպրոցներին: Խնդիրը կոնկրետ վերաբերում է տեխնիկական առարկաներին: Համեմատելով խորհրդային դպրոցի և այսօրվա ուսումնական ծրագրերը՝ պարզել են, որ ճշգրիտ գիտությունների և բնագիտական առարկաների ժամային ծավալները 35%-ով նվազել են: Այսօր ավելի շատ անցնում են հումանիտար առարկաներ: Սա, իհարկե, իր բացատրությունն ունի: Խորհրդային Միության գաղափարաբանական կադրերների ճեղքումից հետո դպրոց մտցվեցին հումանիտար, հասարակագիտական տարբեր առարկաներ՝ ազատամիտ, երկրի պատմությունից տեղյակ, բազմալեզու քաղաքացիներ դաստիարակելու համար: «Արդյունքում ստացվեց, որ ժառանգել ենք մի շենք, որը 20 տարվա ընթացքում առանց գեներալների վերակառուցում ենք: Ամեն մի նախարար մի բան է փոխել պլաններում՝ չունենալով ընդհանուր հատկապիտեղ, թե իրականում ինչպիսի կրթական համակարգի հետ պետք է գործ ունենանք: Հիմա եթե ասենք՝ որ առարկաներն են ավելորդ, չենք կարող: Բայց ստացվել է այնպես, որ երեխաները հնարավորություն չունեն ստանալ կրթական այնպիսի բովանդակություն, որը տեղավորվի ինչ-որ մի աշխարհայացքային կոնցեպտում»: Եվ որպեսզի ստիպված չլինեն քանդել ու գրոյից սկսել, որոշել են զուգահեռ վերակառուցել ուսումնական պլանները 1-ինից մինչև 12-րդ դասարան: Ըստ նախարարի՝ այս գործընթացը կտևի մոտ հինգ տարի, որովհետև բացի այս փոփոխություններից, զուգահեռ կլինեն ուսուցիչների վերապատրաստումներ, մեթոդաբանության փոփոխություն և այլն: «Այսինքն՝ էլի բարեփոխումներ՝ ուզեք թե չուզեք: Կրթական բարեփոխումները երբեք չեն դադարելու», - ասաց նա: Ա. Աշոտյանն անդրադարձավ 12-ամյա պարտադիր կրթությանը, որի օրինագիծը պատրաստվում են ուղարկել Ազգային ժողով: Սա անհրաժեշտ է համարում մի քանի պատճառներով: Հայաստանում ամեն տարի մոտ 5000 երեխա 9-րդն ավարտելուց հետո ոչ մի տեղ չի սովորում: Սրանք այն երեխաներն են, որոնք փաստացի դատապարտվում են աղքատության, որովհետև կրթական մասն ցածր շենով նրանց լավ ապագա ունենալու հավանականությունը քիչ է: Նման կրթական ցենզով երեխաների առկայությունը նշանակում է աղքատության որոշակի մակարդակի պահպանում, որովհետև կրթության այդպիսի ցենզի պարագայում աշխատաշուկայում բարձր վարձատրվող աշխատանք նրանք չեն կարող ունենալ: Բացի դրանից, այդ երեխաներն ունենում են սոցիալականացման խնդիր՝ ընկնում են փողոց, ինչը հակադաստիարակչական է: Եվ վերջապես, 5000 երեխա բերելով ուսումնական հաստատություն, ժամային ծանրաբեռնվածություն կապահովեն ուսուցիչների համար և կխուսափեն կրճատումներից, որոնք, ցավոք, պարբերաբար դառնում են անխուսափելի: Այս ամենը հաշվի առնելով՝ որոշել են Հայաստանում միջնակարգ կրթությունը դարձնել 12-ամյա: Թե ինչ գործիքակազմով դա կարվի՝ վերջնականապես որոշված չէ: Բայց բյուջեով արդեն բավական հատկացումներով ավելացվել են ուսումնարաններում և քոլեջներում պետ-

պատվերի տեղերը: Միակ լուրջ խնդիրը, որ կա այստեղ, այն է, թե ինչպես են վարվելու այն դեպքում, երբ բնակավայրում չկա մասնագիտական կրթության հաստատություն: Եթե Ազգային ժողովն աշնանը ընդունի օրենքը, այն ուժի մեջ կմտնի 2015թ. հունվարից: «12-ամյա կրթությունը Հայաստանում չունի հետադարձ ճանապարհ, 12-ամյա կրթությունը միջազգային կրթական ստանդարտ է: Կարող եք ասել՝ Ռուսաստանում, Բելառուսում, Ղազախստանում 11-ամյա է: Բայց ես էլ 20 անգամ ավելի երկրներ կարող եմ բերել, որոնք 12-ամյա են. եվրոպական բոլոր երկրները, ԱՄՆ-ն և այլն: Բոլորին խնդրում եմ, Հայաստանում էլ են ասում՝ մոռացեք այս թեման, ավելի լավ է մեզ օգնեք, որ 12-ամյա կրթությունը դառնա ավելի լավը, բովանդակությունը, դասագրքերը վերանայենք, ուսուցիչներին վերապատրաստենք, բայց այդ թեման անհմաստ է քննարկել, որովհետև գոնե Հայաստանում հետադարձ ճանապարհ չկա: Գտնվելով կրթական միևնույն տարածքում, Արցախը մի կողմից լավ վիճակում է, որովհետև Հայաստանն իր վրա շատ բան է փորձարկում է, և հետո մատուցում, բայց մյուս կողմից էլ՝ նաև Հայաստանում իրականացվող բարեփոխումների արդյունքում առաջացած խնդիրները, խոչընդոտները և բացասական հետևանքները նույնպես ձեռն են: Ուստի, խնդրում եմ մեզ հետ միասին շարունակեք հյուսել և՛ հաջողությունները, և՛ դժվարությունները», - այսպես եզրափակեց իր ելույթը ՀՀ ԿԳ նախարարը: Ա. Աշոտյանը նաև պատասխանեց ներկայացրած հարցերին: Դրանք հիմնականում վերաբերում էին ավագ դպրոց քննությանը ընդունվելուն, 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակում աշակերտներին պարտադրվող ժամային ծանրաբեռնվածությանը, դրսեկության կարգով ավարտողների բուհի ընդունելությանը, կրկնուսույցների նկատմամբ տարվող քաղաքականությանը, ավագ դպրոցի արդյունավետության գնահատմանը և այլն: Արդյունավետության գնահատման մասին նախարարը հետևյալն ասաց. «Չշտապես գնահատականների մեջ: Երբ մեզ հարցնում են՝ կայացել է ավագ դպրոցները, մենք ասում ենք՝ վաղ է այդ մասին խոսելը: 12-ամյա կրթության առաջին շրջանավարտը մեր մեջ կհայտնվի 2018 թվականին՝ 4 տարի հետո: Մինչև չտեսնենք 12-ամյա կրթության պտուղը, ինչպե՞ս ենք ասում՝ լավն է կամ լավը չէ: Կրթության համակարգի առանձնահատկությունն էլ հենց դա է՝ հետո ես իմանում՝ ճի՞շտ ես արել դա, թե ոչ»: Ավագ դպրոց ընդունվելու համար քննություններ պե՞տք են, թե՛ ոչ. այս հարցադրումը շատ հնչեց լուսններին: ՀՀ կրթության թիվ մեկ պատասխանատուն համաձայն է, որ տեսականորեն և իրենալապես իհարկե, անհրաժեշտ է որոշակի ակադեմիական չեմ՝ ավագ դպրոցի հավաքագրումն անելու համար: Բայց այդ դեպքում ավագ դպրոցի համակարգի 40%-ը չի լինի: Սա նշանակում է, որ անհրաժեշտ կլինեն լրացուցիչ գումարներ՝ դպրոցները պահելու համար կամ էլ հարկ կլինի կրճատումներ անել: «Այսինքն՝ հենց ուզում ես մի հարթության մեջ հարցը լուծել, օրինակ, բացառապես ակադեմիական հարթության մեջ ու չես տեսնում ֆինանսական կամ սոցիալ-քաղաքական հետևանքները, առաջանում է փակուղի: Ուստի այդ երեք հարթություններով ուզում ենք ինչ-որ կորդինատ գտնել՝ նվազագույնի հասցնելու վնասները, բայց օգուտներն էլ առավելագույն չեն», - ասաց նա՝ ավելացնելով, որ միևնույն ժամանակ, ցանկացած դպրոցի տնօրեն կարող է ներքին մրցույթ հայտարարել, եթե վստահ է, որ բավարար դասարաններ է հավաքագրելու: Դա գալիս է դպրոցի համբավից: Օրինակ, «Այբ», «Քվանտ» վարժարանները, ֆիզմաթ դպրոցն իրենց աշակերտներին հավաքագրում են մրցույթով: Եթե դպրոցը համբավ ունի, ընտրության հնարավորություն էլ ունի:

ԼՍՈՒՄՆԵՐ

ԵՆՈՒՅԹՆԵՐ, ԿԱՐԾԻՔՆԵՐ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լսումներին ելույթ ունեցան ավագ դպրոցների տնօրեններ, որոնք յուրատեսակ հաշվետվություններ կայացրին իրենց ձեռքբերումների մասին, նշեցին խնդիրները, հանդես եկան առաջարկություններով: Ներկայացնենք որոշ նկատառումներ:



Լյուկա Գեվորգյան, Ստեփանավերտի հ. 8 ավագ դպրոցի տնօրեն:

Ավագ դպրոցի զարգացման համար առաջարկում են՝
- ավագ դպրոցի ընդունելությունը կազմակերպելի գիտելիքների ստուգման որևէ եղանակով՝ լինի ըննություն, ստուգողական գրավոր, ինչու չէ, հաշվի առնվի նաև հիմնական դպրոցի ատեստատի գնահատականի միջին բալլը:
- ավագ դպրոցի անհրաժեշտ փաստաթղթերի ցանկում ներառել հիմնական դպրոցի տրված բնութագիրը և ավագ դպրոցում սովորելու համար երաշխավորություն:
- որպես նախապայման համարել ծնողի հետ այսպիսի ակտիվ կոնտակտի կունկրելը՝ բարձրացնելով ծնողի դերը երեխայի կրթության ու դաստիարակության գործում:
- ավելի խստացնել բուհերի ընդունելությունը՝ հաշվի առնելով ատեստատի միջին բալլը՝ դրանով իսկ ստիպելով շրջանավարտին լուրջ վերաբերվել այն առարկաներին, որոնք իր համար մրցակցային չեն, ինչը կնպաստի բազմակողմանի զարգացած անհատի ձևավորմանը:
- դպրոց-ՊՈԱԿ-ներին իրավունք վերապահել հարցը քննարկելով մասնավորապես խորհրդի նիստերում և համաձայնեցնելով ԿԳ նախարարության հետ՝ դպրոցի լավագույն ուսուցիչների համար սահմանել հավելված կամ աշխատավարձի վճարման այնպիսի սանդղակ, որը հնարավորություն կտա տնօրենությանը՝ խրախուսել լավ մանկավարժներին:
- ավագ դպրոցի բոլոր դասարաններում անցնել բնագիտական առարկաներ՝ թեկուզ 1 ժամ ծանրաբեռնվածությամբ:
- դպրոցում ունենալ հոգեբանի հաստիք կամ լուծպեդի հաստիքը փոխարինել հոգեբանի հաստիքով:
- լրիվությամբ անցնել ուսուցման կարգից համակարգի, ունենալ կահավորված և ուսումնանյութական բազայով հագեցած կաբինետներ:
- բեռնաթափել ծրագրերն ու դասագրքերը, շտեմարանները համապատասխանեցնել դասագրքերին:
- ավագ դպրոցների միջին խտությունը սահմանել առավելագույնը 25 աշակերտ՝ 30-ի փոխարեն: Իսկ հոսքային ուսուցման առարկաների դասերին՝ 10-12 սովորող:
Ալիա Գրիգորյան, Ստեփանավերտի հ. 11 ավագ դպրոցի տնօրեն:
- Ցանկացած բարեփոխում պահանջում է ժամանակ և միջոցներ: Այսօր փոխվել են դպրոցի և սովորողների ներկայացվող պահանջները, զուգահեռաբար աճել է դպրո-



Գալանդին Կարամյան, Գալանդին Կարամյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ մասնագիտացված դպրոցի Ստեփանավերտի մասնաճյուղը գրեթե նույն խնդիրներն է իրականացնում, ինչ ավագ դպրոցը՝ իր որոշակի առանձնահատկություններով: Ընդունելությունը կատարվում է 7-րդ դասարանից:

ցականներին տրվելու գիտելիքների ծավալը: Ավագ դպրոցի, կազմակերպվող ըննությունների, քննական առաջադրանքների արդյունավետության մասին տարակարծություններ են հնչում են հանրության շրջանում: Ավագ դպրոցն այսօր դեռ ինքնահաստատման ու կայացման փուլում է: Հաջողությունները քիչ չեն, բայց ունենք նաև դժվարություններ: Այս 5 տարիների փորձից ելնելով՝ առաջարկում ենք:
- խստացնել 9-րդ դասարանների ավարտական ըննությունների կարգը:
- հիմնական դպրոցում աշխատանքներ տանել մասնագիտական կողմորոշման և հոսքերի ընտրության ուղղությամբ:
- վերանայել ավագ դպրոցի ընդունելության կարգը, սահմանել ինչ-որ շեմ:
- ստեղծել թեստերի ժողովածու, քանի որ ոչ բոլոր ուսուցիչներն են տիրապետում թեստաբանության մեթոդոլոգիային:
Դպրոցի աշակերտների կողմից վստահության կարիք ունենք: Հասկանալի է, որ այդ վստահությունը պետք է վաստակենք՝ ապահովելով դասավանդման և ընդհանրապես, երեխաների հետ դասավանդման աշխատանքի բարձր մակարդակ:
Անելիքներն այս ուղղությամբ դեռ շատ են:

ԵՊՀ-ին առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ մասնագիտացված դպրոցի Ստեփանավերտի մասնաճյուղը գրեթե նույն խնդիրներն է իրականացնում, ինչ ավագ դպրոցը՝ իր որոշակի առանձնահատկություններով: Ընդունելությունը կատարվում է 7-րդ դասարանից:



Դպրոցի տնօրեն Սուսաննա Ներսիսյանի նկատառումները:

Լրագրողների հետ հանդիպման ժամանակ Ա. Աշոտյանն ասել է. «Այսօր ասել, թե ավագ դպրոցի ծրագիրը ծախողված է, վաղաժամ է»: Իմ կարծիքով՝ ճիշտ է նաև հակառակ պնդումը՝ ասել, որ ավագ դպրոցն Արցախում, ինչու չէ՝ նաև Հայաստանում կայացել է, վաղաժամ է, ավելի ճիշտ կլինի ասել, որ այն ձևավորման փուլում է:
- Ընդհանուր միջնակարգ կրթության իրավունք պետք է ունենա հիմնական դպրոցն ավարտած յուրաքանչյուր ոք, իսկ մասնագիտաց-

ված հոսքային (բացառությամբ արհեստագործականի) դասարաններում միջնակարգ կրթություն պետք է ստանան նրանք, ովքեր որոշակի ընդունակություններ, հմտություններ ու հակումներ ունենալու հետ մեկտեղ ուսումնառության տարիներին ընդգծված սեր են դրսևորել ուսումնական աշխատանքի նկատմամբ և ոչ միայն ունեն ձգտում ուսումը բուհերում շարունակելու, այլև անհրաժեշտ ու բավարար նախադրյալներ, ասել է թե՛ գործնական կարողություններ, հմտություններ, անձնային հատկանիշներ՝ դրան հասնելու համար:

- Հոսքային դասարանների համալրման մասին: Գիշտ համալրման հարցում դժվարանում են հիմնական դպրոցի շրջանավարտների ոչ հատակ կողմնորոշման պատճառով: Այդ բացը վերացնելու համար կառավարիչի մշակել հիմնական դպրոցի շրջանավարտներին ավագ դպրոցի հոսքային դասարաններում ընդգրկելու գործունեության չափանիշներ կամ կարգ:

- Ուսուցչի դերի մասին: Ավագ դպրոցի կայացման ու զարգացման գործում ակնհայտորեն իր անփոխարինելի, էական դերն ունի ուսուցիչը: Ներկա փուլում առավել հրատապ է նոր ձևավորվող հոսքային ուսուցման դասարաններում դասավանդող մասնագետի ընտրության հարցը: Լուծումը չգտնելով՝ դպրոցների ղեկավարները հաճախ ստիպված են լինում աշխատանքի ընդունել մեղմ ասած, ոչ կայացած ուսուցիչների: Արհեստավարժ, իրենց մասնագիտությամբ լիարժեք տիրապետող ուսուցիչների պակասը պարարտ հող է ստեղծում թույլ կարողություններով ուսուցիչների համար, որոնք աշխատանքի են տեղավորվում ավագ դպրոցում: Նման պարագայում լուրջ արդյունքներ սպասել անհնարին է:

- Ավագ դպրոցի կայացմանը խոչընդոտող, չլուծված հիմնախնդիրներից մեկի՝ աշակերտների, ինչու չէ, նաև ծնողների՝ ավագ դպրոցի նկատմամբ ունեցած վերաբերմունքի մասին: Սա պետք է արմատապես փոխվի: Սովորողների համար ավագ դպրոցի բարձր արդյունավետության պայման պիտի դառնա գիտելիքների առաջնայնությունը գնահատականի նկատմամբ: Նրանք պետք է հասկանան, որ եթե ձեռք չեն բերել գիտելիքներ ու հմտություններ, ապա ավագ դպրոցում անելիքներ չունեն: Աշխատանքը պետք է կազմակերպվի այնպես, որ բացառվի ժամանակի աննպատակ վատնումը դպրոցում, իսկ գնահատականը չպետք է կրի ձևական բնույթ, այլ պետք է նպաստի աշակերտի ուսումնառության արդյունավետության բարձրացմանը:

Նպատակահարմար ենք գտնում ներկայացնել նաև դպրոցի վերջին տարիների նկատմաները:
- Մասնաճյուղի տնօրենի՝ պաշտոնն ստանձնելուց անցել է ավելի քան երեք տարի: Սկզբնական փուլում հարցահարելով շատ դժվարություններ՝ մեզ հաջողվել է մասնավորապես կուլեկտիվին համախմբել մի գաղափարի շուրջ, այն է՝ ամեն ինչ անել դպրոցի վարկանիշը բարձրացնելու համար: Դրան կարելի է հասնել միայն դպրոցում կարգուկարգին գերակայությամբ, աշակերտների հետ տարվող աշխատանքների դրվածքի բարելավմամբ, և որ ամենից կարևորն է՝ ուսման որակի բարձրացման ճանապարհով: Եվ այսօր այս բարձր ամբողջից գոհունակությամբ ուզում են գեկուցել, որ մասնաճյուղի մանկավարժական կուլեկտիվի հետ միասին մասնաճյուղի ղեկավարության Լ.Գ.Կ.Կ.Կ. անձնակազմը ուղարկության շնորհիվ կարճ ժամանակահատվածում կարողացել ենք զգալի տեղաշարժ արձանագրել վերը նշված բոլոր խնդիրները կյանքի կոչելու ուղ-

ղությամբ: Ասվածը հաստատելու համար վերջին տարիների վիճակագրությունից բերեն մի քանի տվյալներ:

Նախորդ տարիների համեմատությամբ 2 անգամ աճել է դպրոց ընդունվել ցանկացողների թիվը, չնայած 7-րդ դասարանից ընդունվելու թիվը կատարվում է քննությունների միջոցով: Եթե 2011թ. դպրոց է դիմել 51 աշակերտ, ապա 2013-ին դիմումների թիվն աճել է 110-ից: Ինչպես և մյուս միջնակարգերը, ֆիզմաթը տվել է 12-ամյա դպրոցի երկու թողարկում: 2011-2012 և 2012-2013 ուսումնական տարիներին շրջանավարտների պետական ավարտական և միասնական քննությունների ցույց տված արդյունքները գոհացուցիչ են: Այսպես, 2009-2010 ուստարում 11-ամյա դպրոցի և ոչ մի շրջանավարտ միասնական քննություններից չի հավաքել 18 և բարձր միավոր, 2011-2012 ուստարում՝ 21, իսկ նախորդ ուստարում՝ 45 հոգի տարբեր առարկաներից ստացել է 18-20 միավոր: Ընդ որում, մաթեմատիկայի միասնական քննությունում հանձնած 27 հոգուց՝ 64 հոգի, ֆիզիկայից՝ 11-ից 7-ը: Երկու թողարկման արդյունքում ֆիզմաթը թողարկել է 95 շրջանավարտ, որոնցից 56-ը կամ 59%-ն ընդունվել է ՀՀ և ԼՂՀ բուհերի անվճար ուսուցման համակարգ, իսկ մնացած 39-ը՝ վճարովի համակարգ: Ընդ որում, անվճարում ընդունված 56-ից 34-ը (61%-ը) սովորում է ՀՀ բուհերում ԼՂՀ-ին հատկացված պետպատվերի տեղերում: Ուրախալի է նաև այն հանգամանքը, որ մեր դպրոցի սաները լուրջ հաջողությունների են հասել դպրոցականների առարկայական օլիմպիադաներում: Եթե 2010-2011 ուստարում 10 հոգի 6 առարկայից քաղաքային փուլում արժանացել է 2-րդ և 3-րդ կարգի դիպլոմների և գովասանագրերի, բայց հանրապետական փուլում հաջողություններ չեն ունեցել, ապա հաջորդ երկու տարիներին քաղաքային փուլում համապատասխանաբար 15 և 20 հոգի արժանացել են դիպլոմների և գովասանագրերի, որոնք բոլորն էլ լավ են հանդես եկել հանրապետական և հայաստանյան երգչախմբի փուլերում: Ընթացիկ տարում հանրապետական փուլին մասնակցելու իրավունք է նվաճել 26 աշակերտ, որը կազմում է ողջ աշակերտության 10%-ը: Մեր երեխաներն իրենց մասնակցությունն են բերում նաև ՌԴ-ում և Երևանում կազմակերպվող հեռահար օլիմպիադաներին: Այս տարի 2 հոգի՝ 10-րդի Դիմիթ Հարությունյանը և 12-րդի Սամվել Միրզախանյանը, մասնակցել են և իրավեր ստացել Մոսկվայից մարտի 25-30-ն անցկացվող սեմինար-պարապմունքներին: Ներկա դրությամբ դպրոցի ղեկավարության հետ՝ պարոն Նավասարդյանի գլխավորությամբ աշխատում ենք ֆիզիկամաթեմատիկական մասնագիտությունների ծրագրերի վրա:

Ուզում են շնորհակալություն հայտնել Ա. Արդյանին՝ մեզ համար հույս կարևորություն ունեցող 2 համակարգչային դասարաններին 21 համակարգիչ տրամադրելու համար (անցած տարի և նախանցյալ օրը): Եվ օգտագործելով պատենտի առիթը՝ պարոն Աշոտյանին ունեն երկու խնդրանք. առաջին՝ հոսքը դեպի ֆիզմաթ դպրոց խիստ ներառված է, բայց դասարանների քանակը քիչ է. ունենք 11 դասարան-կուպլետ, կցանկանայինք հաջորդ ուստարում ցանցը հաստատելու մասին: Երկրորդը՝ քանակը քիչ է, ունենք 11 դասարան-կուպլետ, կցանկանայինք հաջորդ ուստարում ցանցը հաստատելու մասին: Երկրորդը՝ քանակը քիչ է, ունենք 11 դասարան-կուպլետ, կցանկանայինք հաջորդ ուստարում ցանցը հաստատելու մասին: Երկրորդը՝ քանակը քիչ է, ունենք 11 դասարան-կուպլետ, կցանկանայինք հաջորդ ուստարում ցանցը հաստատելու մասին:

2-րդ՝ 15 տարվա վաղեմության շեմը ոչ մի անգամ հիմնարար նորոգման չի ենթարկվել, մինչև այսօր երեխաները պարապում են բետոնի վրա, զոնե հատակը փոխվել: Հավաստիացնում ենք, որ ավագ դպրոցներից հետ չենք մնա:



Լեոնարդ ՏՈՆՅԱՆ, Ճարտարի հ.1 ավագ դպրոցի տնօրեն

Աշխարհն այսօր վերափոխումների փուլում է, և դրանցից ամենամեծը չի կարող մնալ կրթության համակարգը: Նրա հիմնական վերափոխումը եռամյա ավագ դպրոցի անցումն է: Ինչ վերաբերում է այս քանի տարվա կատարած աշխատանքներին, կարող են նշել, որ իրոք, կան զգալի հաջողություններ այս ասպարեզում: Կոնկրետ եթե մի նախադասությամբ ասելու լինեն, մեր դպրոցն ունի որոշակի հաջողություններ բոլոր բնագավառներում: Բայց այստեղ խոսքը ոչ միայն հաջողությունների մասին պետք է լինի, այլև պետք է հնչեցնենք այն հարցերը, որոնք անհրաժեշտ են ոլորտում բարեփոխումներ կատարելու համար: Կան, իհարկե, հիմնախնդիրներ: Դրանք մեկ օրվա, մեկ տարվա լուծման հարցեր չեն: Կան այնպիսիք, որոնք լուծման համար կարևոր են պահանջվում: Բայց կան էլ՝ որոնց պետք է արագ լուծում տալ: Առաջին հերթին խոսքը վերաբերում է ուսումնական պլանի ճկունությանը: Կոնկրետ որպես գյուղական դպրոց, ուսումնական պլանը պետք է լինի այնքան ճկուն, որպեսզի փոքր քանակությամբ աշակերտով կարողանանք ստեղծել հոսքեր, վերածել ենթահոսքերի: Այստեղ առանձնապես պետք է նշել բնագիտամաթեմատիկական հոսքերը, որտեղ աշակերտների քանակը համեմատաբար քիչ է: Մյուս գլխավոր խնդիրը մասնագետների հարցն է: Իրոք, կան մեծ պորբեմներ: Մենք անցում ենք ավագ դպրոցին, բայց՝ հին մասնագետներով: Իհարկե, չեն կարող ասել, թե չունենք լավագույն մասնագետներ, ունենք, և բոլորը կենտրոնացված են բարեփոխումների իրականացման վրա. այստեղ և առաջանում են որոշակի խնդիրներ, երբ լավագույն մասնագետներին տեղափոխում ենք ավագ դպրոց, թուլանում է հիմնական դպրոցը: Իսկ հիմնական դպրոցն այն հիմքն է, որը պետք է ծախսի ավագ դպրոցին: Այս և մեծ խնդիր է, առանձնապես՝ գյուղական դպրոցում, որտեղ կա մասնագետների կարիք: Ես կառաջարկեի մի քիչ խստացնել ուսուցիչների աշխատանքի ընդունման կարգը. խոսքն այն հարցաշարերի մասին է, որոնցով անցկացվում է մրցույթը: Մյուս կողմից էլ հարցը վերաբերում է պարզ ընթացակարգով ատեստավորմանը:

Մի քանի խոսք ծրագրերի և դասագրքերի մասին: Կա անհամապատասխանություն դրանց միջև: Ծրագրերը պետք է կազմվել չափորոշիչներին համապատասխան, դասագրքերն էլ՝ ծրագրերին: Չկա միջառարկայական համաձայնություն, առանձնապես՝ բնագիտամաթեմատիկական ցիկլի առարկաների, որոնք պարտադիր պետք է կազմվեն ըստ պարզության և հաջորդականության: Քիմիայից անցնում են «Էլեկտրոլիզ» թեման, բայց ֆիզիկայից այն դեռ չեն ուսումնասիրել: Սա լուրջ դժվարությունների առաջ է կանգնեցնում: Կան այսպիսի շատ դեպքեր, էլ չենք խոսում սխալների

ԼՍՈՒՄՆԵՐ

մասին: Այսօրվա դրությամբ չունենք լավագույն դասագիրք: Դասագիրքը աշակերտների համար է, բայց արդյո՞ք այսօրվա դասագրքերով աշակերտները կարողանում են սովորել, կարողանում են ըմբռնել նրանում շարադրվածը: Որոշ դեպքերում ուսուցիչները հենց իրենք են կանգնում խնդիրների առաջ՝ մտածելով, թե այս կամ այն թեման որտեղից գտնեն ու մատուցեն աշակերտներին:

Եթե չունենք պատրաստի դասագրքեր, կարելի է օգտագործել ռուսական ավելի որակյալ դասագրքերը: Այս ուղղությամբ պետք է լրջորեն մտածել:

Շատ կարևոր է հոսքերի ձևավորման հարցը: Անընդհատ լսում են և համոզվում, որ տվյալ դպրոցի հաջողությունը կախված է նրանից, թե ինչպես է ձևավորվում հոսքը: Կոնկրետ մեզ մոտ մի քիչ դժվարանում ենք այդ հարցում՝ պայմանավորված աշակերտների նվազ թվաքանակով: Բոլոր դեպքերում պետք է լուրջ մտածել այդ հարցին, պետք է լինի որոշակի կանոնակարգ: Սա նույնպես վերանայման կարիք ունի: Խոսում ենք լրացուցիչ պարապմունքների մասին: Մեղքը ոչ թե ավագ դպրոցին է, այլ որ՝ շատ հաճախ ուսուցիչը արդյունք չի ունենում: Իսկ կրկնուսույցն ունենում է: Բայց եթե կրկնուսույցը նույն ուսուցիչն է, ինչու՞ դասարանում չի ունենում նույն արդյունքը, իսկ լրացուցիչ պարապմունքների ժամանակ ունենում է: Սա ևս հարց է, որը պետք է քննարկել: Լրացուցիչ պարապմունքները հիմնականում անց են կացվում այն պատճառով, որ մեր աշակերտները չեն կարողանում ժամանակին կողմնորոշվել իրենց մասնագիտության ընտրության հարցում: Կողմնորոշումը հիմնականում կատարվում է 11-րդ, 12-րդ դասարաններում: Արդեն ահագին բացթողումներ են ունենում և լրացնելու համար գնում են կրկնուսույցների մոտ: Իսկ եթե մենք ունենանք ամուր հիմքերի վրա հիմնական դպրոց, ավելի հեշտ կլինեն աշխատանքներն ավագ դպրոցում: Մյուս կողմից դժվարությունն այն է, որ չունենք համապատասխան նյութատեխնիկական բազա, ապավինում ենք 70-80-ական թթ. բազային: Իսկ այսօր գլխավոր հարցերից մեկը տեսական թեմաների գործնական կիրառումն է: Այս ուղղությամբ էլ պետք է աշխատանքներ տարվեն: Դժվարություններից մեկն այն է, որ մեր ծնողները չունեն բարեփոխումների վերաբերյալ տեղեկություններ: Ուստի անհրաժեշտ է ծնողների շրջանում տանել բացատրական աշխատանք: Իհարկե, այսօր չենք կարող միանգամից փոխել մեր մանկավարժներին: Այստեղ մնում է միայն շեշտել՝ նրանք, ովքեր աշխատում են խղճով, աշխատում են իրենց մասնագիտական և մանկավարժական գիտելիքների բարձրացման վրա, անընդհատ կատարում են իրենց գիտելիքների լրացում, զբաղվում ինքնակրթությամբ, հասնում են որոշակի հաջողությունների: Իսկ ովքեր չեն աշխատում բնականաբար, չեն հասնում:

Անկասկած, ավագ դպրոցն ունի մի շարք առավելություններ, որոնք չի ունեցել խորհրդային դպրոցը, բայց մենք դրանով չենք ժխտում խորհրդային դպրոցը, այլ ասում ենք, որ պետք է վերցնել նրա լավ կողմերը և նրա հիմքի վրա կառուցել նորը: Ես հավատացնում եմ, որ կոնկրետ մեր մանկավարժական կոլեկտիվում կա այն ամենը, ինչ անհրաժեշտ է ավագ դպրոցի կայացման համար:

Իրա ՍԱՐԻՆՅԱՆ, Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի.

- Ընդամենը մի քանի տարի առաջ մեր հանրապետությունում ավագ դպրոցը գրեթե իր կենսագրու-



թյան առաջին էջը: Այն գրվեց ոչ հեշտությամբ, գրվեց բազում չլուծված խնդիրների առկայության պայմաններում, անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի, տեխնիկական միջոցների, համապատասխան գրականության՝ դասագրքերի բացակայության պայմաններում: Գրվեց՝ նախ իրենց գործին նվիրված մանկավարժների համար աշխատանքի շնորհիվ, այն անձանց շնորհիվ, որոնք ունեն կառավարության որոշումը կյանքի կոչելու պատրաստակամություն, մասնագիտական խոր պատրաստվածություն, ավանդական և ժամանակակից կրթական տեխնոլոգիաները միավորելու հնարարություն: Ինչ-որ տեղ երկյուղով, ինչ-որ տեղ վարանելով ոտք դրինք մի համակարգի շեմին, չնայած ունեինք հոսքային դասարաններում աշխատելու որոշակի փորձ: Հինգ տարի է անցել այդ ժամանակից: Եվ այդ տարիների ընթացքում դպրոցի կոլեկտիվն աշխատեց այն գիտակցումով, որ ավագ դպրոցը նախամասնագիտական կրթություն և պահովող հիմնական օղակն է, որի գործունեությունից մեծապես կախված է սովորողների մասնագիտական ճիշտ կողմնորոշումը: Ավագ դպրոցը հնարավորություն է տալիս խորությամբ ուսումնասիրել նախընտրած առարկաները և ճիշտ կողմնորոշվել մասնագիտության ընտրության հարցում: Հոսքային խմբերում աշակերտը ձեռք է բերում կայուն գիտելիքներ, ինքնուրույն աշխատելու հնարարություն, դրսևորում նպատակասլացություն և կամք: Այս տարիների ընթացքում մեր կատարած աշխատանքը տվեց իր ցանկալի արդյունքը: Մեր աշակերտները դարձան առարկայական օլիմպիականների, զանազան մրցույթների, ինտելեկտուալ խաղերի հաղթողներ: Սակայն հոսքային խմբերում ունենք նաև միջին և ցածր կարողությունների տեր սովորողներ, որոնց հետ տարվող աշխատանքը դրական արդյունք չի տալիս: Խորացված ուսուցմամբ դասարաններում սովորելու համար պետք է սահմանվի որոշակի կարգ. անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն սովորողի ցանկությունը, այլև պատրաստվածությունը:

Ավագ դպրոցի կայացման գործում չափազանց մեծ է հայոց լեզվի և գրականության դերը: Առարկայական չափորոշիչում հատուկ ընդգծվում է հայերենի պետական խորհրդանիշ և ազգային անվտանգության երաշխիք լինելու հանգամանքը: Անհնար է պատկերացնել մարդու, քաղաքացու ձևավորումը՝ առանց մայրենիի ընկալման: Մայրենիով է իրականացվում հայեցի դաստիարակությունը: Որպես մայրենի լեզվի և գրականության ուսուցիչ՝ հպարտ եմ նաև ինձ բաժին ընկած այդ առաքելության համար: Եվ ցանկանում եմ ներկայացնել որոշ նկատառումներ, որ վերաբերում են ավագ դպրոցի առջև ծառայած խնդիրներին:

Սովորողների կրթության և դաստիարակության գործում անշուշտ, կարևոր է, դասագրքի դերն ու նշանակությունը: Դասագիրքը պետք է համապատասխանի սովորողի տարիքային առանձնահատկություններին, լինի հետաքրքիր և մատչելի:

Հայոց լեզվի և գրականության դասագրքերում ընդգրկված են ծավալուն նյութեր, որոնք դժվար է խորությամբ ուսումնասիրել, յուրացնել, կրկնել ուսումնական պլանով նախատեսված ժամաքանակում: Անհրաժեշտ է բեռնաթափել ծրագրերը, սեղմ ձևով ներկայացնել թեմաները, հաճախ ծավալուն նյութը պատճառ է դառնում, որ սովորողը կորցնի հետաքրքրությունը ուսումնական նյութի հանդեպ, հեռանա գրքից: Հումանիտար և բնագիտամաթեմատիկական դասագրքերում չեն համապատասխանում որոշ տվյալներ: Բնագիտամաթեմատիկական հոսքում ուսումնասիրում են ոչ խորացված գրականություն, սակայն այդ հոսքի մեծ մասը հանձնելու է միասնական քննություն: Հայոց լեզվի դասագրքերում ներկայացվող նյութերին հաջորդում են տարբերույթ, հիմնականում մատչելի քերականական առաջադրանքներ: Սակայն շտեմարանների առաջադրանքները բարդ են ու խթան: Շտեմարաններում տեղ են գտել բազմաթիվ այնպիսի հարցեր, որոնց պատասխանները չի կարելի գտնել ավագ դպրոցի դասագրքերում: Ավագ դպրոցի ծրագրերը և դասագրքերը պետք է համապատասխանեն քննական թեստերում ընդգրկված հարցերին: Մայրենիի թեստերն այսօր այնքան են բարդացել, որ երեխաները բարձր միավոր ստանում են անզեղեցիկ, քան մայրենիից: Անհրաժեշտ է լուծել այդ հարցերը, հասպաղելու իրավունք չունենք:



Լուսինեի մեջ ունեցված և իր փորձի մասին խոսեց ԳԳ Աժ պատմավոր Ռուզաննա ՍՈՒՐՎԱԾՅԱՆԸ, ով երկար տարիներ աշխատել է դպրոցում, ղեկավարել ավագ դպրոց.

- Դասագրքերի հարցը տարիներ շարունակ եղել է մնում է բարեփոխումների մեջ կարևորագույն ուղղություն: Խորհրդային կարգերի փլուզումից հետո անհրաժեշտություն առաջացավ ունենալ մեր դասագրքերը: Խնդիրը հետևյալն է՝ դասագրքատեղծման գործընթացում շատ կարևոր է մանկավարժների մասնակցությունը: Այստեղ է մանկավարժների պասիվությունը, և հետագա դասագրքի շուրջ ստեղծված քննարկումները մնում են ընդամենը քննարկումների մակարդակում: Դասագիրքը գրում են ակադեմիկոսներ, պրոֆեսորներ: Պետությունը կրթության համակարգի համար սահմանել է չափորոշիչներ: Թե ինչպիսիք քաղաքացու պատվեր է տալիս մեզ, որ դաստիարակենք, կրթենք և դարձնենք հասարակության լիարժեք անդամ՝ արտահայտված են առարկայական չափորոշիչներում: Դրանից հետո զալիս են ծրագրերը, ամենավերջում՝ դասագրքերը: Ուսուցիչը պետք է ունենա այն հմտությունները, կրթական ռեսուրսները, որ կարողանա դրանք ծառայեցնել չափորոշիչ պահանջը կատարելու: Դա կլինի դասագիրք կամ երաշխավորված դասագրքերից մյուսը, դա կլինի էլեկտրոնային ինչ-որ մի կրթական մյուս: Իհարկե, սա մեզ չի հեռացնում բարձրացված խնդրից: Այո, դասագրքերում կան նաև սխալներ, խրթին ձևակերպում-

ներ: Պահանջը պետք է լինի միասնական թե՛ դասագիրք գրող խմբի, թե՛ ուսուցչի դասավանդման համար: Բոլորիս համար հիմնականը պիտի լինեն չափորոշիչը, մատչելիությունը, շարունակականությունը, փաստերի ճշմարտացիությունը: Ես մնում եմ այն կարծիքին, որ դասագրքատեղծ խմբի մեջ պետք է լինի ուսուցիչ, որն այդ գիրքը գրելիս այդ դասը պետք է տեսնի դասարանում. առաջարկի, թե ինչ մեթոդով կարելի է ներկայացնել տվյալ թեման ուսուցանելիս: Ցավոք, դեռ չենք հասել այդ կատարյալ մակարդակին, ուրտում ունենք խնդիրներ: Ո՞րն է ելքը: Նորից վերադառնանք չափորոշիչին: Եթե ուսուցիչը կարողանա պատկերացնել, որ իր դասը պիտի կառուցի չափորոշիչ վրա, դասագրքի նյութը կալանավորի այնպես, որ երեխան կարողանա շրջանցել խրթին պահերը: Իսկ սա ուսուցչի համար շատ աշխատատար պրոցես է: Խնդիրը մեզանից յուրաքանչյուրին է: Խոսում ենք, բայց գրավոր առաջարկություն չենք անում: Քննարկումները ոչինչ են, եթե չստանան գրավոր տեսք և կոնկրետ առաջարկություններով չներկայացվեն կոնկրետ մարմիններին:

Ինչ վերաբերում է ավագ դպրոցին, ասեմ, որ համաձայն չեմ այն կարծիքին, թե ընդունելությունը պիտի լինի քննությամբ: Ուր մնաց մեր կրթության շարունակականությունը: Դեռահատության տարիքը երեխայի համար ամենաբարդն է. հոգեբանական այնպիսի վիճակներ կան, երբ նա նորովի է ուզում իրեն դրսևորել, նոր նպատակներ դնել: Այստեղ ավագ դպրոցը լավ հնարավորություններ է տալիս: Երեխան կտրվում է իր դասարանից, որտեղ տարիներ շարունակ չի հասցնողի կարծրատիպի մեջ է եղել: Ինչ մնում է նրան, որ ֆիզիկայից, մաթեմատիկայից «երկու» ունեցող աշակերտն այդ հոսքում է սովորում, մեղավորը ոչ թե ավագ դպրոցն է, այլ այն աշխատեցնելու մեխանիզմը, մարդիկ, կարող են և այլև: Երեխան հնարավորություն ունի հունվար ամսին փոխել իր հոսքը: Էլ չեմ ասում, որ հաջորդ տարի էլ հնարավորություն ունի հոսքի մեջ մեքահոսքը փոխել: Ինչ վերաբերում է հոսքերը կազմելուն, այո, ցավոք, մենք այսօր լուծում ենք ուսուցիչներին աշխատանքով ապահովելու խնդիրը, հոսքերը ձևավորում ենք ըստ ուսուցիչների քանակի և ժամերի պահանջի: Մտնեցումը պետք է փոխվի: Եթե ավագ դպրոցը, նրա հոսքերը ճիշտ են կազմվում, ապա այն երեխան, որ կրկնուսույցի մոտ պարապում է շաբաթական 2 օր՝ 2 ժամով, ընդհանուր՝ 4 ժամ կամ առավելագույնը 3 օր՝ երկու ժամով, ապա հոսքային դասարաններում նույն առարկային տրված է 8 ժամ: Սովորաբար կրկնուսույցների մոտ վերջին տարիներում պարապում: Իսկ ավագ դպրոցում այդ 8 ժամն անցնում են 3 տարի շարունակ: Եթե դասարանում ճիշտ կազմակերպվի դասապրոցեսը, շաբաթական 8 ժամը երեք տարով բազմապատկելով, բավականին ժամաքանակ է ստացվում, երեխան գիտելիք ոչ թե թուղիկ կստանա և բուռն ընդունվելուց հետո շատ բաներ կնռռանա (ինչպես կրկնուսուցման պարագայում է), այլ կառուցողական ձևով ստացած գիտելիքը կդարձնի իր սեփականությունը ողջ կյանքի համար: Այս առումով ավագ դպրոցի գաղափարախոսությունն արդարացված է: Բայց կան միջոցներ, որոնք հնարավորություն չեն տալիս ամբողջը ճիշտ ձևով կազմակերպել: Մի փոքրիկ ժողով՝ ավագ դպրոցում իմ աշխատանքից: Համալսարանից հրավիրեցի սոցիոլոգի, փիլիսոփայի, հոգեբանի, մշակեցինք հարցաթերթիկ՝ 100 հարցից բաղկացած, մտաբերող դպրոցները և փորձեցի կազմակերպել խորհրդատվություն՝ երեխայի նախասիրությունները,

նախնական մասնագիտական կողմնորոշումը, ուժեղ և թույլ կողմերը ճշտելու համար:

Ու նաև դրեցինք մի սկզբունքային հարց. կապ չունի, թե մինչև հիմա ինչպես են սովորել, սա հնարավորություն է տալիս նորովի մտածել և նոր նպատակներ դնել, և նրանք, ովքեր չեն հասցրել, այստեղ պետք է սովորեն: Փալիս են ոչ միայն նրանք, ովքեր լավ են սովորում, այլև՝ ովքեր ցանկություն ունեն սովորելու: Հավատացեք, այդ տարի ձևավորվեցին հոսքեր, որոնց աշակերտներն իրենց նախասիրություններով համապատասխանում էին, և հոսքի փոփոխություն չունեցանք տարվա ընթացքում: Կարծում եմ, յուրաքանչյուր դպրոցում այս հարցին ստեղծագործաբար մոտենալու, ոչ թե ամմիջապես դժվարությունից հրաժարվելու, մի քայլ առաջ գնալու համար կա բավականին մերուժ, և մանկավարժների, տնօրենների համընդհանուր աշխատանքի արդյունքում հաստատել էլք կզտնվի:

Քարեփոխումների մասին իր



Նկատառումները ներկայացրեց ԼԳ Աժ նախագահ Աշոտ ՂՈՒՅԱՆԸ:

Նա համոզված է այն ճշմարտության մեջ, որ բարեփոխումներն, իրոք, անհրաժեշտ էին. որ պիտի նոր բան սկսեին կրթական համակարգում՝ կասկած չկար: Նրա կարծիքով՝ եթե ապավինում ենք միջազգային փորձին, պիտի հարցեր չառաջանան, թե ինչու ենք փորձում ընդօրինակել եվրոպական, իրեն արդարացրած կրթական համակարգին: Այս տրամադրվածությունը պիտի առաջնորդող լինի բարեփոխումների համար, կասկածանքություն չլինի: «Մենք արդեն զննեցել ենք այդ ճանապարհով և ճանապարհի կեսից չենք վերադառնա, այլ ընտրանք էլ չունենք, թե ինչին պետք է վերադառնանք: Նախկինի՞ն, որն արդեն չկա», - ասաց նա՝ հորդորելով առաջնորդվել այս նախատրամադրվածությամբ, յուրացնել հայեցկարգը, ունենալ նվիրված թիմ բոլոր դպրոցներում: Նա այն կարծիքին է, որ Ստեփանակերտում պետք է ունենալ հանրակացարանային պայմաններով ավագ դպրոց գյուղի լավ սովորող երեխաների համար: Որպես խորհրդարանի ղեկավար՝ նա վստահեցրեց, որ հնչեցված առաջարկություններն ի մի կերբեմն՝ գտնելու այն օպտիմալ լուծումը, որը թույլ կտա առաջ գնալ: Եվ կոչ արեց գերծ մնալ կատեգորիկ գնահատականներից, քանզի այդ ճանապարհի մի մասն անցել ենք, մնում է շտկումներ անել այնպես, որ ընդհանուր բարեփոխումները չտուժեն: «Մենք որակի կորուստ ունենք կրթական համակարգում. եթե այս վիճակը չշտկենք, եթե չկարողանանք այսօրվա մրցակցային աշխատանքում պատրաստ մասնագետներ ունենալ, կտուժենք: Եթե այս նույն կրթական պատասխանատուներով և այս խնդիրները չառաջադրենք և չփորձենք լուծել, ապագայում երկրի լուրջ կառավարիչներ խնդիր կունենանք: Հետևաբար, ինչ արել ենք՝ արժանի է դրվատանքի, բայց ինչ առջևում է՝ բոլորիս խնդիրն է», - այսպես եզրակարկեց իր խոսքը ԼԳ Աժ նախագահը:

ՀԱՄԱՉԱՅՆԱԳԻՐ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՎԵԼԻ ԾԱՎԱԼՈՒՆ ԿՂԱՌՆԱ

ՀՀ և ԼՂՀ կրթության և գիտության նախարարներ Սլավա Ասրյանը և Արմեն Աշոտյանը մարտի 4-ին Արցախի մայր բուհում ստորագրել են համագործակցության հուշագիր՝ 2014-2020 թվականների համար: Ս. Ասրյանը, անդրադարձնալով համաձայնագրի դրույթներին, նշեց, որ բարեփոխումներն ընթացում են ամբողջ կրթական համակարգում և, գտնվելով միևնույն կրթական տարածքում ու համագործակցելով միմյանց հետ, համաբայլ իրականացնում են դրանք: Ծրագիրը հիմնականում պարունակում է այն դրույթները, որոնք մինչև այդ էլ կային: Երկու նախարարությունների կողմից իրականացվող աշխատանքները մեծ ծավալ են ընդգրկում և բոլոր ոլորտներում ՀՀ ԿԳՆ-ի ու նրա կառույցների կողմից աջակցություն ունեն: Թարմացվելով այդ ծրագիրը՝ նաև նախատեսել են որոշ նոր դրույթներ: Մասնավորապես կփորձեն Դարաբաղի կրթական համակարգը ներկայացնել Բոլոնիայի գործընթացին մասնակցության առումով՝ հաշվի առնելով, որ Հայաստանը մինչև 2015 թվականը ստանձնել է Բոլոնիայի գործընթացի քարտուղար երկրի ղեկավարությունը՝ ի դեմս ՀՀ ԿԳ նախարարի: Ս. Ասրյանի կարծիքով, եթե դա հաջողվի, մշակակում է մեկ քայլ առաջ ենթ գնացել, չնայած կանա-ականա ընդգրկված ենք, քանի որ նույն դրույթներով ենք առաջնորդվում: Բայց եթե ստացվի պաշտոնապես համագործակցել, ավելի մեծ առաջընթաց կլինի: Նորություն է նաև ՀՀ-ում կատարվող ինչպես հանրակրթության, այնպես էլ բարձրագույն ուսումնական հաստատությունների վարկանիշավորման գործընթացը, որն իրականացվում է փորձնական կարգով: Առայժմ մենք ուսումնասիրում ենք, և դրական արդյունք ունենալու դեպքում Արցախն էլ կմիանա, և թե՛ բուհերի հավատարմագրումը, թե՛ վարկանիշավորումը կիրականացվեն միասնական տարածքում, և նրանք կընդգրկվեն Հայաստանի համապատասխան ցանկերում: Եվս մի կարևոր դրույթ նշեց Ս. Ասրյանը: Արցախի բուհերի կողմից տրված դիպլոմները՝ որպես չճանաչված երկրի փաստաթուղթ, որոշ առումով խոչընդոտներ են ստեղծում շրջանավարտների համար: Հարցի ժամանակավոր լուծումը որոշել են կրկնակի դիպլոմներ տալով: Մի խոսքով, ծրագիրն ընդգրկում է բոլոր ոլորտները կրթության բոլոր աստիճաններում: Նյութական աջակցություն, ուսուցիչների և դասախոսների վերապատրաստումներ, ուսանողների փոխանակումներ, փոխադարձ կապեր, այցելություններ, համատեղ ճամբարներ, գիտաժողովներ, այսինքն՝ այն, ինչ արվում էր, այժմ կլինի ավելի ընդլայնված:

ՀՀ ԿԳ նախարար Ա. Աշոտյանը համալսարանականներին ներկայացրեց իր դիտարկումները համակարգի զարգացումների վերաբերյալ: Ըստ նրա՝ կրթության ոլորտն ամենաբարձր է հասարակական ուշադրության կենտրոնում լինելու, մեծ քանակությամբ շա-

հառուներ ընդգրկելու, ազգային ավանդույթներով հանդերձ, ժամանակակից կրթական հաստատություններ ստեղծելու հրամայականների առջև կանգնած լինելու և այլ առումներով: «Բայց, անկախ այս ամենից, փորձում ենք առաջ գնալ այն ճանապարհով, որը, վստահ ենք, որ ճիշտ է, պարզապես երբեմն ճանապարհի արագությունը մեզ չի բավարարում: մի պահ թվում է, թե ուժերն են դավաճանում, բայց, այդուհանդերձ, ՀՀ-ում կրթության համակարգում փոփոխությունները կրում են անշրջելի և շարունակական բնույթ»,- ասաց նա: Փոփոխությունները, որ արվում են, նախարարն այսպես բանաձևեց՝ կրթությունը լինի ավելի որակյալ, բուհերը տնտեսության հետ ունենան առավել սերտ և նպատակային



կապեր, աշխատավարձերն ուսումնական հաստատություններում լինեն ավելի բարձր, կոռուպցիոն ռիսկերը՝ շատ ավելի ցածր, մեր կրթությունը եվրոպական կրթական տարածքում իր ճանաչելիության աստիճանը ավելացնի, և հասարակությունը գոհ մնա: Այսով հանդերձ՝ նա կարծում է, որ դրան հասնելու համար գլխավոր ճանապարհը սովորողների մտածելակերպում փոփոխություն կատարելն է: «Երկար աշխատելուց հետո եկել են պարզագույն եզրակացության, որ սովորեցնել կարելի է միայն այն մարդուն, ով ուզում է սովորել: Իսկ ուզում է սովորել բացառապես նա, ով մտածում է, որ իր խելքով, գիտելիքով է կարողանալու հարթել ճանապարհը, իր ընտանիքը պահել, արժանապատիվ աշխատանք ունենալ: Եվ ինչքան շատ գիտելիք ունենա երիտասարդը, տեսականորեն այնքան լավ պետք է այդ մարդը ապրի: Սա է այն մոդելը, որը մենք կոչել ենք գիտելիքահեն տնտեսություն կամ հասարակություն»,- շարունակեց իր դիտարկումները ՀՀ ԿԳ նախարարը՝ խոստովանելով, որ ցավոք, այսօր միշտ չէ, որ այդ կայան ուղիղ է: Եվ ամենակարևորը, որին պետք է հասնել՝ երիտասարդների մոտ հավատ և վստահություն սերմանելն է, որ ապագայում բացառապես գիտելիքներով, հմտություններով, մտավոր կարողություններով ի վիճակի կլինեն ապահովել իրենց և իրենց հարազատներ-

ընդգրկելու և օգտակար լինել երկրին: Մեր իրականության մեջ նման մարդկանց առկայությունը նա համարում է կրթության ոլորտի բարեփոխումների հաջողությունը:

Ըստ Ա. Աշոտյանի, մնացած ամեն ինչ դարձյալ կարևոր է՝ ինստիտուցիոնալ, բովանդակային փոփոխություններ և այլն, բայց, այդուհանդերձ, «այսօր մեզ համար, զոնե Հայաստանում, թիվ մեկ հարցն է՝ ինչպես անել, որ հանկարծ նախարարը կամ ռեկտորն ավելի շահագրգիռ չլինի ուսանողի ուսման հարցում, քան ինքը՝ ուսանողը, որովհետև բավականին զավեշտալի է այն վիճակը, երբ ռեկտորը, դասախոսը, ամբիոնի վարիչը սկսում են ավելի մեծ շահագրգռություն ցուցաբերել, որ ուսանողը նստի դասի, կարդա, սովորի, քան այն մարդը, որը, եմբարդվում է, որ պետք է ապրի, աշխատի, արարի և զարգանա գիտելիքով»:

Առկա բազմաթիվ հաջողությունների թվում նա թվարկեց լաբորատոր բազաների վերահիմունք, դիպլոմների ճանաչման գործընթացի ընդլայնումը, ուսանողների մոտ ավելի լավ սովորելու ցանկության արթնացումը:

Իհարկե, ցանկալի կլիներ, որ բարձրագույն կրթության բյուջեն լիներ այնպիսին, որ հնարավորություն տար ավելի անկախ լինել վճարողի սովորող ուսանողների գնահատման հարցում, և հարկադրված չլինեին վատ սովորող ուսանողներին պահել բուհում՝ ելնելով այն համաձայնագրից, որ նրանք մուծումներից դասախոսներն աշխատավարձ են ստանում: «Չնայած դժվարություններին, վստահ եմ, որ մեր թե՛ բուհերի վատ օրերն արդեն անցյալում են»,- լավատեսություն հայտնեց Ա. Աշոտյանը: Նա դրական գնահատեց այսօրվա զարգացումները և առաջարկեց շատ ավելի մեծ լավատեսությամբ նայել ապագային, որի հիմքն այն է, որ ամեն մեկը փորձի անել՝ ինչ կարող է: «Եթե մարդ աշխատանքում իրեն դրսևորում է առավելագույնս, ապա նրա գոհունակության և ինքնաբավության աստիճանը թույլ է տալիս լինել մի քիչ ավելի երջանիկ, որ կարողացել էս ինչ-որ մի բան քո ձեռքով անել՝ լինես ուսանող, ռեկտոր թե նախարար»:

Ինչ վերաբերում է հայաստանյան համագործակցությանը կամ աջակցությանը, նա ավելորդ համարեց այդ մասին խոսել՝ ասելով, որ այն եղել է, կա ու էլ ավելի ընդգրկում ու ծավալում կլինի: Մոռում է, որ հայկական կրթական տարածքը տեղափոխվի զարգացման նոր փուլ: Դրա համար նա տեսնում է բոլոր նախադրյալները:

Ա. Աշոտյանը պատասխանեց դասախոսների և ուսանողների հարցերին:

Ս. Ասրյանի դիտարկումների, մասնավորապես Բոլոնիայի գործընթացի առաջնությամբ նա հետևյալն ասաց. ԼՂՀ-ում ապրում և սովոր-

ում են հազարավոր երիտասարդներ, որոնք անկախ միջազգային ճանաչման առումով Արցախի կարգավիճակից, ունեն կրթության իրավունք, որովհետև այն ոչ թե պետության կամ երեքադարձական միավորման իրավունք է, այլ՝ մարդու: Հետևաբար, այն մարդիկ, որոնք ապրում են ԼՂՀ-ում, կիսաճանաչված կամ չճանաչված որևէ այլ պետությունում, չպետք է զրկված լինեն կրթության իրավունքը լիարժեք իրագործելուց, պետք է կարողանան ընդգրկված լինել նաև միջազգային կրթական տարածքներում: Ի դեպ, Կոստվոյի Հանրապետությունը սկսել է Բոլոնիայի՝ Եվրոպական կրթական տարածքին միանալու գործընթացը, և ուրախալի է, որ ԼՂՀ-ն նույնպես նման ցանկություն է հայտնում՝ ձգտում է իր բնակիչների կրթության իրավունքը դարձնել ճանաչված ու ճանաչելի, և կրթություն՝ առանց խտրականության միջազգային իրավունքի բանաձևը, որ մի քանի անգամ անրագրվել է և՛ ՄԱԿ-ի, և էս և՛ բազմաթիվ այլ միջազգային կազմակերպությունների փաստաթղթերում, իրականություն դառնա նաև ԼՂՀ ուսանողների համար: Նա հավաստիացրեց, որ որպես Բոլոնիայի քարտուղար երկիր՝ բնականաբար, իր լիազորությունների շրջանակում կանի ամեն ինչ, որպեսզի գործընթացը լինի եվրոպական կրթական տարածքին համահունչ, և ԼՂՀ ուսանողները վերահաստատեն իրենց լիարժեք իրավունքները եվրոպական բարձրագույն կրթական տարածքում:

Երկրորդ դիտարկումը՝ կապված կրկնակի դիպլոմների հետ, քննարկելուց հետո հանգեցին այն բանաձևին, որ եթե ԱրԴՀ-ն իր համապատասխան մասնագիտություններով համագործակցության պայմանագրեր կնքի Երևանի բուհերի հետ, վերանայի իր ուսումնական ծրագրերը, պլանները և համադրելի դարձնի երևանյան բուհերի տվյալ մասնագիտությունների ծրագրերի հետ, ուսանողը, ավարտելով Արցախի բուհը, հարկ եղած դեպքում Երևանում համապատասխան հանձնաժողովի կողմից քննություն անցնելուց հետո կստանա երկրորդ՝ հայաստանյան բուհի դիպլոմ: Իհարկե, սա համատարած բնույթ չի կրի, այն կլինի խիստ անհրաժեշտության դեպքում: Շատ կարևոր է, որ Արցախի դիպլոմը լինի նրա անկախության դրսևորումներից մեկը, որովհետև ամեն երկիր նախ և առաջ ուժեղ է իր անկախության խորհրդանիշներով, որոնցից մեկն էլ նրա համալսարանն է:

ԱրԴՀ ռեկտոր Մամուշ Միհայլանը համալսարանականների անունից շնորհակալություն հայտնեց նախարարներին՝ հետաքրքիր պարզաբանումներին, մշտական աջակցության և ուշադրության կենտրոնում պահելու համար՝ վստահեցնելով, որ հետևողական աշխատանքով կյանքի կկոչեն համաձայնագրի դրույթները:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԴՊՐՈՑՆԵՐԸ ՄՏԱՅԱՆ ՕՂԱՄԻՉ ՀՐԱՑԱՆՆԵՐ

ՆՁՊ առարկան ավելի լիարժեք ուսուցանելու հնարավորությունները մեծացել են Հայաստանի ազգային-հայրենասիրական դաշտում գործող «Սյունյաց արծիվներ» հասարակական կազմակերպության կողմից հանրակրթական դպրոցներին վերջերս 250 օդանոսից հրացաններ տրամադրելու շնորհով:

Նախաձեռնությունը ողջունեց ԼՂՀ ԿԳ նախարար Սլավա Ասրյանը՝ ասելով, որ դրանք շատ անհրաժեշտ են ռազմագիտության դասերին աշակերտների կրակային պատրաստությունն իրականացնելու համար: Նրա խոսքով՝ գերմանական արտադրության օպտիկական սարքով ժամանակակից այդ ուսումնական զենքը հնարավորություն կտա արցախցի դպրոցականներին՝ սովորել դիպլոմ կրակել:

«Սյունյաց արծիվներ» հասարակական կազմակերպությունը մասնաճյուղեր ունի Հայաստանի 300 համայնքներում, նրան անդամագրված են շուրջ 40 հազար երիտասարդներ: Իրականացնում է ռազ-

մահայրենասիրական ծրագրեր, որոնցից մեկն էլ հանրակրթական դպրոցներն օդանոսից հրացաններով ապահովելն է՝ ՆՁՊ առարկայի ուսումնասիրությունը տեսականից բարձրացնելով գործնական մակարդակի: Վերջին մեկ տարում կազմակերպությունը սկեռել է այս խնդրի վրա և հայրենասեր անհատների աջակցությամբ իրականացնում է այդ ծրագիրը՝ հաշվի առնելով Ադրբեյջանի ղեկավարության ռազմատեղ հայտարարությունները և տարածաշրջանում կատարվող սրընթաց փոփոխությունները, որ ստիպում են լինել մարտական պատրաստականության վիճակում անգամ դպրոցականներին: ՀՀ դպրոցներին կազմակերպությունն արդեն նվիրել է 1100 նման հրացաններ: Արցախում իրականացված

ծրագրի համար Ս. Ասրյանը շնորհակալանքի խոսք ուղղեց ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանին, ուն անմիջական նախաձեռնությամբ է գիռ և հետևողական նախաձեռնություններով համար: Հայոց պետականության կայացման, մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության գործում ունեցած մեծ ներդրումի համար Ս. Ասրյանը ԼՂՀ կրթության և գիտության նախարար Ա. Ասրյանին պարգևատրեց «Սյունյաց արծիվներ» կազմակերպության «Լեռնահայաստանի արծիվ» ոսկե հուշամեդալով՝ հանձնելով նաև կազմակերպության խորհրդանիշ արծիվ-հուշանվեր:

ԼՂՀ ԿԳ նախարարն իր հեթին բարձր գնահատեց Սյունյաց երկրի գավալ Ս. Ասրյանի՝ Արցախյան ազատագրական պայքարի այս փուլում ներդրումը և Արցախյան շարժման պետական հանձնաժողովի անունից նրան պարգևատրեց Արցախյան շարժման 25-ամյակի հուշամեդալով:



Սեփ. Լրատվություն

ՏԵՆՉԱԿԱՆ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԳՈՐԱՑՈՒՑԻՉ ԵՆ, ԲԱՅՑ ԱԿՆԿԱԿՈՒՄ Ե ԱՎԵԼԻՆ

Փետրվարի 11-22-ը ԼՂՀ ԿԳՆ կրթության պետական տեսչությունը պլանային ստուգումներ է իրականացրել Ստեփանակերտի և Արմավիրի անվան հ. 1 հիմնական դպրոցում: Այն վերջին անգամ համակողմանի տեսչավորման է ենթարկվել 5 տարի առաջ: Ինչ փոփոխություններ են կատարվել կրթօջախում, ինչ ձեռքբերումներ, բացթողումներ, խնդիրներ ունի՝ տեղեկանում ենք տեսչապետ Սոս Արզումանյանի հաշվետվությունից, որով նա համոզեց եկավ ստուգումներից անմիջապես հետո հրավիրված մանկավարժական խորհրդի նիստում, որտեղ եղան ակտիվ քննարկումներ:

Նախորդ ստուգումից հետո դպրոցի շենքային պայմաններն զգալիորեն բարելավվել են, և դեռ լայն թափով շարունակում են ընթացող ուղղությամբ տարվող աշխատանքները: Ուսուցիչները և միջին գալիք ուսումնական տարվա սկիզբն ավարտելու ու շահագործման հանձնել 600 աշակերտական տեղի համար նախատեսված ևս մեկ մասնաշենք: Դպրոցն ունի ժամանակակից պահանջներին համապատասխան անհրաժեշտ նյութատեխնիկական բազա, ապահովված է տեղեկատվական տեխնոլոգիայի միջոցներով:

Պարապմունքներն ընթանում են լայնամասշտաբ շինարարական աշխատանքներին զուգահեռ, ինչը տեսչապետի խոսքով, ժամանակավոր իր բացասական հետքն է թողնում ընդհանուր ուսումնական գործընթացի վրա: Սեպտեմբերի 1-ի դրությամբ դպրոցում կոմպլեկտավորվել է 43 դասարան-համակազմ՝ 1220 աշակերտի ընդգրկմամբ:

Բացի այդ, դպրոցում վեցժամյա աշխատանքային ռեժիմով գործում են 5 նախադպրոցական խմբեր՝ 136 երեխայի ընդգրկմամբ: Դպրոցի 2-9-րդ մեկական դասարան ռուսերենի խորացված ուսուցմամբ է:

2012-2013 ուստարում դպրոցն ավարտել են 118 իններորդյակներ, որոնցից միայն մեկ հոգի՝ Աննա Արզումանյանը, ստացել է հիմնական կրթության վկայական «Գերազանցության» նշումով: Շրջանավարտներից 60-ը շարունակվում են ուսումնառությունը ավագ դպրոցներում, 51-ը՝ քոլեջներում, 3-ը՝ արհեստագործական ուսումնարանում, 4-ը ոչ մի տեղ չի սովորում:

2012-2013 ուստարին դպրոցը եզրափակել է բարձր ցուցանիշներով: Ընդհանուր առաջադիմությունը կազմել է 99,9% և 35,4%: 113 գերազանցիկ և 258 հարվածայիններ է ունեցել, որը կազմել է գնահատված 1043 աշակերտների, համապատասխանաբար, 10,8%-ը և 22,6 %-ը, իսկ 9-րդ դասարանի 118 շրջանավարտներից 3-ն են ավարտել գերազանց և հարվածային գնահատականներով:

Դպրոցի աշխատողների ընդհանուր թիվը 119 է, որից 87-ն են մասնավարժական աշխատողներ: Հանրապետությունում միակ դպրոցն է, որի ուսուցիչներն ունեն բավարար ծանրաբեռնվածություն: 84 ուսուցիչ 74-ը ունի մեկ դրույք և ավելի ծանրաբեռնվածություն: Տեսչության պետ Ս. Արզումանյանը սա դիտում է որպես դպրոցի տնօրեն, ԼՂՀ Աժ 4-րդ և 5-րդ գումարումների պատգամավոր Ռոմելա Դադայանի արդյունավետ ղեկավարման և աշխատանքների կազմակերպման արդյունք:

Տեսչությունն ստուգումներ է իրականացրել ուսումնադաստիարակական աշխատանքների դրվածքի, դպրոցի աշխատանքների պլանավորման ու կազմակերպման, դպրոցավարությանն առնչվող կարևորագույն փաստաթղթերի, ներդպրոցական վերահսկողության, մեթոդական, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների, ուսուցանման և ուսումնառության ընդհանուր դրվածքի վերաբերյալ:

Ս. Արզումանյանը նշեց, որ փաստաթղթերի վարման աշխատանքները տնօրենի ուշադրության և վերահսկողության դաշտում են, նույնը վերաբերում է դասամատյանների լրացմանն ու վարմանը, մասնակի անճշտություններ են ի հայտ բերվել՝ կապված աշխատողների աշխատանքի ընդունման հրամանների գրքում արված ձևակերպումների հետ:

Ցանկացած կրթական հաստատության հաջողություններ պայմանավորված են առաջին հերթին ներդպրոցական պատշաճ վերահսկողությամբ: Նախորդ տարիների համեմատությամբ տեսչությունը զգալի առաջընթաց է արձանագրել դասավանդողների ուղղությամբ (100%):

Այս ուղղությամբ որպես թերություն տեսչության պետը նշեց ներքին համակողմանի և թեմատիկ ստուգումների ոչ հետևողական, նպատակային ու պլանային բնույթը:

Յուրաքանչյուր ուսումնական հաստատության բարձր վարկանիշ նախ և առաջ պայմանավորված է նրա ուսումնական արդյունքներով, առարկայական օլիմպիադաներում ու տարաբնույթ մրցույթներում ունեցած հաջողություններով: Տեսչության պետի արձանագրած տվյալներով՝ վերջին 4 տարիների ընթացքում ամենից հաջողվածը 2012-2013 ուստարին էր:

Այսպես՝ 2010-2011 ուստարում օլիմպիադայի քաղաքային փուլում ակտիվ մասնակցության համար գովասանագիր են ստացել 7, հանրապետական փուլում՝ 1, 2011-2012 ուստարում՝ համապատասխանաբար 24 և 2, 2012-2013 ուստարում՝ 23 և 9 հոգի: Հիմնական արդյունք է ցույց տվել 2013թ. 9-րդ «ա» դասարանի աշակերտուհի Աննա Արզումանյանը, որը 2 առարկայից՝ հայոց լեզու (ուսուցիչ՝ Ռ. Դադայան) և անգլերեն (ուսուցիչ՝ Գ. Հարությունյան) ԼՂՀ հանրապետական փուլում արժանացել է 1-ին կարգի դիպլոմի, իսկ ՀՀ եզրափակիչ փուլում անգլերենից հավաքելով 17,5 միավոր՝ արժանացել է ակտիվ մասնակցության համար գովասանագրի, հայոց լեզվից գրավել է 1-ին տեղը ու խրախուսվել ԼՂՀ նախագահի կողմից: Կրկնակի հաջողության է հասել նույն դասարանի Տաթև Դարիբյանը. 2-րդ տեղ՝ հանրապետական փուլում, դարձյալ՝ հայոց լեզվից և անգլերենից: Հայոց լեզվից 2-րդ տեղ է գրավել նաև Անուշ Ծատրյանը (9-րդ «ա» դասարան): Ակտիվ մասնակիցներ են ճանաչվել Անահիտ Թադևոսյանը (9-րդ «ա» դասարան) և Աննա Հարությունյանը (8-րդ դասարան, ուսուցիչ՝ Ժ. Բալայան), 9-րդ «ա» դասարանիցներ Սուրեն Բաղդասարյանը, Սաթենիկ Հայրապետյանը և Անահիտ Թադևոսյանը՝ քիմիա առարկայից (ուսուցիչ՝ Ի. Սկրտչյան):

«Կարելի է ասել, որ արդյունքները հիմնական դպրոցի համար վատ չեն: Ցավալիկ այն է, որ անցած տարվա հաջողությունները չեն արձայնդվել, այլ հակառակը», - նշեց Ս. Արզումանյանը: 2014թ. առարկայական օլիմպիադայի դպրոցական փուլին մասնակցած 94 սովորողներից միայն 11-ն են մասնակցել քաղաքային փուլին, որոնցից միայն 4-ն են իրավունք նվաճել մասնակցելու հանրապետական փուլին. 2-ը՝ հայոց լեզվից, 9-րդ դասարանից, մեկական՝ ռուսաց լեզվից (9-րդ դասարան) և անգլերենից (8-րդ դասարան): Հաջողություններ արձանագրվել են հիմնականում լեզուներից:

Աշակերտների ստացած գիտելիքների, կարողությունների և հմտությունների, ուսուցիչների մասնագիտական ու մեթոդական պատրաստվածության մասին պատկերացում կազմելու և գնահատական տալու համար տեսչական հանձնաժողովի անդամների կողմից մի շարք առարկաներից՝ մայրենիից և մաթեմատիկայից՝ 2-4-րդ դասարաններում, 5-9-րդ դասարաններում՝ մայրենիից, հայոց լեզվից, ռուսաց լեզվից, օտար լեզվից ու մաթեմատիկայից տրվել են ստուգողական գրավոր աշխատանքներ, բոլոր դասարաններում՝ համարյա բոլոր առարկաներից, կատարվել դասավանդումներ:

Տրված գրավորների արդյունքներն ունեն հետևյալ պատկերը.

2-4-րդ դասարաններում մայրենիի միջին առաջադիմությունը կազմել է 78%՝ կիսամյակային 99,5%-ի դիմաց, որակը 48%՝ կիսամյակային 74%-ի դիմաց: Ընդհանուր առմամբ, արդյունքները բարձր են, բայց կան և շատ ցածր արդյունքներ, ինչպես, օրինակ, 90% և 20%, իսկ կիսամյակում՝ ավելի ցածր. առաջադիմությունը՝ 15%, որակը՝ 0%:

Նույն դասարաններում մաթեմատիկայի միջին առաջադիմությունը կազմել է 80%, որակը՝ 49%, կիսամյակային՝ համապատասխանաբար, 99,6%-ի և 68%-ի դիմաց: Այստեղ էլ արդյունքները հիմնականում գոհացուցիչ են, բացառությամբ 2-րդ «ե» դասարանի, որտեղ ստացվել է 50% առաջադիմություն, 25% որակ կիսամյակային 95%-ի և 30%-ի դիմաց և 2-րդ «ե» դասարանում, որտեղ ստացվել է 29% առաջադիմություն և 0% որակ, կիսամյակային

100%-ի և 31%-ի դիմաց: Այս դասարաններում աշակերտների ուսումնառությունը գնահատվել է «անբավարար»:

Հայոց լեզվից՝ 5-9-րդ դասարանների միջին առաջադիմությունը տեսչական գրավորից կազմել է 75%, որակը՝ 38%, կիսամյակային 96% և 44%-ի դիմաց:

Տեսչության պետը դրվատեց հայոց լեզվի և գրականության մեթոդավորման աշխատանքը. տեսչության կողմից 7 ուսուցիչների աշխատանքը գնահատվել է «լավ» և միայն մեկինը՝ «բավարար»:

Ամենաբարձր արդյունքներ աշակերտները ցուցաբերել են ռուսաց լեզվից: Միջին առաջադիմությունը և որակը կազմել են 85% և 54%՝ կիսամյակային 95%-ի և 42%-ի դիմաց: Ամենից բարձր արդյունք են ցույց տվել ժամնա Բալայանի աշակերտները՝ 100% առաջադիմություն և 89% որակ, իսկ ամենացածր արդյունքը եղել է 72% և 39%: Արդյունքում ռուսաց լեզվի և դասավանդման, և՛ ուսումնառության դրվածքը գնահատվել է «լավ»:

Անգլերենի միջին առաջադիմությունը կազմել է 90%, որակը՝ 41%: Որակական ցուցանիշներն ավելի բարձր կլինեին, եթե երկու դասարանում որակը չկազմեր 3,5% և 0%:



Համեմատաբար ցածր են գրավորների արդյունքները մաթեմատիկայից: 5-9-րդ բոլոր դասարանների միջին առաջադիմությունը կազմել է 49%, որակն ընդամենը՝ 17% կիսամյակային 98%-ի և 39%-ի դիմաց: Կան բարձր ցուցանիշներ. 5-րդ «գ»-ում առաջադիմությունը՝ 94%, որակը՝ 65%, 5-րդ «դ»-ում՝ 94% և 58%: Ցավալի է, որ թույլ, անբավարար գիտելիքներ են ցուցաբերել 7-9-րդ որոշ դասարաններում, որտեղ որակ չի եղել, իսկ առաջադիմությունը տատանվում է 20-48%-ի սահմանում:

Ամբողջ դպրոցի մասշտաբով բոլոր առարկաներից միջին առաջադիմությունը և որակն առաջին կիսամյակի արդյունքներով բավականաչափ բարձր են: Գնահատվել է 1041 աշակերտ, որոնցից գերազանցիկներ են 83-ը, հարվածայիններ՝ 290-ը, անառաջադիմ ընդամենը՝ 91%, որակը՝ 36%, ասել է թե՛ երեք աշակերտից մեկը հարվածային կամ գերազանցիկ է:

Ամբողջ հաջողությունների մասին է խոսում նաև նրա շրջանավարտների հետագա ուսումնառությունը: Տեսչապետը փաստեց, որ, հ. 1 հիմնական դպրոցն ավարտած իններորդյակները, շարունակելով ուսումնառությունը 5 ֆիզմաթ դպրոցներում, ցուցաբերում են ավելի բարձր ցուցանիշներ, քան նշված դպրոցների միջին առաջադիմությունն է: Քաղաքի մյուս դպրոցներում այսպիսի արդյունքներ չեն գրանցվել:

Հաշվետվության շուրջ եղան ելույթներ, պարզաբանումներ: Մասնավորապես, կարծիքներ հնչեցին տարրական երկու դասարաններում՝ ուսումնառության անբավարար արդյունքների վերաբերյալ: Դա պատճառաբանվեց նրանցում ներառական կրթության երեխաների մեծ քանակի առկայությամբ, դասավորների համախառն փոփոխությամբ: Բանավեճի առարկա դարձավ ԼՂՀ երիտասարդ ուսուցիչ վերաբերմունքը առարկայի հանդեպ, բարձր ԿԳՆ Գրիգորյանի, անբավարարելի է: Նրա խոսքով, այս դպրոցը միշտ եղել է քաղաքի ռազմագիտության ոլորտի ավանգարդում: Նա հանձնարարականներ տվեց ինչպես փաստաթղթային մասով՝ շատ կարճ ժամկետում կատարելու պահանջով, այնպես էլ՝ մանկավարժանկարողական պատրաստվածության, որի կատարմանը

կիսակի տարվա ընթացքում թեմատիկ ստուգման միջոցով: Մտահոգություն հայտնվեց մաթեմատիկա առարկայի դրվածքի առնչությամբ, որն ամբողջ հանրապետությունում թույլ է, բայց երբ նաև բարի համբավ ունեցող այս դպրոցում բարձր մակարդակի վրա չէ, ուրեմն՝ ընդհանուր վիճակը բարվոր չէ, և անհապաղ միջոցներ ձեռնարկելու կարիք կա:

Հայոց լեզվի ուսուցիչներն էլ մտահոգության առիթ ունեն. 30-ից ավելի աշակերտներ ունեցող 5-6-րդ դասարանները չեն կիսվում, դա արվում է 7-րդ դասարանից սկսած: Այնինչ ուղղադրության հիմքը ցածր դասարանում է դրվում. խմբերի բաժանվելու անհրաժեշտությունը այդտեղ ավելի մեծ է: Հիմնախնդիրը կա, և տեսչապետը խոստացավ հարցը քննարկել նախարարի կողմից: Հայերենի ուսուցչուհի Անուշ Արարմանը խնդրեց նախարարությանը օգնել իրացնելու իր կազմած գրքերը. «Օգնեք լավերին՝ ավելի լավը լինելու»: Տնօրեն Ռ. Դադայանի գնահատմամբ, այդ գրքերը բավականին կիեռացնեն ուսուցիչների աշխատանքը տվյալ եղանակի մասին օժանդակ նյութեր ձեռք բերելու հարցում:

Փոխտնօրեն ժամնա Բալայանը ակիստանք հայտնեց, որ հաջորդ տեսչական ստուգմանը, որը կլինի հինգ տարի հետո, ինքը հավանաբար չի լինի դպրոցում՝ տարիքի պատճառով, բայց ուրախ է այն բանի համար, որ արժանի հերթափոխ է գալիս՝ երիտասարդ ուսուցիչների սերունդ, որը փայլուն տիրապետում է ուսուցման մեթոդներին և իրենցից ավելի լավ կլինի: «Եվ առաջին դպրոցը կաշխատի այնպես, որ միշտ լինի առաջինը», - հավատացնում է նա:

Դպրոցի տնօրեն Ռ. Դադայանը շնորհակալություն հայտնեց տեսչությանը՝ երկշաբաթյա համատեղ աշխատանքի համար, որն անցավ փոխընթացման մթնոլորտում: Ի հայտ բերված թերությունների վերացմանը կլծկվեց ամբողջ կոլեկտիվով, քանզի յուրաքանչյուրի թերությունը ամեն մեկն ընդունում է որպես իր սեփականը: Ի դեպ, Ռ. Դադայանն էլ իր հերթին գնահատեց ղեկավարի համար, որ մեծ առաջխաղացում կա այս հինգ տարիների ընթացքում: Եթե նախկինում միայն ստուգում էին, ապա հիմա մեթոդական ուղղություն ցույց տալու հետ միասին գնահատում են նաև ուսուցչին:

Մանկավարժական խորհրդի նիստին ներկա էր Ստեփանակերտի քաղաքապետարանի ԿՍ բաժնի պետ Կառլեն Մարգարյանը: Նա խոստովանեց, որ ցանկանում էր ստուգումը հետաձգել՝ մինչև դպրոցը սկսի բնականոն ուսուցումը, և դրանց գուցահեռ կազմակերպվել են համընդհանուր տեսչական ստուգումներ, հասկանալի է, թե ինչ լարվածություն է տիրել: Արդյունքները գոհացուցիչ են, առավել ևս, որ հինգ տարվա համեմատությամբ առաջընթաց է արձանագրել թուրք բնագավառներում: Նշված որոշակի թերությունների վերացումը, մասնավորապես երիտասարդ մասնագետների կայացումը նա համարեց բոլորի գործը՝ դպրոցից մինչև բաժին և տեսչություն: «Սա ոչ միայն մայրաքաղաքի, այլև հանրապետության այն մասնակավարժական կոլեկտիվն է, որի յուրաքանչյուր անդամ գիտի իր տեղը, դերը և պարտականությունը: Այստեղ ոչ միայն վարչակազմն է իր պարտականություններն անթերի իմանում, այլև ուսուցչական կազմի զգալի մասը, որը խորը տիրապետում է իր առարկային ու մեթոդներին, և իրենց մասնագիտական ու մարդկային տեսակետից բարձր անհատականություն է», - ասաց բաժնի պետը՝ հանդգնած, որ ստուգումը կխթանի կոլեկտիվի առջև դրված խնդիրների իրականացմանը և վստահեցրեց, որ որոշ առարկաներից վերահանված բացերը կվերացվեն, ու հաջորդ ստուգման ժամանակ ոչ պակաս հաջողություններ կունենան նաև բնագիտական առարկաներից, քանզի լավ մասնագետներ կան այս առարկաների գծով:

Սովորաբար դպրոցի աշխատանքը գնահատվում է «բավարար» կամ «անբավարար»: Հ. 1 դպրոցի աշխատանքը գնահատվեց «բավարար»՝ այլուսով:

ՀՈՐԵԼՅԱՆ

ԱՐՅԱՆ ԱՇԽԱՐԻ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴ



2014թ. մարտի 20-ին լրանում է Արցախի թեմակալ առաջնորդ, ազգային նվիրյալ, մարդասիրական գործունեությամբ փառաբանված Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանի ծննդյան 60-ամյակը, որի ողջ գործունեությունը նվիրաբերում է գերազույնիմ՝ արցախահայության հոգևոր և տնտեսաքաղաքական հարթաճանկներին:

Նա հենց այն գործիչն է, որ պիտի գործեր ընդվզող ու մարտնչող Արցախում, դառնար նրա զինվորյալ առաջնորդը և հոգևոր զարթոնքի վերաշինության սկզբնավորողը:

Դիպուկ է նկատվում, տիպական կերպար՝ տիպական հանգամանքներում:

Արցախահայությունը, մանավանդ եկեղեցուն անդամագրված հավատավոր ժողովուրդն իր ջերմ շնորհավորանքներն է հղում իր բարեխնամ առաջնորդին՝ գերաշնորհ սրբազան Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանին, համձին որի Արցախում ունի իր հոգևոր մեծ գործիչին, իր մեծ նվիրյալին, որի բարյացակամության և մարդասիրության համբավը համազգային ընդգրկում ունի՝ նվիրագործություն:

Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը ծնվել է 1954թ. մարտի 20-ին, Սումգայիթ քաղաքում: Հայ Առաքելական եկեղեցու ազգային-ազատագրական շարժման գործիչ է: Ավարտել է Երևանի Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտը (1967թ.), Մայր աթոռ Սբ Եջմիածնի հոգևոր ճեմարանը (1983թ.) և Ս. Պետրբուրգի հոգևոր ակադեմիային կից ասպիրանտուրան (1986թ.): Աստվածաբանական գիտությունների թեկնածու է: 1976-1978թթ. ծառայել է ԽՍՀՄ ՁՈւ-ում: Կուսակրոն քահանա է ձեռնադրվել 1985թ., եպիսկոպոս՝ 1988-ին, «արքայական» աստիճան ստացել 1999-ին:

1989-ից Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդն է: 1989թ. հոկտեմբերի 1-ին Փանծասարի վանքում առաջին անգամ պատարագ է մատուցել:

Հայրենաշինությունը մեծ ընդգրկում ունի և ներառում է նյութական ու հոգևոր ոլորտներ: Նյութական իմաստով այն ընկալվում է որպես հայրենիքի շենացում իր բազմոլորտ կառույցներով, իսկ ոչ նյութական առումով՝ հանկարծակրորեն որպես հոգևոր կրթողների վերակերտում և կրթողներից վեհագույնի՝ մարդկային հոգու վերածնունդ, որը հայ մարդուն վերստին վերադարձրեց իր արմատներին, իր անընդմիջելի ճշմարիտ լույսին:

Հայրենաշինությունը պայքարի ելած մեր ժողովրդի հարթաճանկների ամրակայումն է, առանց որի անհնարին կլիներ քաղաքական կայունությունը, տնտեսական վերազինումը, ժողովրդի հոգևոր զարթոնքը: Հայն այս ամենի կարիքն ուներ և ունի, հաղթանակած հայը, իր ծառին, իր արմատին, իր տան պատին հենարանված, փյունիկված երկրում զարթոնք ապրող, զարթոնք տվող հայը:

Ղողանջ ու ավետում, ավետում ու զորացում, զորացում ու հաղթանակների շքերթ:

Հայն ապավինեց իր պահանջատիրության արդարացիությանն ու Արարիչ Աստծո նախախնամությանը: Ազգային զարթոնքն ակունք դարձավ Մեծ դարձի. այն է՝ հավատառ Աստված: Կոմունիստական զաղափարախոսության աթեիստական անհավատության մեքենան ջարդուխուրդ եղավ, և 70 տարվա ընդմիջումից հետո Արցախի հինավուրց պապենական հողում ծլնագ Գանձասարի վանքի հնօրյա զանգը. երկարատև ընդմիջումից հետո այնքան ախորժ էր մեր կաթողիկոսա-միստ մայրավանքի հյուրընկալ դռների բացումը: Սակայն թշնամին ամեն կերպ ջանում էր խլացնել ազատության այդ ճիչը՝ գրոհի տեղատարափ ուղղելով վանքի ուղղությամբ: Դիմակայվեց գրոհի ամեն մի ընդվզում. Արցախն անցնում էր իր աննահանջ ուղին: Դիմակայության երթը խրոխտանում էր խաչակիր հավատավոր զինվորների ուխտյալ դաշինքով, որ անվարան ետ էր մղում անհավասար ուժերի հակագրոհները, զի Աստված ընդ մեզ էր, և բոլորին քաջալերում էր Արցախի թեմի առաջնորդ Պարզև Մարտիրոսյանն իր հոգևոր դասով: Ձինվորին զինավառել էր պետք գործով, բանիվ և ամենայնիվ: Հոգևոր դասի քանի՞ զինվորյալներ են միաժամ մղել և օրհասի մարտը: Ի վերջո, Տիրոջ օրհնյալ կամքով մեր հինավուրց հողը ձեռք բերեց օրհնյալ ազատություն, որն ամրակայվեց հրաղաղությամբ:

Արցախի նորաստեղծ հոգևոր թեմը, առաջնորդությամբ Պարզև Սրբազանի, սկսեց հոգևոր լայնածավալ գործունեություն՝ ամենուր վերաշինելով և բացելով մեր խոնարհված եկեղեցիները, վեր խոյացնելով նորերը հանրապետության ողջ տարածքում:

1992 թվականից Արցախի հոգևոր թեմի Շուշիում՝ իր հոգևոր մշակութային օրրանում հանգրվանելը հոգեպես մեծ ապավեն էր հաղթանակի դրոշ պարզած քաղաքի համար:

Շուշեցիներին համար Սրբազանի հովանավորությունն, իրոք, երկնային պարզև էր, սուղ ժամանակների ամենաջերմագին ներկայությունը:

Շատ էի լսել Պարզև Սրբազանի մասին, և մի անգամ հնարավորություն ընձեռվեց առնչվել նրա հետ: Համդիպեցի Սրբազանին ու մտքումս կրկնում էի. «Մի՞թե մարդ կարող է այսքան բարյացակամ ու հոգատար լինել», քանի զ տեսածս գերազանցել էր սպասածս: Բացեցի Ավետարանն ու կարդացի (Ա Տինթեսու 3:1-5). «Եթե մեկը եպիսկոպոսության կցանկայ, աղել գործի կցանկայ... զգաստ, խոհեմ, պարկեշտ, հյուրասեր, սորվեցնելու հարմար: Ո՛չ գինեմոլ, ո՛չ զարնող, հապա հանդարտ, ո՛չ կռվող, ո՛չ արծաթասեր...»: Աստված մարտնչող Արցախին ուղարկել էր արժանավորին, որն էականորեն փոխեց մեր հոգևոր դիմագիծը: Նա հանդիսացավ անձնական օրհնակով միմյանց ծառայելու լավագույն դրսևորում, սրտառույզ բարեկամ ու բարեխնամ հովանավոր: Երկար տարիներ՝ 20 տարուց ավելի մենք վայելում ենք գերաշնորհ Սրբազանի ներկայությունը, սնվում նրա հորդորներով՝ ըստ Աստծուց խնդրվածով՝ երկայն աւուր ուղիղ վարդապետությամբ...

Սրբազանի օրհնությամբ Շուշիում վերաբացվեցին Սբ. Հովհաննես Մկրտիչ (1995թ. փետրվարի 23) և Ղազանչեցոց Ամենափրկիչ եկեղեցիները (1998թ. հուլիսի 19):

Հոգով կարելի է զգա նրա ներկայությունը եկեղեցուն, քանզի մտնելով սուրբ տաճար, զգում ես օրհնության այն հետագիծը, որ Սրբազանն է թողնում իր ներկայությամբ, որը մխիթարում, սփոփում, զորացնում է հոգիդ, երբ բարի հայացքի շնորհք թեզ է փոխանցում և աստվածային պատգամը, երբ աղոթական խոսքի գորությունը սնուցում է ուխտատեղի եկած ուխտավորին:

Շուշեցիների հիշողությունից չի ջնջվի գիշերային բացառիկ պատարագը, որ մատուցվեց Ղազանչեցոց եկեղեցուն, գիշերվա ժամը... 4-ին՝ հանուն հրեշտակապետաց: Հավաքվեցին նրանք, ովքեր հավատում են, որ երբ դողանքում են եկեղեցու զանգերը, Աստծո պատգամն է հաղորդվում... Սի անգամ վաղ առավոտյան զնացել էի

Հովհաննես Մկրտիչ եկեղեցի (առայսօր էլ այն հնչում է որպես Կանաչ ժամ). և ժամերգողը, և պատարագիչը Սրբազանն էր: Սովորաբար ոչ մշտապես մարդաշատ եկեղեցին լցվեց մարդկանց հոծ բազմությամբ: 1994թ. օգոստոսի 18-31-ն ընկած ժամանակահատվածն էր, և հրավիրված էր համահայկական միջթեմական համագումար-խորհրդակցական ժողով, որի մասնակիցներն էին եկել ուխտի: Գերաշնորհ Սրբազանը քարոզ կարդաց, թե ինչպես մի անգամ մի եպիսկոպոս մտավ մի կիսավեր եկեղեցի իր սարկավազի հետ և սկսեց պատարագ մատուցել. հրեշտակները ծայնակցում էին եպիսկոպոսին՝ կատարելով դարաց դասի երգեցողությունը: Այդ քարոզից հետո եկեղեցին լցվեց Աստվածային հոգեպարար ներկայությամբ:

Հիշարժան են եպիսկոպոսական պարագաները տաղավարահարաց ամենամեծ տոներին՝ Սուրբ Ծննդյան և Հարության օրերին, որոնցից առաջինով Քրիստոսի ծննդյան ավետիսն է փոխանցվում հավատավոր ժողովրդին և կատարվում ջրօրհնեցի կարգ՝ որպես օրհնության և բժշկության միջոց ընդդեմ չարիքի և հիվանդությունների, իսկ երկրորդով Տիրոջ հրաշակառ հարությունն է փառաբանվում վերածննդի վկայական ստացած քաղաքի առաջնորդանիստ եկեղեցուն: Ուշագրավն այն է, որ հենց այստեղ են քրիստոնեական մեծ տոներին մեկտեղվում մեր երկրի բոլոր ներկայացուցիչները՝ սկսած Նախագահից մինչև ամենակրտսեր քաղաքացին, և Սրբազան հայրը օրհնություն է խնդրում Ամենակարողից, որ շնորհի իմաստություն իշխանավորաց և խաղաղություն ամենեցուն:

Իսկ բոլոր ամանորյա կեսգիշերներին, երբ սպասում ենք հրաշքի, գիշերվա ուղիղ ժամը 12.00-ին Արցախի առաջնորդանիստ եկեղեցուն՝ Ղազանչեցոցում, դողանքում են գանգերը, ավետում տարեմուտը, և Սրբազան հոր գլխավորությամբ կատարվում է ամանորյա օրհնության կարգ: Եվ Ամանորի նշումը եկեղեցուն հենց նոր տարվա հրաշքն է, օրհնության սկիզբը, որից հետո եկեղեցին նախապատասխանվում է եկեղեցական 5 տաղարկա տոներին՝ Սբ Ծննդյան և Աստվածահայտնության, Սբ Հարության, Վարդավառի, Աստվածածնի վերափոխման և Խաչվերացի տոնակատարություններին՝ դրանց նախորդող ճրագալույցի պատարագների և հաջորդող նմեցեցոց օրերի հիշատակմամբ, ինչպես նաև Սրբոց և Խաչի տոների ճշմամբ... Սրբազանի և դարեր շարունակ հարատևել հայը՝ ապավինած իր ակունքին՝ հավատին, որը ուժ է տվել նրան ու զորացրել: Հիշենք, որ մեր հայրերը մարտից հարթաճանկով վերադառնալիս նախ մտնում էին եկեղեցի, ապա՝ հայրենական օջախ... Ամեն տարի Մեծ պահքի Ավագ շաբաթվա հինգշաբթին յուրահատուկ օր է Ղազանչեցոցում. եկեղեցին նշում է հաղորդության խորհրդակատարությունը՝ կապված Քրիստոսի՝ Վերնատանը տված Ջատկի ընթրիքի հետ, երբ Տերը օրհնեց հացն ու գինին՝ բաժանելով առաքյալներին ու ասելով, որ նրանցից մեկը պիտի իրեն մատնի... Պատարագին հաջորդում է տոնվելի կարգը. ինչպես Հիսուս լվաց իր աշակերտների ոտքերը, նույնպես և Արցախի թեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանն է կատարում նույն կարգը՝ լվալով և յուղով օծելով եկեղեցուն անդամագրված 12 պատանիների ոտքերը՝ որպես խորհուրդ ճշմարիտ ճանապարհով ընթանալու: Իսկ ժողովրդին բաժանվում է օրհնված յուղ՝ զատկական սեղանի համար:

Այնուհետև կատարվում է խավարման գիշերվա արարողակարգը մինչև ուշ գիշեր՝ սրբազանի գլխավորությամբ, որը Քրիստոսի մատնության հիշատակումն է: Հաջորդում են թաղման կարգն ուրբաթ օրվա և շաբաթ օրվա ճրագալույցը, մինչև որ կբացվի Հարության օրվա այգաբացը: Յուրաքանչյուր տարվա Մայիսի 9-ի՝ Հաղթանակի և Շուշիի ազատագրության տոնի նախօրյակին Սրբազանը կատարում է զորապետների և զինվորականների օրհնության կարգ, և բանակը՝ մեր մեծ նեցուկը, հոգեպես

զրահավորված գնում է պաշտպանելու մայր հողը, որի ամեն մի թիզը ներծծված է նրա անվեհեր քաջագունների արյամբ:

Եվ Սրբազան հայրը՝ Արցախի թեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը՝ այդ մշտաթուն հոգևոր առաջնորդը, իր հոգևոր բարձունքից անսասան հավատով ու լավատեսությամբ շարունակ առաջնորդում է ժողովրդին: Շատերի հավաստմամբ՝ նա մի երկնային պարզև է, որ Տերը շնորհել է մաքառումների շնորհիվ իր ամառիկությունը պահած հերոսական երկրին, որ դարեր շարունակ Արցախ է անվանակոչված՝ որպես պատմական Հայաստանի անքակտելի մաս:

Եվ Արցախ աշխարհի թեմակալ առաջնորդ՝ բացառիկ սեր ու հեղինակություն վայելող հոգևորականը, հայոց աշխարհի կարկառուն հոգևոր ներկայացուցիչներից է, ազգային խոշոր գործիչ ու բարության խորհրդանիշ:

Պարզև Սրբազանը բազմազան թեմակալ առաջնորդ է: Գերազանց տիրապետելով օտար լեզուներին՝ նա ստանձնում է և դիվանագետի առաքելություն և կարևոր դեր կատարում Արցախը միջազգային ասպարեզում ներկայացնելու գործում: Նա բանախոս է և բանագետ, և պետական-պաշտոնական ներկայացուցիչները գործում են նրա օրհնությամբ:

2009թ. Արցախում լայնորեն նշվեց թեմի գործունեության 20-ամյակը:

Միջոցառումների շրջանակներում ի մի բերվեց այն ամենը, ինչ կատարվել է եկեղեցաշինության ասպարեզում: Այդ տարիների ընթացքում ինչքան ծավալային գործ է կատարվել և՛ վերանորոգողական-վերականգնողական, և՛ մարդկանց հոգևոր դարձի առումով: Սակայն դեռևս անելիքները շատ են Արցախում. քանի՞ վիրավոր եկեղեցիներ օգոստոսում են հայցում, և դեռ ինչքան ջանքեր պիտի թափվեն մեր ժողովրդին ճշմարիտ հավատի բուն ելքայնը՝ աստվածատուր շնորհին, հաղորդակից դարձնելու և գերծ պահելու այս կամ այն ներմուծվող աղանդներից, որոնք արմատախիլ անելը հանընդհանուր ճակատով հոգևոր և պետական միաձույլ պայքար է:

Տարբեր հեռուստաալիքներով հեռուստադիտողները հետևել են Պարզև Սրբազանի խորհուրդներին և ստացել նոր հորդորներ, իսկ Արցախի հեռուստատեսությամբ եթեր հեռարձակվող՝ «Ճշմարիտ ճանապարհ» խորագրով «Հոգևոր գրույց» հաղորդաշարը շատերի ճշմարիտ ուղենիշն է և հոգեմուցիչ երակը, որի միջոցով հեռուստադիտող տեղեկանում է և՛ առաջիկա տոների ու դրանց նշանակության, և՛ միջ-ու ներեկեղեցական անցուդարձերի մասին: Ճշմարիտ ճանապարհի լուսաբանման էին նվիրված նրա հրամանավոր լույս ընծայված «Գանձասար» աստվածաբանական համարների և այլ պարբերականները:

Այս ամենն, իրոք, ճշմարիտ հավատի իսկական ուղեցույցներ են:

Այսպես 25 տարի շարունակ իր անբասիր գործունեությունն է ծավալում Արցախի թեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, հոգևոր, հասարակական գործիչ, որի շնորհիվ պայքարի հուն մտավ հոգևոր գործունեությունն Արցախում, և որը հենց այն գործիչն է, որի անձնական որակներով, համագործակցելու կարողությամբ Արցախում կյանքի կոչվեցին բոլոր շրջանների խոնարհված ու կրված եկեղեցիները, վերստին բացվեցին հայոց եկեղեցիների դռները, որ 70-ամյա հարկադիր միջոցից հետո ավետեցին և՛ երկնային օրհնությունը. և՛ օրհնությունը հաղթանակի, որ 1700-ամյա Հայ Առաքելական հովանավորությունն առած, որպես վավերական, օրհնության կնիք է դնում Արցախի բոլոր վերակերտվող ու կյանքի կոչվող օջախների վրա:

Վարդիթեր ՀԱՎՈՐՅԱՆ
Շուշիի Խ. Աբովյանի անվան
հիմն. դպրոցի հ. Լեզվի եւ
գրակ. ուսուցչուհի

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑՉԻՆ

ՆՎԻՐՈՒՄԻ ՏԱՐԻՆԵՐ



Լրացավ Արցախի բուհական կրթության երախտավորներից մեկի՝ Ռուդիկ Առաքելյանի ծննդյան 65-ամյակը: Ծնվել է 1949թ. մարտի 3-ին, ԼՂՀ Մարտունու:

մինչև 2008 թվականն աշխատել է ԱրՊՀ մաթեմատիկայի ամբիոնում, դասավանդել է հիմնականում երկրաչափություն և բարձրագույն մաթեմատիկա:

1988թ. «Գրաֆիկական ունակությունների ձևավորումը տվորողների մոտ երկրաչափության ուսուցման գործընթացում» թեմայով պաշտպանել է գիտական թեզ՝ ստանալով մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1996 թվականին նրան շնորհվել է ԱրՊՀ մաթեմատիկայի ամբիոնի, իսկ 2009-ին՝ ՀՀ ԲՈՂ-ի կողմից դոցենտի գիտական կոչում:

Հրատարակել է շուրջ 6 տասնյակ գիտամանկավարժական հոդվածներ և բուհական ձեռնարկներ: Հոդվածների թեմաները վերաբերում են ինչպես դպրոցի, բուհերի երկրաչափությանը, այնպես էլ մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկային:

2008թ. ընտրվել է նշանակվել է մաթեմատիկայի և բնագիտական առարկաների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնում:

2009թ. ԼՂՀ Նախագահի կողմից

պարգևատրվել է «Երախտագիտություն» մեդալով:

2013թ. ԱրՊՀ գիտխորհուրդը Ռ. Առաքելյանին շնորհել է պրոֆեսորի կոչում:

Քանի՞-քանի շրջանավարտների է կյանքի ուղեգիր տվել Ռուդիկ Առաքելյանը, որոնք այսօր մեր նորանկախ հանրապետությունում զբաղեցնում են կրթական համակարգի ամենատարբեր պաշտոններ:

Շուրջ չորս տասնյակ տարիների ընթացքում նա իր աշխատանքին վերաբերվում է ամենայն պատասխանատվությամբ ու սիրով:

Արցախյան գոյամարտի ահեղ տարիներին գիտնական մանկավարժը, գրիչը փոխարինելով գեներով, իր երկու ուսանող որդիների հետ մասնակցել է Ազատամարտին:

Ռ. Առաքելյանը իր ողջ կյանքի ընթացքում մասնագիտական կարողություններն անմնացորդ ի նպաստ է դրել հասարակությանը: Դրա հետ մեկտեղ պակաս կարևոր չեն մարդու մարդկային արժանիքները՝ սերը, բարությունը, հումորը, կարեկցանքը: Ռ. Առաքելյանը լիովին օժտված է նաև այդ հատկանիշներով, և նրան շրջապատող մարդկանց բացարձակ մեծա-

մասնությունը հոգեպես հարստացել է նրա հետ առնչվելուց:

Ռ. Առաքելյանը նախանձեղի համերաշխ ընտանիքի անուսին, հայր և պապիկ է: Նա պահանջկոտ և բժախնդիր է, առաջին հերթին, իր անձի և իր կատարած աշխատանքի հանդեպ. պատահական չէ, որ «Մաթեմատիկական խնդիրների լուծումների գրաֆիկական մեկնաբանությունները» գիրքը 2008 թվականին ԼՂՀ ԿԳՆ-ի կողմից ճանաչվել է լավագույն գիտական աշխատանք և պարգևատրվել պատվոգրով: Ռ. Առաքելյանը շարունակում է եռանդով աշխատել և իրականացնում բազում ծրագրեր ունի:

Շնորհավորում ենք Ռուդիկ Առաքելյանի 65-ամյա հոբելյանը, մաղթում մեր սիրելի գործընկերոջը արևշատություն, բեղուն աշխատանք և հնարավորինս երկար տարիների եռանդ՝ ի փառս մեր երիտասարդ պետության բուհական կրթության կայացման:

ՀԱՄԳ-ի Ստեփանակերտի մասնաճյուղի մաթեմատիկայի ամբիոն

շրջանի Թաղավարդ գյուղում, ուսուցչի ընտանիքում: 1970թ. ավարտել է Աղբյուրների Վ. Ի. Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետի մաթեմատիկայի բաժինը:

Ինստիտուտն ավարտելուց հետո դասավանդող դասախոսների երաշխավորությամբ դասախոսական աշխատանքի է անցել Ստեփանակերտի նորաստեղծ մանկավարժական ինստիտուտում (այդ ինստիտուտի հենքի վրա հետագայում ստեղծվել է ԱրՊՀ-ն): 1970-ից

ՇՏԵՅՆԵՐԻ ԳՆՆՅՈՒՆ ՀԱՎԱՍԱՐԱՐՈՒՄ ՍԵՂԱՆԻ ՀԱՄԱՐ


Ինչպես տեսության շարադրման, այնպես էլ կիրառական տեսանկյունից մեծ հետաքրքրություն են ներկայացնում էքստրեմումի խնդիրները մաթեմատիկայի տարբեր ոլորտներում, ինչպես նաև երկրաչափական բովանդակությամբ խնդիրներում:

«Լուսարար» թերթի 2013թ. թիվ 34 (356)-ում «Ոչ ստանդարտ խնդիրները դպրոցական մաթեմատիկայի դասընթացում» հոդվածում սեղանի վրա դրված են մի քանի խնդիրներ (խնդիր 7, 8, 9) էքստրեմումի վերաբերյալ, որոնց օրգանական շարունակությունն են կազմում ներքոհիշյալ խնդիրները:

Խնդիր. Տրված է $2a$, $2b$ հիմքերով և c բարձրությամբ հավասարաբար սեղան ($b < a$): Կառուցել Շտեյնների ցանցը նշված սեղանի համար:

Հիշեցնենք, որ Շտեյնների ցանցը ուղղի հատվածներից կազմված բեկյալն է, որը միացնում է սեղանի գագաթները:

Խնդիրն ունի կիրառական բնույթ: Թող A, B, C, D կետերը քաղաքներ են: Պահանջվում է կառուցել քաղաքները միացնող ճանապարհների ցանց, այնպես, որ այն ունենա ավելի փոքր երկարություն, քան սեղանի անկյունագծերի գումարը:



Լուծում: Ենթադրենք ցանցի օղակները բաղկացած են հիմքերի նկատմամբ α անկյան տակ տարված m, p և համաչափության առանցքի EF հատվածներից:

Հաշվենք ցանցի բեկյալների երկարությունների գումարը՝ արտահայտված սեղանի տվյալներով և α անկյունով:

$$m = \frac{b}{\cos \alpha}; \quad p = \frac{a}{\cos \alpha};$$

$$EN = b \cdot \operatorname{tg} \alpha; \quad FM = a \cdot \operatorname{tg} \alpha;$$

$$EF = c - (a+b) \operatorname{tg} \alpha;$$

$$r = 2m + 2p + EF = \frac{2a}{\cos \alpha} + \frac{2b}{\cos \alpha} + c - (a+b) \operatorname{tg} \alpha = (a+b) \left[\frac{2a}{\cos \alpha} - \operatorname{tg} \alpha \right] + c:$$

$r = r(\alpha)$: Սեղ հետաքրքրում է α -ի այնպիսի արժեք, որի դեպքում r -ը կընդունի փոքրագույն արժեք:

$$r'(\alpha) = (a+b) \left[\frac{2 \sin \alpha}{\cos^2 \alpha} - \frac{1}{\cos^2 \alpha} \right] = 0; \quad \frac{2 \sin \alpha - 1}{\cos^2 \alpha} = 0; \quad \sin \alpha = \frac{1}{2}; \quad \alpha = 30^\circ;$$

$$r(30^\circ) = (a+b) \left[\frac{2}{\sqrt{3}/2} - \frac{\sqrt{3}}{3} \right] + c = (a+b) \left[\frac{4}{\sqrt{3}} - \frac{\sqrt{3}}{3} \right] + c = (a+b) \frac{3}{\sqrt{3}} + c = \sqrt{3}(a+b) + c:$$

Սեղանի երկու անկյունագծերի երկարությունների գումարը հավասար է $2\sqrt{(a+b)^2 + c^2}$: Այս մեծությունը համեմատենք ցանցի r երկարության հետ:

$$2\sqrt{(a+b)^2 + c^2} * \sqrt{3}(a+b) + c:$$


Երկու մասը բարձրացնենք քառակուսի.

$$4(a+b)^2 + 4c^2 * 3(a+b)^2 + 2\sqrt{3}(a+b)c + c^2;$$

$$(a+b)^2 + 3c^2 * 2\sqrt{3}(a+b)c:$$

Երկու թվերի միջին թվաբանականի և միջին երկրաչափականի առնչության համաձայն՝ $(a+b)^2 + (\sqrt{3}c)^2 \geq (a+b) \cdot \sqrt{3}c$: Այսպիսով՝ $2d > r$:

Այժմ դիտարկենք Շտեյնների ցանցը ոչ հավասարաբար սեղանի համար:



Թող $ABCD$ սեղանի AD սրունքը մեծ է CB սրունքից: Կառուցենք DK -ն հավասար CB -ին: Կստանանք $DKBC$ հավասարաբար սեղանը, որի համար կկառուցենք Շտեյնների ցանցը, նախորդ գծագրի համաձայն:

Ըստ մեր ենթադրության, ոչ հավասարաբար սեղանի ցանցը կազմված է $DKBC$ հավասարաբար սեղանի ցանցին

ավելացված KA հատվածը: Նման պնդումն ապացուցելու համար պետք է ցույց տալ, որ ոչ հավասարաբար սեղանի AC և DB անկյունագծերի երկարությունների գումարը մեծ է նշված Շտեյնների ցանցի երկարությունից:

Քանի որ $KBCD$ -ն հավասարաբար սեղան է, ապա Շտեյնների ցանցի երկարությունը հավասար է՝ $r = \sqrt{3}(a+b) + c$: Իսկ $ABCD$ սեղանի համար այն կունենա՝

$$r' = \sqrt{3}(a+b) + c + s \text{ երկարությունը:}$$

$$DB = d = \sqrt{(a+b)^2 + c^2}; \quad AC = d' = \sqrt{s^2 + d^2 - 2sd \cos \varphi}; \quad \varphi = \text{Const};$$

$$d'' = \sqrt{s^2 + d^2} < d', \text{ որովհետև } (-\cos \varphi) > 0:$$

$$d'' + d = \sqrt{s^2 + (a+b)^2 + c^2} + \sqrt{(a+b)^2 + c^2}:$$

Այժմ պետք է ապացուցենք, որ ոչ հավասարաբար սեղանի անկյունագծերի երկարությունների գումարը մեծ է Շտեյնների ցանցի երկարությունից, այսինքն՝

$$\sqrt{s^2 + (a+b)^2 + c^2} + \sqrt{(a+b)^2 + c^2} > \sqrt{3}(a+b) + c + s;$$

$$\begin{cases} \sqrt{s^2 + (a+b)^2 + c^2} > c + s \\ \sqrt{(a+b)^2 + c^2} > \sqrt{3}(a+b) \end{cases} \rightarrow \begin{cases} s^2 + (a+b)^2 + c^2 > c^2 + 2cs + s^2 \\ (a+b)^2 + c^2 > 3(a+b)^2 \end{cases} \rightarrow \begin{cases} (a+b)^2 > 2cs \\ c^2 > 2(a+b)^2 \end{cases};$$

$$c^2 > 2(a+b)^2 > 4cs \Rightarrow s < c/4:$$

Ստացանք ոչ հավասարաբար սեղանների մի դաս, որի համար ճիշտ է Շտեյնների թեորեմը: Նման սահմանափակումը բացատրվում է նրանով, որ դիտարկել ենք ոչ հավասարաբար սեղանի անկյունագծերի երկարությունների գումարից ավելի փոքր մեծություն, որովհետև անտեսել ենք $(-2sd \cos \varphi)$ դրական գումարելին: Իրականում թեորեմը ճիշտ է c -ի և s -ի կամայական առնչության դեպքում:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԺՆՈՒՄ

Մարտունու շրջվարչակազմի կրթության բաժնի հերթական խորհրդակցությունը նվիրված էր առարկայական օլիմպիադայի շրջանային փուլի արդյունքներին: Ներկա էր շրջվարչակազմի ղեկավար Նելսոն Սողոմոնյանը, մասնակցում էին շրջանի հանրակրթական դպրոցների տնօրենները: Այն վարում էր շրջվարչակազմի աշխատակազմի կրթության բաժնի վարիչ Զորիկ Դուլյանը:

Օլիմպիադայի շրջանային փուլի արդյունքների վերլուծությամբ հանդես եկավ բաժնի վարիչի տեղակալ Գեորգի Ակիկյանը: Շրջանային փուլին մասնակցել են 30 դպրոցների 217 աշակերտներ՝ 13 առարկաներից, որոնց մասնակցությունը կազմում է 332 աշակերտ (կան աշակերտներ, ովքեր մասնակցել են 2 և ավելի առարկաներից):



Շրջանային փուլի արդյունքներով 1-ին տեղը զբաղեցնում է Ճարտարի հ. 1 ավագ դպրոցը՝ 25 պարգևատրվածներով: 10 հոգի՝ 1-ին տեղ, 13՝ 2-րդ տեղ և 2՝ 3-րդ տեղ: Երկրորդ տեղում Մարտունու հ. 1 հոսքային դպրոցն է՝ 17 պարգևատրվածներով: 1-ին տեղ՝ 8 հոգի, 2-րդ տեղ՝ 4 հոգի, 3-րդ տեղ՝ 5 հոգի: Միջնակարգ և հիմնական դպրոցների շարքում 1-ին տեղը զբաղեցնում է Բերդաշենի միջնակարգ դպրոցը՝ 11 պարգևատրվածներով, 1-ին տեղ՝ 4 հոգի, 2-րդ տեղ՝ 5 հոգի, 3-րդ տեղ՝ 1 հոգի: 2-րդ տեղում Գեորգի դպրոցն է՝ 9 մրցանակային տեղով, 1-ին տեղ՝ 2 հոգի, 2-րդ տեղ՝ 4 հոգի, 3-րդ տեղ՝ 3 հոգի: Մարտունու հ. 2 դպրոցը 3-րդն տեղում է՝ ընդամենը մեկ պարգևատրվածով: 8 մրցանակային տեղ, 1-ին տեղ՝ 2 հոգի, 2-րդ տեղ՝ 4 հոգի, 3-րդ տեղ՝ 3 հոգի: 4-րդ տեղում Գիշու միջնակարգն է՝ 7 մրցանակային տեղ, 1-ին տեղ՝ 5, 3-րդ տեղ՝ 2 հոգի: Կան դպրոցներ, որոնց ակտիվությունը նախորդ տարիների համեմատ նկատելի է՝ Խնուշիակի, Սպիտակաշենի, Թաղավարի դպրոցները:

Այնուհետև բանախոսը մանրամասն վերլուծեց մասնակցությունն ու արդյունքներն ըստ առարկաների: Նշվեց, որ չնայած նախորդ տարվա համեմատությամբ առաջընթաց նկատելի է, սակայն արձանագրված ցուցանիշներն այնքան էլ գուհացուցիչ չեն: Կա ավելի մեծ ներուժ, որն օգտագործելով կարելի է ավելի բարձր արդյունքներ ստանալ: Կան դպրոցներ, որոնք չեն մասնակցել օլիմպիադային, ինչն անընդունելի համարվեց:

Արդյունքում՝ 49 մասնակից ընդգրկվել է հանրապետական փուլին: Այստեղ ևս շրջանի սովորողների մասնակցությունն ու ակտիվությունը նկատելի ու բարձր է:

Կրթության բաժնի վարիչ Զ. Դուլյանը նշեց, որ այն դպրոցները, որոնց արդյունքները ցածր են, խորհելու տեղիք են տալիս, քանի որ օլիմպիադան աշակերտների գիտելիքների ստուգման ձև է: «Մոտեցումը պետք է լուրջ և պատասխանատու լինի, քանի որ մենք ենք պատասխանատու սերնդի դաստիարակության, գիտելիքների պատշաճ մակարդակի ու նրա բարձրացման համար: Ապագա լավ մասնագետի հիմքը մենք ենք դնում: Միաժամանակ օլիմպիադաները լավ հնարավորություն են երեխաների՝ միմյանց հետ շփվելու և միմյանցից սովորելու համար»,- ասաց նա: Անընդունելի համար-

վեց ՆԶՊ-ից դպրոցների պասիվ մասնակցությունը: Ռազմաօդային տեսչական գրաստիարակության հիմքը ֆիզիկական պատրաստվածությունն է, և մտածել, թե գյուղում մեծացող երեխան կարող է այս առումով թույլ լինել՝ անընդունելի է: Նշվեց, որ դա պայմանավորված է ֆիզկուլտուրայի ուսուցիչների կողմից իրականացվող թույլ աշխատանքով: Բավականին լուրջ խնդիրներ կան ոլորտում, որոնց վերահսկման և վերացման գործում ամենամեծ գործը պիտի անեն հենց ուսուցիչները, ովքեր անմիջական շփվողն ու աշխատանքներն իրականացնողներն են: Սակայն այս առումով նկատելի ակտիվություն չկա: Բաժնի վարիչն ակտիվության և սրտացավության կոչ արեց, քանի որ անտարբերությունը բերում է նոր ու ավելի լուրջ սխալներին:

Շրջվարչակազմի ղեկավար Ն. Սողոմոնյանն օլիմպիադայի արդյունքների վերաբերյալ իր գոհունակությունը հայտնեց և շնորհավորեց ներկայներին, ասելով, որ հաջողություններն ինքնահանգստացման տեղիք չպետք է տան, այլ մղեն նոր ձեռքբերումների, քանի որ առաջ գնալու համար ներուժը մեծ է: Դրանք մեծապես կախված են տնօրենների աշխատանքից: Ն. Սողոմոնյանը շեշտեց, որ դպրոցի տնօրենն առաջին հերթին պետք է լավ բարձրորակ մասնագետ-մանկավարժ լինի, բազմակողմանի զարգացած ու դպրոցի աշխատանքները համակարգելու համար բոլոր գործառույթներին քաջ գիտակ: Դպրոցի տնօրենի աշխատանքը պետք է երևա օլիմպիադայի արդյունքում:

Կան փոքր դպրոցներ, որոնց աշակերտները բարձր ցուցանիշներ են գրանցել, ինչը ևս արժանի է ուշադրության: Անհրաժեշտ համարվեց ուշադրություն ավելի շատ կենտրոնացնել տեխնիկական առարկաներին, որտեղ համընդհանուր թուլություն է նկատվում: Դպրոցների տնօրենները հիմնականում տեխնիկական առարկաների մասնագետներ են, ինչը ևս պետք է նպաստավոր լինի այս հարցում: Երկրի, բանակի վաղվա օրն ու հիմքը դրվում է դպրոցում, ու այս առումով լուրջ պատասխանատվություն կա: Ռազմաօդային տեսչական դաստիարակության բարձր որակ ապահովելու դեպքում վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ պետք է զմեն հնարավորինս շատ ու գիտելիքների բարձր մակարդակ ունեցող սովորողներ: Առարկայական օլիմպիադաների և միասնական քննությունների արդյունքներից պարզ երևում է ուսուցիչների կատարած աշխատանքը, որի հիման վրա էլ պետք է կատարվի ժամաբաշխումը՝ լավ ուսուցիչը ապահովվի ավելի շատ ժամաբանակով: Անկախության 20 տարվա կտրվածքով ունեցած ձեռքբերումները քիչ չեն, սակայն անելիքներն էլ անաչափ զգալի են, ինչը պիտի իրականացվի արդարացի մոտեցմամբ: Այն պետք է հիմնավորվի դպրոցում: Բանակ, հասարակություն մտնի կազմակերպված վարքով, բարձր գիտելիքներով կայացած մարզը:

Ն. Սողոմոնյանն անդրադարձավ թռչակային տարիքի ուսուցիչների թռչակային անցնելու խնդիրն, այն համարելով պարտադիր, բացառությամբ գյուղական համայնքների, որտեղ առկա է մասնագետների պակաս: Հաստիքները կիսելը նույնպես պետք է բացառել: Մեջբերելով ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը՝ նա ասաց, որ մեր երկրի հզորության ապահովման հիմքը պետք է դրվի դպրոցում: Այս հարցում շահագրգռվածությունը և օժանդակությունը պետք է լինեն բոլորի կողմից: Սա համարեց նաև իր ընտրած քաղաքականության հիմքը, որը վարում է շրջանի ղեկավարման առաջին իսկ օրից:

Կարինե ԳԱՐԱՍՅԱՆ

ԱՌԱՋԻՆ ՏՈՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԲՆՆՈՒԹՅՈՒՆ

Մարտունու Արամ Խաչատրյանի անվան երաժշտական դպրոցը գեղեցիկ ավանդույթներ ունի: Յուրաքանչյուր հիշարժան օր այստեղ դպրոցի ուսուցիչների և սաների ուժերով վերածվում է աներկայելի գեղեցիկ տոնի, որից և սովորողն է շահում, և սովորեցնողը: Էլ չենք խոսում ծնողների մասին:

Նշանակալից են նաև սովորողների ուսման ընթացքում ունեցած ձեռքբերումները, որոնք նշվում են շուրջով ու հպարտությամբ:

Դպրոցում գործում են երգեցողության և ձայնի մշակման, դաշնամուրի, քամանջայի, դիլի, ակորդեոնի, քանոնի, կլարնետի դասարաններ:

Երաժշտական դպրոցը մեծ դեր է խաղում երեխաների երաժշտական ունակությունների ձեռքբերման ու զարգացման գործում, կրթում նրանց որպես մաքուր, իսկական երգ-երաժշտության սիրահար և գիտակ:

Անդրադառնալով 135 աշակերտական կազմ ունեցող դպրոցի գործունեությանը, ասեն, որ ներդրողական միջոցառումներ էլ են կազմակերպվում այստեղ, որոնց շարքում առանձնահատուկ տեղ ունի պատանի երաժիշտների նորամուտը, այլ կերպ՝ Նոտայի տոնը, երբ արդեն յուրացրել են երաժշտության այբուբենը՝ նոտաները և տոնում են իրենց ձեռքբերումը: Տոնն այս առանձնահատուկ դեր ունի յուրաքանչյուր սանի կյանքում: Նրան առանձնահատուկ սիրով ու ակտիվությամբ են մասնակցում բոլորը:

Մարտի 5-ին Նոտայի տոն էր դպրոցի 21 առաջին դասարանի սանիկների համար: Ուրախությունն ու հրճվածքն իշխում էր բոլորին: Ներկա էին նաև ծնող-



ներ, ովքեր իրենց բալիկների հետ միասին ուրախանում էին նրանց առաջին թրթռվածքով, ինքնուրույն ու լուրջ առաջին քայլերին ակամատես լինում: Սա նաև ինքնատիպ քննություն էր, առաջին լուրջ փորձությունը:

Շնորհավորանքի ու բարենախառնքի բազմաթիվ խոսքեր լսեցին երեխաները, իսկ ամենաոգևորողն ու թևավորողը տնօրեն Ալվինա Սիրոգյանի խոսքերն էին:

Շնորհավոր ձեր տոնը, սիրելի բալիկներ: Ու թող օրվա հրճվածքը տարածվի ձեր ապագա կյանքի վրա:

Կ. ԳԱՐԱՍՅԱՆ

ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԽՈՍՔ

Ազգի մտավոր ու կարող ուժերը պետք է աշխատեն բարձր մակարդակի հասցնել ազգի հոգևոր ուժը, որը ծնունդ է գերկարողություններ, և այդ ուժը գիտելիքի մեջ է: Քանզի իզուր չէ ասված. «Ամենագործը ուժը գիտելիքն է»:

Գիտելիքը մարդուն կշիռ է տալիս, իսկ արարքը՝ փայլ: Եվ պատահական չէ, որ գիտակրթական յուրաքանչյուր կոլեկտիվ ինտելեկտի փոխանցման կողմն է, իսկ նրանց միավորող պրոֆեսիոնալ նպատակներն ու պատասխանատվությունները նույնն են՝ ճշգրտություն, արդարություն և սերնդի դաստիարակություն:

Այդ համատեքստում կցանկանայի առանձնահատուկ շեշտարժանք հիշատակել Արցախի կրթական կառույցների դերը, այդ թվում՝ Ստեփանակերտի հ. 5 հիմնական դպրոցի տնօրինության և ուսուցչական կոլեկտիվի ունեցած դերակատարումը:

Գործի հիմնություն, նվիրում սիրած գործին, փոխադարձ սեր ու հարգանք, կարգապահություն, նրբանկատություն, գիտելիքի հարուր պատշաճի սերմանում... Որդեգրած այս քաղաքականությանը ու կարգախոսով նրանք լիարյուն ջիղ ու աշխատանք են իրականացնում արցախյան հայուհի և հայագրի գինվոր դաստիարակելու անշահախնդիր գործում: Հատկապես կցանկանայի ընդգծել 3-րդ «ա» դասարանի դասվար Գոհար Ավանեսյանի և 1-ին «ա» դասարանի դասվար Ռենա Օհանյանի բարեխիղճ ու անդուլ գործունեությունը:

Մեսրոպյան գիր ու գրականություն են ուսուցանում և մեր ուկերեցիկ մայրենիով գերում ու հրապուրում իրենց սաներին: Նրանց ամեն դաս յուրահատուկ ստեղծագործություն է: Հուզել և հուզվել, դասավանդվող թեմայով ապրել ու ապրեցնել գիտեն: Որքան ջերմություն ու խիճը, քնքառն ու զգվանք կա նրանց վերաբերմունքում: Կցանկանայի իմ գոհունակության ու շնորհակալանքի խոսքն ուղղել վերոհիշյալ մանկավարժներին, Ստեփանակերտի հ. 5 հիմնական դպրոցի տնօրինությանը, ուսուցչական ողջ կոլեկտիվին՝ գերազանց աշխատանքի:

ԵՐԱՄՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԳՆՈՒՄՈՎ

Ինչպես ասեն տարի, այս անգամ էլ հայ բանասիրության և լրագրության 4-րդ կուրսում կազմակերպվեց ակտիվ փորձուսուցում: Այն անցկացրինք Ստեփանակերտի Ավ. Իսահակյանի անվան հ. 10 հիմնական դպրոցում: Համալսարանում ստանալով համապատասխան ցուցումներ՝ փորձուսուցման ղեկավար Ս. Հայրապետյանի և հայրը լեզվի և գրականության մասնագետներ տիկին Հասարայանի և տիկին Լալայանի ուղեկցությամբ գնացինք դպրոց: Այնտեղ տիրող մթնոլորտը ջերմ էր և տրամադրող: Կցվեցինք տարբեր դասարանների: Դպրոցի հայրը լեզվի և գրականության ուսուցիչներ Զ. Հովսեփյանի, Ա. Գաբրիելյանի, Ա. Իմանցի, Լ. Անդրյանի, Ս. Արարյանի, Ս. Թովմասյանի և մեր անմիջական ղեկավարների օգնությամբ մենք՝ ապագա մասնագետներ, բացառապետեցինք մանկավարժության զարդաները ու հասկացանք ուսուցիչների առաքելության կարևորությունը:

Շատերի համար փորձուսուցումը խթան էր հենց իրենց ճանաչելու և մեկ անգամ ևս հանդգնելու, որ տարիներ առաջ կայացրած որոշումը ճիշտ էր ու տեղին: Լինել կոչումով ուսուցիչ՝ նշանակում է լինել ապագայի խնամակալ ու դաստիարակը, լինել հայերենի ուսուցիչ՝ նշանակում է լինել հայեցի դաստիարակության ու հայի տեսակի պահպանման ջատագովը:

Ողջ կուրսի անունից մեր երախտագիտության խոսքն ենք հայտնում հ. 10 դպրոցի մանկավարժական կազմին ու կրթության երախտավորներին:

Շնորհակալ ենք այս կարճ ժամանակամիջոցում ձեր հարուստ մանկավարժական փորձը մեզ ավանդելու համար:

Դպրոցից հեռացանք ջերմ տպավորություններով, և որ ամենակարևորն է՝ մանկավարժի կեցվածքով ու պատրաստակամությամբ ստանձնելու այդ անձնավոր գործը:

ԱրՊՀ հայ բանասիրության և լրագրության հայրը լեզու և գրականության բաժնի 4-րդ կուրսի ուսանողներ

ՈՒՍՈՒՑՈՂԱԿԱՆ

ЕДИНОЕ ИНФОРМАЦИОННОЕ ПРОСТРАНСТВО ШКОЛЫ-НЕОБХОДИМОЕ УСЛОВИЕ ВНЕДРЕНИЯ ИННОВАЦИОННЫХ ИНФОРМАЦИОННО-КОММУНИКАТИВНЫХ ТЕХНОЛОГИЙ В ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ

Учителя, берегите детских огонек пылливости, любознательности, жажды знаний!
Через игру, через фантазию, через неповторимое детское творчество путь к сердцу ребенка

В. Сухомлинский

Современная система образования дает возможность выбирать и организовывать педагогический и воспитательный процесс, используя различные инструменты и элементы информационных и коммуникативных технологий.
Сегодняшняя школа должна стать передовой площадкой в части информационных технологий, местом, где человек получает не только необходимые знания, но и способствует формированию поликультурной и мультилингвальной личности, способной интегрироваться в современное межкультурное пространство с дальнейшим расширением сферы своей деятельности.
Без применения информационно-коммуникативных технологий образовательное учреждение не может претендовать на инновационный статус в образовании.
Ведь инновационным считается образовательное учреждение, широко внедряющее в образовательный процесс организационные, дидактические, технические и технологические инновации и на этой основе добивающееся реального увеличения темпов и объемов усвоения знаний и качества подготовки специалистов.

Известный американский педагог Ф. Шлехти в книге "Школа XXI века" писал: "Если ученик знает, как учиться, способен достигать цели, если он умеет работать над книгой, получать знания от учителя, искать и находить необходимую информацию, то ему легче поднять свой уровень".
Учитель, работая с классом, просто физически не в состоянии уделять каждому максимум внимания.
В процессе приобретения знаний, умений и навыков не менее важная роль принадлежит самому ученику.
Последний просто-напросто должен захотеть их приобрести, в противном случае прерывается цепочка в учебно-познавательном процессе, что чревато негативными последствиями.

Интерактивные технологии активно входят в нашу жизнь, превращая обычное в необыкновенное.
Они позволяют учителю развивать не только умственные способности, но и их креативное мышление, применять различные приемы и способы развития когнитивных функций учащихся.
Одной из инноваций в образовании являются интерактивные электронные доски с

использованием компьютеров и новейших педагогических программных средств.
Интерактивные доски как электронные экраны, подключенные к компьютеру, позволяют проводить не только презентации, доклады и семинары, но и групповое обучение в классе (интерактивный метод обучения) с использованием самых различных демонстраций.

Итак, новые подходы в обучении требуют новых характеристик в практике учителей.
Но вот встает вопрос: если инновационные процессы в образовании так положительно сказываются на гуманизации и индивидуализации подрастающего поколения, то почему одна часть человечества в лице педагогов упорно стоит на старых традиционных методах обучения.
Считаю, что таким учителям стоит пересмотреть собственную модель поведения, а не проводить свою педагогическую деятельность в относительной изоляции, от чего могут пострадать целые поколения.
Готовность к переменам-главная отличительная черта хорошего учителя, а великая цель образования-это не знания, а действия на основе полученных знаний!
Уметь принимать самостоятельные решения, критически оценивать содержание обучения и оперативно обновлять и изменять свой план, стать более коммуникабельным и открытым, овладеть современными технологиями, побольше читать специальной литературы, быть гибким, обмениваться опытом-вот каким должен быть хороший учитель!
Необходимо переломить авторитарность образования в мышлении педагогов, чтобы они смогли дать ребенку возможность адекватно управлять собой и окружающим миром.
Нет, мы не критикуем полностью прежнюю систему образования, ведь много хорошего перенято именно оттуда, мы (мое поколение точно) испытываем ностальгию по 10-летней школе.
Повышение срока обучения в наших школах стало актуальной темой для родителей и учителей, породив множество вопросов и споров.
(думаю, стоит пересмотреть вопрос о переходе на 10-летний срок обучения).
Все большую значимость приобретает в настоящее время одна из личностно-ориентированных технологий-Языковой портфель-Портфолио.
Это так называемый "Портфель ученика", т.е., "портфель его личных достижений".
Суть этой технологии-в развитии рефлексии (самонаблюдения, самоконтроля, самокоррекции, самооценки), сознательного и ответственного отношения к учению.
В Европе "языковой портфель" был создан по инициативе Совета Европы и

получил название "Европейский языковой портфель" (ЕЯП), на основе чего были разработаны модели ЕЯП для разных стран.
Портфолио состоит из трех частей: "Языковой паспорт", "Языковая биография" и "Досье".
Теперь рассмотрим структуру ЕЯП в отдельности.

"Языковой паспорт" представляет собой отдельный документ, в который ученик вписывает данные о себе и изучаемых им языках.
В нем содержится таблица самооценки, которая заполняется учеником для обозначения своего уровня обученности по видам речевой деятельности,

Вторая часть-"Языковая биография, где содержатся листы для самооценки, которые сгруппированы по уровням владения иностранным языком: а именно А, В, С (три категории с 6-ю подвидами).
А1-"Уровень выживания" А2-"Пороговый уровень" В1-"Пороговый уровень" В2-"Пороговый продвинутый" С1-"Высокий уровень" С2-"Уровень владения в совершенстве".
Двигаясь от уровня к уровню, поднимаясь выше в овладении иностранным языком, ученик делает определенные заметки в листах для самооценки.

"Досье"-папка достижений ученика, в которую он складывает свои лучшие творческие работы (сочинения, рефераты, аннотации, отчеты, проекты и т.д.).
Отметим, что есть и армянская версия ЕЯП, которая создана в ЕЛГУ им. В.Брюсова (2005г.) доктором пед. наук. М.Г.Аствацатрян совместно с рядом ученых того же университета.

Такая технология действительно способствует развитию рефлексии, требует от учащегося ответственного самокритичного отношения к оценке своего труда, позволяет отслеживать свой рост в соответствии с заданной перспективой.

Завершая статью, приведем слова великого Сухомлинского: "Если у нормального человека ни в одной сфере нет достижений, а в школе не было любимых предметов, можно считать школу мнимой величиной".
Я более чем уверена, что у наших учеников будут достижения в жизни и много любимых предметов"!
Статья полностью была озвучена в ЕГЛИ им. В.Брюсова на II Международной научной конференции, посвященной 75-летию I выпуска двухгодичного пединститута (2013г.)

Гаянэ ОСИПЯН
Организатор по воспитательной части школы №3, аспирант IV курса АРГУ

Հնորհավորանք

ԻՐ ԳՈՐԾԻ ՆԿԻՐՅԱԼԸ



Աշակերտական, ուսուցչական, ծնողական և ընկերական կոլեկտիվների սերն ու հարգանքը վայելելու համար անհրաժեշտ է օժտված լինել մանկավարժական մեծ ունակությամբ:

Հենց այդպիսի տվյալներով է օժտված Հայրուքի Միք. Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցի դասվար Ջենմա Գասպարյանը:

Ծնվել է 1954թ մարտի 26-ին, Հայրուք քաղաքում: 1977թ. ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի «Մանկավարժություն և տարրական մեթոդիկայի» հեռակա

բաժինը:

1975-1977 ուստարում աշխատել է Արևշատի միջնակարգ դպրոցում, 1978թ.՝ Այգեստանի 8-ամյա դպրոցում:

1988 թվականից աշխատում է Հայրուքի միջնակարգ դպրոցում՝ որպես դասվար: Դասվարի աշխատանքը կատարում է մեծ հաճույքով ու բարձր պատասխանատվությամբ: Նա գիտի մանուկների սիրտը տանող ճանապարհը, որի շնորհիվ էլ շատ կարճ ժամանակամիջոցում դառնում է նրանց համար երկրորդ մայր:

Նա իր յուրաքանչյուր դասը վարում է խանդավառված՝ խանդավառելով նաև իր սաներին: Նրա վարած դասը ոչ այլ ինչ է, եթե ոչ ինքնամոռաց նվիրում: Եվ նա յուրաքանչյուր դասի իր աշակերտների առջև բացում է թե՛ մայրենիի, թե՛ մաթեմատիկայի և թե՛ մյուս առարկաների անբավ հարստությունները:

Նա նրբանկատ հոգեբան է: Նրա խստապահանջությունը զուգակցվում է մայրական հոգատարության հետ:

Բանիմաց ու ողջախոհ ուսուցչուհին բազում հետաքրքիր ու բովանդակալից դասերի, միջոցառումների հեղինակ է: Նա անմնացորդ սիրով ու նվիրումով է լցված իր սաների համդեպ:

Քանի՞ սերունդ է տառաճանաչ դարձել նրա քրտնաջան աշխատանքի շնորհիվ. չէ՞ որ գիտելիքների աշխարհի տանող դուռը միշտ բացվում է առաջին ուսուցչի շնորհիվ, որն իր սաներին մետրոպայան գիր ու գրականություն է ուսուցանում, գերում ու հրապուրում նրանց մեր ոսկեդեմիկ մայրենիով:

Սիրելի՛ գործընկեր, շնորհավորելով 60-րդ զարունդ, մաղթում ենք բազում զարուններ: Թող զարնան թարմությամբ լցվի քո ամեն մի օր:

Հաջողություն քո հետագա գործունեության մեջ և կյանքի երջանիկ պահեր:

Հայրուքի Միքայել Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՍԵՐ ՈՒ ՀՆՎԱՏ ԼՈՒՄԱՆՈՂ ԱՊՐԱԳՅԻ ՆԿԱՏՄԱՐ



Յուրաքանչյուր մանկավարժ, ընտրելով իր սուրբ մասնագիտությունը, սիրով ու հավատով է լցվում ապագայի հանդեպ՝ ուշադրության կենտրոնում պահելով մատաղ սերունդին, համարելով նրանց կյանքի անուշաբույր ծաղիկները: Լուսաշող ապագայի մասին սեր ու հավատով է զինված Ստեփանակերտի Ա. Գրիբոյեդովի անվան հ. 3 միջնակարգ դպրոցի դասվար Սուսաննա Վանյանը:

Ծնվել է 1959թ. մարտի 4-ին, բանվորի ընտանիքում: Մանկուց դաստիարակվել է դպրոցի նկատմամբ լավագույն հավատով: Ավարտելով Ա. Սախարովի անվան հ. 8 միջնակարգը՝ ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի «Մանկավարժություն և տարրական կրթության մեթոդիկա» բաժինը: Աշխատել է մանկական գրադարանում, այնուհետև՝ Պիոներների տանը: 1985-ից առայսօր աշխատում է հ. 3 միջնակարգ դպրոցում:

Ուսուցչուհին խոստովանում է, որ անչափ սիրում է իր աշխատանքը, պաշտում էրեխաներին:

Ս. Վանյանը խստապահանջ է իր նկատմամբ, պարբերաբար աշխատում է նոր ձեռքբերումների ուղղությամբ: Նրա կազմակերպած յուրաքանչյուր դաս և դաս-միջոցառում գրավում է ունկնդիրների ուշադրությունը:

Ս. Վանյանը սիրված կին է, սիրասուն մայր, հոգատար տատիկ:

Հ. 3 միջնակարգ դպրոցի ուսուցչական կոլեկտիվն ի սրտե շնորհավորում է նրան՝ ծննդյան 55-ամյակի կապակցությամբ: Ցանկանում ենք, որ զարնանաբույր ու արևաշող այս օրը նրան պարզև բաջառողջություն, անբազմից նրա հավատն ու սերը լուսառատ ապագայի հանդեպ և հաջողությունների անվերջ շարան:

Ստեփանակերտի Ա. Գրիբոյեդովի անվան հ. 3 միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՀԱՅՐԵՆՅԱՑ ՊԱՇՏՊԱՆ

ՓԱՌԱՏՈՆԸ՝ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՐՄ ՊԱՆԵԼՈՒ ԶՈՐԱՎՈՐ ՄԻՋՈՑ

Հայրենասիրությունը բոլոր ժամանակներում տվյալ պետության գոյացման ու կայացման հենաքարն է, իսկ մեր նորանկախ պետության համար՝ ոչ միայն հենաքար, այլև ազգային-պան ու աշխարհաճանաչման, պետականաշինության, հայրենամեծի հիմնական ու գերակա նախադրյալ:

Մեր պայքարը դեռևս ավարտված չէ: Մենք մեր միտքն ու պայքարելու, լիակատար հաղթանակ նվաճելու զգացողությունները պետք է արթուն պահենք և թարմացնենք մեր հայրենասիրական գործունեությանը ու ազգային արժեքներին, մեր ազգային ավանդույթներին հավատարիմ մնալու գաղափարախոսությամբ առաջնորդվելով:

Մատաղ սերնդի հիշողությունը թարմ, ազգային ոգին բարձր պահելու համար կարևորվում է նրա հետ տարվող աշխատանքների, միջոցառումների հայեցի ոգով ու գաղափարախոսությամբ դաստիարակության հարցը: Այդ է պատճառը, որ ազգասիրական միջոցառումները գերակշռում են թե՛ դպրոցներում և թե՛ երիտասարդության հետ կազմակերպվող ցանկացած ծրագրում:

Այդ նպատակին էր միտված Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի և զբոսաշրջության բաժնի կողմից կազմակերպված հայրենասիրական երգերի փառատոնը:

Փառատոնը մեծ խորհուրդ ունի հատկապես փետրվար ամսվա առումով: Փետրվարին է սկսվել 88-ի Արցախյան շարժումը, փետրվարին է ծնվել հայ ազատագրական շարժման առաջնորդ, մեծ զորավար Անդրանիկ Օզանյանը, ում, իրավամբ, կարելի է համարել մեր ազգային-ազատագրական պայքարի ոգին: Փետրվարի 20-ին է կայացել ԼՂ մարզխորհրդի 88-ի պատմական նիստը:

Փետրվարի 23-ը Հայրենյաց պաշտպանի օրն է:

Հայրենասիրական երգերի փառատոնն իր էությանը հայրենասիրության դաս է. այն ուրույն ձև է՝ հայրենիքի, սեփական ժողովրդի, հարազատ դպրոցի նկատմամբ նվիրվածությունն ու անսահման սերն արտահայտելու: Այն սերունդների միտքը, հիշողությունը թարմ պահելու գործվոր միջոց է: Հայրենասիրական երգերի փառատոնը մարտահրավեր է՝ ուղղված աշխարհին, ճանաչելու մեզ, մեր ժողովրդին, մեր անկախ պետությունը: Այն կոչված է հայրենասեր սերունդ դաստիարակելու, գեղեցիկ խոսելու, երգելու, պարելու և վերջապես, ազգային մշակույթին

ու կատարողական արվեստին առնչվելու:

Հայրենասիրական երգերի փառատոնը նաև մեր Արցախյան պայքարի, մեզ պարտադրված պատերազմի, Հայրենիքի իր կյանքը զոհաբերած ազատամարտիկների, մեր հաղթանակի, ձեռքբերումների ամփոփիչ դաս է թե՛ աշակերտության և թե՛ մեծերի համար: Մեր 26-ամյա պայքարի և մեր պետության ստեղծման համառոտ պատմությունն է, քանի որ յուրաքանչյուր դպրոց իր ընտրած երգի կամ երգերի շարանի միջոցով ներկայացնում էր հենց

արդեն երրորդ տարին է կազմակերպվում, և դահլիճի լեփ-լեցուն լինելը խոսում է այն մասին, որ այն անհրաժեշտ և ցանկալի է ոչ միայն դպրոցների ու միջոցառումը կազմակերպողների, այլև հասարակության համար: Ուրեմն՝ հասարակությունը հենց նման մշակութային և դաստիարակչական միջոցառումների կողմնակից է և նույնիսկ առանց հրավիրատուսի նախընտրում է լինել ու մասնակցել, զգալ ու իր մասնակցությամբ արտահայտել միջոցառման կարևորությունը: Հայրենասիրական երգերի փառատոնը տարիների ընթացքում իր զարգացումն է ապրել:

Եթե առաջին անգամ մասնակցել է 10 դպրոց, այժմ արդեն՝ մայրաքաղաքի բոլոր 13 դպրոցները:

Առավել ոգևորիչ է այն փաստը, որ համեմատած նախորդ տարիների հետ, այս տարի բոլոր դպրոցների երգչախմբերում ընդգրկվել են ավելի շատ տղաներ՝ հատկապես ավագ դպրոցներում: Սա նշանակում է, որ դպրոցականները և կարևորել են փառատոնի նշանակությունը: Զե՛ որ ի վերջո նրանք են մեր հայրենիքի ապագա պաշտպանները, նրանք են ծառայելու Հայրենասիրական և հայրենիքի պաշտպանությունը տեսնում են հենց հայրենասիրական երգերի ոգեշունչ, հպարտ կատարմամբ:

Այս փառատոնը եկավ ասելու, որ մեր կրթական համակարգը ճիշտ ուղիով է դաստիարակում հաղթանակած երկրի մատաղ սերունդին. նա պարզապես դատապարտված է սիրել հայրենիքը, քանզի մեր վերագտած հայրենիքի սահմանները զոհված ազատամարտիկների արյունով են զօգնված:

Քաղաքապետարանի ԿՍ բաժնի պետ Կառլեն Մարգարյանը, շնորհակալություն հայտնելով փառատոնի կազմակերպիչներին ու մասնակիցներին նման գեղեցիկ միջոցառման համար, ասաց, որ հայրենիք երգող ամեն բառի ու խոսքի մեջ հույս, սեր, ուժ, գործ ունի դպրոցականն էլ հայրենիքի պաշտպան է:

Ամփոփելով փառատոնի աշխատանքները՝ քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության բաժնի պետ Լ. Հակոբջանյանը բոլոր դպրոցներին հանձնեց Ստեփանակերտի քաղաքապետի հատուկ դիպլոմներ և թանկարժեք նվերներ՝ ժամանակակից երաժշտական կենտրոններ, ինչն առավել կոզևորի աշակերտներին և դպրոցների տնօրինությանը ու կիսթանի, որ նորանոր դպրոցական միջոցառումներն անցնեն հաճելի և արդյունավետ:

Մ. ԽԱԶՆՐԱՅԱՆ

ՔԱԶԱՆԵՐ ՈՒ ԽԱՆՂԱՎԱՌ ՀԱՆԳԻՊՈՒՄ

Փետրվար ամսին Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցի առօրյան հագեցած էր բազմապիսի ու բազմաբովանդակ միջոցառումներով:

Յուրահատուկ էր Հայրենյաց պաշտպանի օրվա առթիվ հայրենիքի պաշտպանների համար կազմակերպված «Ես քո պաշտպանն եմ, հայրենիք» խորագրով միջոցառումը, որը տեղի ունեցավ ՊԲ զորամասերից մեկում:

Միջոցառման հերոսներն էին 4-րդ «դ» դասարանի աշակերտները՝ ի դեմս դասվար Անժելա Պետրոսյանի, ում մայրենի բոլոր դասերն ու միջոցառումները տոգորված են հայրենասիրության և ազգային բարձր ոգով:

Իրենց մասնակցությունն ունեցան դպրոցի երգչախումբը, մի խումբ պարող աղջիկներ՝ Սվետլանա Գրիգորյանի ղեկավարությամբ:

Միջոցառման նպատակն էր բանակ-հասարակություն կապի ամրապնդումը, որի արդյունավետ համագործակցությունը միտված է հայրենիքի պաշտպանի ճիշտ դաստիարակությանը և զինվորական ստորաբաժանումներում զինվորի մարտական ոգու բարձրացմանը:

Զորամաս այցելեցինք դպրոցի տնօրեն Անահիտ Պողոսյանի, փոխտնօրեն Ժաննա Գրիգորյանի, ուսուցիչների և ծնողական կոմիտեի մի խումբ անդամների հետ:

Զորամասում մեզ դիմավորեցին շատ ջերմ: Սկզբում աշակերտները եղան զորամասի հոգևոր անկյունում, արդթեցին և խոստացան առաջնորդվել աստվածաշնչյան պատվիրաններով, ծանոթացան հայրենասեր ու հայրենամեծեր հերոսների, որոնք իրենց գործունեությամբ հայրենիքին փառք ու պատիվ բերեցին, որոնց սխրանքի շնորհիվ հայր հայ մնաց:



Դպրոցականներն իրենց հարգանքի տուրքը մատուցեցին այսօրվա պայծառ օրը պարզապես իրենց հիշատակին: Արտասանեցին «Խոնարհվում ենք նրանց առաջ» բանաստեղծությունը:

Միջոցառման բացման իր խոսքում դպրոցի տնօրեն Ա. Պողոսյանը բարեմաղթանքի խոսք հղեց և շնորհավորեց ներկաներին:

Նա ասաց, որ այսօրվա դպրոցականը հայրենյաց պաշտպանների արժանի հետնորդն է: Նրանք այսօր էլ հայրենյաց պաշտպաններ են, քանզի լավ են տիրապետում մայրենի լեզվին, ուսումնասիրում մեր պատմությունը և ուզում են ոգևորել զինվորներին ու ասել.

- Հավատում ենք քեզ, հայրենյաց պաշտպան:

Միջոցառումը բացեցին հայկական խորիտ պարով՝ ծածանելով երկու հայկական հանրապետությունների դրոշմները:

Փոքրիկ երգիչների կատարմամբ «Պատիվ ունեն» երգը լսելուց զինվորների հայացքում երևում էր ոգևորություն, հուզմունք և հպարտություն: Նրանք վստահ էին, որ իրենց կողքին արժանի սերունդ է կանգնած:

Երգեցին նաև «Հայոց տուն» երգը, որի մեջ ամփոփված էր հայոց աշխարհը՝ իր մարգերով և լեռներով, գետերով ու ծովերով, իր հավատքի բնօրրան տուրք էլ միաժամով:

Թնդաց երգն ու պարը, աշակերտները շուրջպար բռնեցին զինվորների հետ:

Երեխաները պատիվ ունեցան լինել զինվորական ճաշարանում: Միայն տեսնել էր պետք, թե ինչ ուրախությամբ էին օգտվում նրանք ճաշարանից: Նրանց համար, իրոք, տոն էր:

Զինվորները խոստովանեցին, որ նման միջոցառումները բարձրացնում են իրենց մարտական ոգին: Իմանալով, որ իրենց սիրում են, գնահատում, ավելի մեծ սիրով և պատասխանատվությամբ են ծառայում հայրենիքին:

Այցը մեկ անգամ ևս հաստատեց դպրոց-բանակ-հասարակություն կապի ամրապնդությունը:

Բոլորս վերադարձանք մեծ տպավորությամբ: Ես, իբրև ծնող, իմ խորին երախտագիտությունն են հայտնում դասվար Անժելա Պետրոսյանին, դպրոցի տնօրինությանը՝ այցի համար. դրանով շեշտվեց նրանց հայրենյաց պաշտպան լինելը: Մաղթում ենք առողջություն, նորանոր վերելքներ իրենց դժվարին ու պատասխանատու աշխատանքում: Գիտակցում ենք, որ վաղվա զինվորը թրծվում և կրփվում է այսօրվա դպրոցում:

Կիանա ԳՐԻԳՐՅԱՆ Ծնող

ՄԵՆՔ ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏԵՐՆ ԵՆՔ

Ճանաչիր ազգիդ պատմությունն ու մշակույթը, նրա բարոյական օրենքները, եղիր հպարտ՝ հայ լինելու համար:

Գ. ՆՈՒՅԻՍ

Երեխայի աշխարհընկալման, հայեցի կրթության ու դաստիարակության գործում առանձնահատուկ նշանակություն ունեն ազգային սովորույթներին, պետական տոներին նվիրված միջոցառումները:

Պատմական անցյալը և ազգային ինքնաճանաչողությունը միշտ ոգեշնչել են աճող սերնդին՝ փաստելով մեր հարատևման կարևոր պայմաններից մեկը:

Փետրվարի 23-ին Հայրենյաց պաշտպանի օրվան նվիրված հետաքրքիր ու բովանդակալից միջոցառում էր կազմակերպել Հացու հիմնական դպրոցի ուսուցչուհի Ինգա Հայրապետյանը:

Միջոցառումն սկսվեց «Զարթոնք» մանկապատանեկան կազմակերպության տողանով: Հրամանատարների խորիտ գեկույցից հետո կարծես աշակերտների ասումների ու երգերի մեջ վեր հանեցին մեր Գոյապայքարի ժամանակաշրջանի թե՛ օրերը, Արցախ աշխարհի բռնություն չհամղործող, տունն ու պատիվը պաշտպանող, ազատության համար կոչով տվող լեռնցիների հերոսական կերպարները:

Մենք մեր հիշողության, մեր պատմության տերն ենք: Մեր զոհված տղաների երազանքն այսօր իրականություն է դառնում հենց դպրոցների գործունեությամբ:

Միջոցառումը ծառայեց մի գլխավոր նպատակի՝ աշակերտների մեջ սերմանեց հայրենասիրական ոգի՝ նրանց միաժամանակ դարձնելով մեր Գոյապայքարի թե՛ մասնակիցը, թե՛ դիտորդը:

Սուսաննա ԳՐԻԳՐՅԱՆ Հացու հիմն. դպրոցի տնօրեն

Պ.ՍԵՎԱԿ-90

ՍԵՎԱԿՅԱՆ ԳՐԱԿԱՆ ԵՌԱԲՈՒՐԸ



Պարույր Սևակը դարձավ 90 տարեկան... Ասել է թե՛ 2014-ը Սևակի տարին է: Իսկ ո՞ր տարին, օրը, ժամը չի եղել սևակյան: Դեռևս 1948-ին, երբ լույս տեսավ նրա «Ամենահները հրամայում են» ժողովածուն, պոեզիան հասկացողները հաստատեցին, որ նման խորագիրը կարող է ընտրել միայն նա, ով ունակ է լսելու Աստծոն...

Ինչքան խորն է Վայոց ձորը, այնքան էլ բարձր են նրա լեռները: Նման հողը ունենում է իր ընտիր գավակներին: Վայոց ձորի աստվածընծա որդիներից ամենաընտիրը հենց Պարույրն է: Այդ նրա պատանեկան հոգին էր, որ խորությամբ իջավ-իջավ ու չափվեց հայրենի ձորերի անհունների հետ, նրա ձգտումն էր, որ ելավ-ելավ ու հասավ հայրենի լեռների անհասանելի բարձունքներին: Ու երբ պահը եկավ, Պարույրը Մովսես մարգարեի պես հաղորդակցվեց Արարչի հետ, Արարիչը գոհունակությամբ աջը դրեց իր աջ ունկին, լսե՛ց-լսե՛ց Պարույրին ու փառավորվեց, փառավորվեց և հայրաբար շնջաց. «Օրհնյա՛լ լինի ճամփադ, որդյակս, այն դժվարին ու քարքարոտ կլինի, բայց չվարանես, կհամառես, կմաքառես, իմացիր, առանց մաքառումի բարձունք չեն գրավում»: Արարիչը խոսքն ավարտեց, մաղթեց «բարի ճամփա», ու Պարույրը շոյվեց՝ լսելով Տիրոջ օրհնանքը՝ «Արարիչ որդի» ընծայակամով:

Ահա այսպես, Աստծո օրհնանքով Պարույրը սարերից իջավ՝ մարգարեացած, հողեղենի ու ոգեղենի հավասար համաձուլվածքով, անմահների հրամանը դարձրած հավատո հանգանակ, նրանց խորհուրդներով երգելով.

...Խորխտ ու վե՛հ, ինչպես մարտի պահին Եվ փխրո՛ւն՝ տուն հղված նամակի պես, Եվ որդուն սպասող մոր պես մեղմ ու բարի, Եվ զինվորի նման պարզ ու անկեղծ...

Աստծո ընտրյալները երբեք չեն նմանվում իրար, նրանք դառնում են որոնողներ. դա Արարչի խորհուրդն է: Ով չի որոնում, նա չի գտնում: Որոնող Պարույրը միշտ իրեն նետում էր մարդկային հոգիների աշխարհը, նրան քիչ էր հուզում ընդհանուր քաղաքական աղմուկը, վերացականը, սխեմատիկը, նրան չէր հետաքրքրում նաև ժամանակի այն «գրաքննադատներին» օսլայած միտումը, որն ընդունում էր միայն բոլշևիկյան դոգմատիկ գաղափարների չափաբերությունը: Դեռևս իր առաջին ինքնատիպ պոետական մուտքին Պարույրն զգաց նման «բռնագիտության» հարվածները, բայց չէր կմտեց, չսարսեց, «միություն» ստուգված բառի փոխարեն օգտագործեց «Մերոնք» վստահելի ու բարձրաձայնեց. «Դեռ կգան մերոնք», ձեռք մեկնեց մարդկային մտերմությանը, սակայն համուռ լավի ընդունեց «Անհաշտ մտերմությունը» (1953), ապա հոգու լուսարձակի շողերով գնաց դեպի «Սիրո ճանապարհ» (1954), դեպի պատերազմի հերթում ու խաղաղության ծարավ, կրկին հիշեց ժողովրդի մոլորաբան սպիներն ու դարերին հանձնեց որդիների անխաթար վերադարձին սպասող մայրերի ցաված սրտերի մորմոքը՝ այսպիսի աննախադեպ ու անզուգական ապրում-պատկերով, որ ստեղծել էր դեռևս 1943-ին.

Արկը սառնասիրտ շառաչեց օդում Եվ պայթեց մոտիկ՝ լերկ հողի վրա: Արկի բեկորը սրի պես հատու, Կտրեց ու տարավ ոտքերը նրա: Իսկ այդ նույն պահին մայրն՝ աչքում արցունք,

Պահելով նրա գալուստի ճամփան, Դամբուրում էր ու արցունքով թրջում էր որդու համար նոր գործած գուլպան:

Բանաստեղծական նման գյուտերը կշռաքարեր դարձրած Պարույրը գիտակցում էր, որ պոեզիան է հենց կյանքի ամենամանրիշակյան և ամենախորքային փիլիսոփայությունը: 1950-ական թվականների սկզբներին, երբ դեռևս թմբկահարվում էր «սովետական ընդհանուրը», «սովետական մենքը», «մենքի» մեջ ստորացված, պտուտակ դարձած «ես»-ը, երբ ազգային հպարտության ամեն մի զգացում համարվում էր եսասիրություն, երբ դեռևս Մեծն Չարենցի «Ես իմ անուշ Դայաստամին» համարվում էր խոցելի ազգայնամոլություն, Պարույրը 1950-ին գրեց «Իմ հայ ժողովուրդ» նոր խոսքը.

Իմ հայ ժողովուրդ, դու փոքր ես եղել, Աղբյուր ես եղել և ո՛չ թե հեղեղ: Դու փոքր ես եղել, եղել ես մի բուռ, Բայց մեծ է եղել ափդ լիաբուռ:

Դու փոքր ես եղել այն մուրճի նման, Որ ձև է տվել ժայռերին համառ, Փո՛քր, բայց նման այն կշռաքարին, Որ միշտ դրվել է բարու նժարին Եվ այդ նժարը ներքև է տարել...

Դժվար չէ նկատել, որ Աստծո օրհնանքով Աստծո ընտիր քարտուղարը դարձած Պարույրի պորտալարը սնվում էր Մաշտոցյան գյուտի սերունդով, հորենացու իմաստասիրության թթվածով, Նարեկացու աստվածախոհ մարդագիտությամբ... Կարելի է շարունակել հայոց մեծերի թվարկումը, բայց այստեղ կարևորվում է ազգային ճակատագրի սևակյան ընկալումն ու հողլուծումը, որ իրենն է՝ մեր բոլոր հանճարների գյուտերի շարքում:

«Սիրո ճանապարհ» գրքի նաև սիրային երգերի շարքի մեջ դարձյալ նկատվում էր Պարույրի յուրահատուկ մտածողության դրսևորումը՝ նոր պատկերային համակարգ ստեղծելու ձգտումով... «Ի՛նչ է սերը» հարցին Սևակը պիտի պատասխաներ.

Այն, ինչ անհնար է արտահայտել խոսքով, Այն, ինչ անհնար է մաշված տողով երգել...

Ահա Սևակի մի նոր զգուշավորությունը՝ «մաշված տող»-ից հեռու մնալու խորհուրդը: Դեռևս այս մղումով էլ Պարույրի քայլերը տարան դեպի «Նորից քեզ հետ» (1957) երգադարանը:

Աստծո կամոք, ստացվել էր այնպես, որ բանաստեղծ Պարույրի ստեղծագործող հոգու նժարներին գտնվում էին պոետի ու բանաստեղծի հավասար ծանրության կշռաքարեր: Մրցում էին բանաստեղծն ու գիտնականը: Դա զգում էր և Սևակը: Դեռևս այդ զգացողությամբ էլ նա դիմեց բանաստեղծական կրակի մեջ հուրհրատող, արարման իր ներքին ծայրին՝ ի ցույց դնելով արդեն զուլալված, հարստացած, մեղմացած խռովքն ու պատրաստակամությունը՝ ծառայելու պոետի հայրենի: Եվ այդ ժամանակ ինչքան էլ նկատվեր հետապոետերազմյան շրջանի խորհրդային պոետիկայի տրամախտասկան շեշտը, Պարույրի պատկերավոր մտածողությունն ընդարձակում էր փեշերը, ձգտում սեփական գորելենի ստեղծմանը: Եվ դա հաջողվում էր նրան, նա գտնում է անհատական ոճի իր ակունքը: Սույն ժողովածուի երգերի մի մասն աչքի է ընկնում հայաստանյան երանգների համակցմամբ, հասարակական և անձնական ապրումների զուգակցմամբ, սակայն միանգամայն նոր դիտակետից՝ կյանքի հակասությունները մատուցույց անելու հրամայականով, մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ ծավալվել էր «անկոնֆլիկտայնության» կեղծ ու չարաբաստիկ տեսությունը: «Նորից քեզ հետ» ժողովածուում ընդգծված երևում է Սևակի հայրենասիրության անկեղծությունը՝ լավի լավ, վատի վատ ասելու ճշմարիտ խոսքի պահանջով: Եվ նա «Ծխանի ծուխ» շարքում առաջին անգամ բարձրաձայնելով Դայոց ցեղասպանության անանցանելի համաժողովրդական

ցավի մասին, ընթերցողի դատին հանձնեց մետաքսախյուս երգերի մի փունջ և ապա իրեն հատուկ ազնվությամբ ու անհանդուրժողականությամբ բացակայեց:

Մարդ կա՝ ելել է շալակն աշխարհի, Մարդ կա՝ աշխարհն է շալակած տանում:

Միայն այս բանաստեղծությունը, որ կրում է «Մարդ էլ կա, մարդ էլ» խորագիրը, բավական է հաստատելու այն միտքը, որ Պարույրը գնացել էր նորից ինքն իր արարման խռովքը գտնելու ճիշտ ճանապարհով: Նշենք, որ այդ ժամանակ եղան նույնիսկ անուն հանած մարդիկ, որոնք ինչ-ինչ պատճառներով չնկատեցին դարերի համար ասված այդ պատկերավոր կենսափիլիսոփայությունը: Պարույրը, սակայն, բացել էր հորեղենից հոգու դռները և համարձակորեն խորհուրդ էր տալիս երգել նաև «մարդու հոգուերի» մասին:

Մարդն այսպիսով դարձավ Պ. Սևակի պոետիկայի հիմնական օբյեկտը: Եվ նրա հերթական խիզախումը դարձավ «Մարդը ափի մեջ» ժողովածուն (1963), մի աստվածընծա գիրք նորագույն շրջանի հայ պոետիկայում: Դա սևակյան ոճի փիլիսոփայությունն էր, որ հեղափոխեց ժամանակաշրջանի հայ պոետիկայի ընթացքը: Երեք առումներով հայտնություն էր այդ գիրքը: Մի կողմից դարաշրջանի էության ու ոգու առկայություն, մյուս կողմից՝ քնարերգության դասական կատարելություն և ապա նորարարության ընդգծված փայլատակում: Եռամիասնության այս հայտնությամբ Պ. Սևակը հառնեց մեր պոետիկայում և՛ իր ստեղծագործական անհատականության, և՛ ազգային պոետիկայի գեղարվեստական առանձնահատկությունների համանվագությամբ:

«Մարդը ափի մեջ» գրքի յուրաքանչյուր շարք կյանքի բանաստեղծականացման և նրա գեղագիտական սկզբունքների նոր բացահայտում էր: Միուր փիլիսոփայությունը շափաղեց գրքի «Նույն հասցեով» շարքում, «Թռուցիկ երգերը» հողվեց կյանքի շերտավոր անակնկալների գոյությունը, «Ականջդ բեր ասեմը» հոգու հրաբխային պոռթկում է, «Անձրևային սոնատը»՝ զգացումների գարնանացող ծիածան և կենսափիլիսոփայության բանաստեղծականացման հրաշք: Ինչ վերաբերում է «Մարդը ափի մեջ» շարքին, որի անունից էլ գրքի խորագիրը, պարզապես սևակյան պոետիկայի ծածանումն էր՝ հանուն մարդու ազատ ու անկաշկանդ, բովանդակալից ու երջանկաբեր ապրելակերպի:

Սիմֆոնիզմի սևակյան պահանջը, սակայն, չխախտեց համաշխարհային պոետիկային ուղեկցող հավերժ ուսանելի պահանջը, որ բանաստեղծությունը շահում է այն դեպքում, երբ սիրուն ու միտքը հանդես են գալիս գիրկընդխառն: Գրողի խոսքը կամ սրտից պիտի հորդի դեպի ուղեղ, կամ ուղեղից՝ դեպի սիրտ:

Պ. Սևակն իր արժավաթիչք ու սրտամտ պոետիկայի շնորհիվ հայոց ազգային մտավոր համամարդկային անդաստան, միացավ աշխարհի ականավոր պոետների հավերժալույս աստղաբույսին:

Պ. Սևակի ստեղծագործական ուղին միանգամայն ինքնատիպ էր: Նա երբեք նախորդ ժողովածուներից որևէ գործ չի մտցրել հաջորդի մեջ: Դրա լավագույն վկայություններից մեկն էլ նրա վերջին՝ «Եղիցի լույս» ժողովածուն էր (1969), որով նոր աստիճանի բարձրավելավ Սևակի բանավեպը, դարձավ ծրագիր-հանգանակ հայ քնարերգության առաջընթացի հարթարշավում: Սևակն իր «Եղիցի լույս» ժողովածուով ապացուցեց բանաստեղծ հայ ժողովրդի ստեղծագործական մտքի հրաբխային ուժը, որը չի մարել, չի քնել երբեք: Դա ապացույցն է այն ազգային իրողության, որ Գ. Նարեկացու «Մատյանին» պիտի հաջորդեին Քուչակի Դայոցները, Սայաթ-Նովայի Խաղերը, Թումանյանի Քառյակները, Սիամանյոյի Դյուցազներգությունը, Վարուժանի Դեթանոս երգերը, Վարպետի Մանիները, Վ. Տերյանի Անուրջները, Ե. Զարենցի Տաղարանը, Շիրազի Արարատապատումը և այլն, և այլն:

Սևակը գրականությունը համարում էր մարդագիտություն: Իր պոետիկայով նա հաստատեց այդ ճշմարտությունը՝ հյուսելով իր անձեռա-

կերտ հուշարձանը: Ինչ վերաբերում է Պ. Սևակի պոետներին, առանձնապես «Անլուելի զանգակատուն», «Եվ այր մի՛ Մաշտոց անուն», «Եռածայն պատարագ» պոետներին, կարող ենք դրանք համեմատել դարերի խորքից մեր օրերին և գալիքին կամրջված ծիածանի հետ, որի երանգներին շաղախված են մեր ժողովրդի սրտի ցավն ու ապրելու վճռականությունը՝ օձված Սևակի հուզերանգով ու հավատով:

Պ. Սևակն իր աստվածանվեր կարողությունները դրսևորեց նաև գրականագիտության բնագավառում: Այս առումով նրան կարող ենք համեմատել Մեծ Լոռեցու հետ՝ նկատի առնելով նրանց մարգարեական պայծառատեսությունն ու խորհուրդները գրականության պատմության, գրաքննադատության ու գրականության տեսության հիմնական բաժիններում:

Սևակի «Սայաթ-Նովա» աշխատությունը, որով նա միանգամից արժանացավ գիտությունների դոկտորի գիտական աստիճանի, սայաթնովագիտության աննախադեպ նվաճումներից է: Նրա «Վարուժանի պոետիկան», «Տերյանը պահանջում է», «Մեր քնարերգության Վահագնը (Պետրոս Դուրյան)», «Գրիգոր Նարեկացի», «Զարենցը և արդիականությունը», «Դայ մոր քնարգրության հիմնադիրն ու առաջին դասականը (Մ. Պեշկյաշյան)», «Թումանյանի հետ» և այլ աշխատություններ՝ նվիրված հայ գրականության պատմության կարևոր էջերի բացահայտմանն ու գնահատմանը, Պ. Սևակին կարող են զուգահեռ հարթակի վրա դնել գրականության ականավոր ուզածող պատմաբանի մոտ: Ինչ վերաբերում է «Գիրք պանդխտության»-ը (Վ. Խեչումյանի պատմվածքների ժողովածուի մասին), «Այն տարիքում, երբ...» (Գ. Եմինի «Երկու ճամփա» գրքի մասին), «Բանաստեղծուհու սրտաբաց զրույցը» Ս. Կապուտիկյանի «Ստորումներ ճանապարհի կեսին» և այլ գրախոսություններին, կարող ենք վկայել, որ Սևակը նաև մեր հզոր գրաքննադատներից է:

Գրական տեսանյութ հարցերի իմաստուն պատասխանների մի ծաղկեպուրակ են Սևակի «Ինչպես մի կաթիլի մեջ», «Դեպի մեծ ուղեծիր», «Այդ, մաքրություն ամենից առաջ», «Իմ ընթերցողներին», «Զնուն և ընդդեմ ռեալիզմի նախահիմքերի», «Ազգային սնապարծություն և ազգային արժանապատվություն», «Հայկական ռոմանտիզմը և իր մեկնաբանը», «Դժվարը իրենից հասուն լինելն է», «Ինչ-ը, ինչպես-ը և որպես-ը» հողվածներն ու բազմաթիվ մանակները, որոնք արդեն մտել են սևակագիտության զարգացման կարևոր հունի մեջ:

Պ. Սևակի հարուստ ու բարձրարվեստ ստեղծագործության մի պատվաբեր մասը կազմում են նրա բարգամությունները ռուս և համաշխարհային գրական արժեքներից: Նրա խոսուն գրչով մայրենի լեզվի զուգակցությունը հայ ընթերցողի սեփականությունն են դարձել Մայակովսկու, Նեկրասովի, Պուշկինի, Գո Մո-ժոի, Ադամ Միցկևիչի, Ջաննի Ռոդարի, Իրակլի Լեաշվիժի, Եսենինի, Լերմոնտովի, Մեծեյախիսի, Գորոդեցկու, Պարլո Տիչինայի և այլ մեծերի ընտիր ստեղծագործությունները:

Վերընթերցելով Պ. Սևակի գրական հարուստ ժառանգությունը՝ գեղագիտական անուրանալի հարույք ստանալու հետ մեկտեղ ապրում են ազգային օրինական հպարտություն:

Մեծն Սևակի ամբողջական ստեղծագործությունը՝ պոետիկայի, գրականագիտության, թարգմանության ներառումներով, կարելի է համարել գրական մի եռաբլուր՝ հավերժորեն բանուկ մի սրբատեղի, որի ոգեղենացած ձայնը արձագանք է գտնում ոչ միայն հոգու խորքում, այլև գալիք դարերում:

Սուրապ ԽԱՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ԵՐՈ

ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՎԱՆՊՈՒՅԹ ԵՆ ԴԱՐՁԵԼ

Ժամանակակից տեխնոլոգիաների զարգացմանն ու փոփոխմանը զուգընթաց՝ փոխվում է սովորողների աշխարհայացքի և մտածողության ձևը, որով պայմանավորված է աճող սերնդի դաստիարակության և ուսուցման հարցը: Կարծիք կա, իբր աճող սերունդը քիչ ընթերցասեր է, հայրենասեր, հետաքրքրասեր և այլն, ինչը հարաբերական է: Այսօր դպրոցներում տարվող դաս-միջոցառումների գերնպատակն ազգային ոգով և ազգային գաղափարախոսությամբ դաստիարակված սերունդ ունենալն է: Նմանատիպ միջոցառումների արդեն ավանդույթ դարձած ցանկ ունի Քարահունջի հիմնական դպրոցը:

Օրերս դպրոցում անսովոր եռուզեռ էր. դպրոցը տոնում էր հայ ազգի սիրելի գավակ, հայ պոեզիայի առաջավոր դեմքի՝ Պարույր Սևակի ծննդյան 90-ամյակը, որն իր ստեղծագործությամբ որակական մի նոր աստիճան խորհրդանշեց գեղարվեստական մտքի զարգացման համար: Նախաձեռնողը 6-րդ դասարանի դասղեկ Կարինե Գալոբյանն էր: Բացման խոսքով հանդես եկան աշակերտները՝ արտասանելով Պ. Սևակի պոեզիայից: Այնուհետև զեկուցմամբ հանդես եկավ Կ. Գալոբյանը. «Ամբողջ ստեղծագործական կյանքում Սևակը զնաց խիզախման՝ հանուն բարոյ համադրություններով առանձնացող արդիական պոեզիայի, ժխտելով հեշտն ու պարզունակ, գոհության կողքին դնելով մեծ դժգոհությունը, համակերպությանը հակադրելով ընդդիմությունը, անտարբերությամբ՝ փարվող հոգին: Դա նա ապացուցեց և իր գրական գործունեությամբ, և՛ մտավոր-մշակութային զարգացման մեջ ունեցած ներգործումն ղեկավարելով...»: Բանաստեղծը նտահոգված էր նոր սերնդի ապագայով և իր մտավոր ու հոգևոր բոլոր ուժերը կենտրոնացնում էր՝ փրկելու ուժացնող բռնակալության ճիրաններից, նրանց մեջ արթնացնելու ու պահպանելու ազգային, արդարացի ու հերոսականը: Մի անգամ ուսանողության հետ հանդիպման ժամանակ նրանց տված հարցին, թե ինչ է հայրենասիրությունը, նա պատասխանել է.



«Հայրենասիրությունն այն է, որ յուրաքանչյուր մարդ իր գործը կատարում է խղճի մտոց: Աշակերտը լավ է սովորում իր դասերը, ուսանողը չի ծուլանում կատարել իր պարտականությունները, բանվորը՝ իր, գյուղացին՝ իր, ուսուցիչն ու գիտնականը՝ իրենց: Երբ ամեն մարդ, ամեն հայ մկրտունով կատարի իր պարտականությունները, գործը. դա կլինի իսկական հայրենասիրությունը»: Այդպիսին էր մեր Սևակը: Ասումընթում էին դահլիճում նստածները, մասնակիցները: Կարելի էր ասումընթել առանց հոգնելու, մեկը մյուսին շարունակելով: Միջոցառումը վերածվեց մի ինքնատիպ բանավեճի: Ազդեցիկ էր գրադարանավարուհի Սևիկա Լալայանի խոսքը ճշմարիտ բնորոշմամբ՝ գաղափարի ու ճշմարտության բանաստեղծ: Նա մանրամասն վերլուծեց Սևակի անցած ուղին: Սևակի բանաստեղծությունների մեջ չկան ազատ տարածություններ, որովհետև յուրաքանչյուր բառ, նախադասություն ու քառատող հազեցած է պատկերային, նկարագրական ու իմաստային խտացումներով: Մտքի նմանօրինակ ձևակերպումը նույնիսկ ամենամանրաբեր ընթերցողին խորհելու առիթ է տալիս:

Հայաստան աշխարհը տոնում է Մեծ Լոռեցու՝ Հովհաննես Թումանյանի ծննդյան 145-ամյակը: Մեր դպրոցը ևս անմասն չմնաց: Ուզանա Ղահրամանյանի նախաձեռնությամբ մեծ շուքով տոնեցինք Ամենայն Հայոց բանաստեղծի ծնունդը, ով ներկայացրեց Մեծ բանաստեղծի կյանքն ու գրական գործունեությունը: Այս ելույթ ունեցան աշակերտները՝ արտասանելով Թումանյանի բանաստեղծական գոհարներից, բեմականացրին մեծ գրողի «Բարեկենդանը», «Ամիսը մարդը»:

Հովհ. Թումանյանը իբրև մահկանացու՝ իրեն հյուր զգաց «այս անցավոր աշխարհում», բայց եղավ մի հյուր, որն իր կյանքի կարճատև ակնբարձրում սերմանեց «Մարդու գործն է միշտ անմահ» հունդը, որով միայն սնունդ են առնում ու ավանդաբար հարատևում սերունդները: Սա է Թումանյանի ոգեղեն խորհրդի անմահության գրավակալը: Վերջում ներկաները դիտեցին Թումանյանի մասին պատմող տեսաֆիլմ:

Թումանյանին նվիրված ցերեկույթն ամբողջական ու հազեցած մատուցելու համար կազմակերպիչներն ու մասնակիցները տնօրինության կողմից արժանացան շնորհակալության, և քանի որ այդ օրը նաև գիրք նվիրելու օրն էր, միայն գրքեր նվիրեցին թե՛ աշակերտները, թե՛ ուսուցիչները: Գիրքն է այն ճշմարիտ ճանապարհը, որ մարդուն շարունակ մարդ է պահում:

Իսկ ահա Մայրենիի միջազգային օրվա առթիվ դպրոցի հայոց լեզվի մասնագետներ Զվարթ Հայրապետյանի նախաձեռնությամբ և Կարինե Գալոբյանի օժանդակությամբ դպրոցում տոնեցին Մայրենիի միջազգային օրը: Միջոցառումը կազմված էր երեք փուլից՝ զեկուցում, մեծերը հայոց լեզվի մասին, վիկտորինա-մրցույթ:

Անուշ ԶԱՄԱՆՅԱՆ
Մարտի 29-ը. Քարահունջի հիմնական դպրոցի դասվար

ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ՄՁՆՈՒՐՏՈՒՄ

Կան մեծություններ ու հանճարներ, որոնց տաղանդի հանդեպ ժամանակը գործում է ի նպաստ: Տարիների հեռավորությունից ոչ թե խամրում, այլ ավելի է ահագնանում այն ակնածանքն ու սերը, որ տածում ենք նրանց հանդեպ: Այդպիսի մեծությունները բացառիկ են: Այդ մեծությունների շարքն է դասվում մեծն Թումանյանը:

Ամենայն հայոց բանաստեղծ, Մեծ Լոռեցի, Ամենայն հայոց թամաղա, Ամենայն հայոց որբերի հայրիկ... շրջասույթներն այս բնութագրում են հանճարեղ Լոռեցուն:

Փետրվարին Ստեփանակերտի հ. 6 հիմնական դպրոցում տիրող մթնոլորտը թումանյանական էր: Դպրոցի 6-րդ դասարանցիներն իրենց դասղեկ՝ հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ռիմա Մելքունյանի հետ հավաքվել էին նշելու Մեծ Լոռեցու՝ Հովհ. Թումանյանի ծննդյան 145-ամյակը: Միջոցառմանը մասնակցում էին դպրոցի միջին օղակի աշակերտները, ուսուցիչներ, ծնողներ: Դասասենյակը ձևավորված էր օրվա խորհրդով. Թումանյանի մեծադիր դիմանկարը, ճաշակով ու վարպետորեն ձևավորված պատի թերթեր, որտեղ պատկերված էին գրողի տարբեր տարիների լուսանկարներ, հեթաթեմերից ու լեզենդներից խտուն հատվածներ:

Միջոցառումը սկսվեց Ռ. Մելքունյանի բացման խոսքով.

- Հիրավի, մենք անսահման հպարտությամբ և շնորհակալությամբ ենք արտասանում Հովհ. Թումանյանի անունը՝ նրան զնահատելով իբրև Ամենայն հայոց բանաստեղծ, ազգային հանճարի ամենաականավոր դեմք: «Նրա կախարդական գրիչն ուր դիպավ, կատարվեց իսկական արվեստի հրաշք՝ լինի առակ թե քառյակ, հեթաթեմ թե պատմվածք, հովվերգություն թե վիպերգություն: Նա եղավ մեզ համար այն, ինչ Պուշկինը՝ ռուսների համար, Միցկևիչը՝ լեհերի համար»,- այսպես է նրան զնահատել մեծն Ավ. Իսահակյանը: Հ. Թումանյանը իր երգերով նոր դարաշրջան է բացել հայ գեղարվեստական մտքի և մշակույթի պատմության մեջ: Նա կերտել է մեր հայրենիքի գեղարվեստական պատմությունը՝ նյութ քաղելով հազարամյա հոգևոր գանձերից, ժողովրդական կյանքից, հարստև մաքառումներից ու կենսափիլիսոփայությունից, դարերի ճանփան բռնած հայ մարդու երազներից: Նրա ստեղծագործության մեջ հազար գույնով շողում է հայ երկրի արևը: Բացման խոսքին հաջորդեց երեխաների հուզիչ երգը՝ «Ա՛խ, ինչ լավ է...», որի խոսքերի հեղինակը Թումանյանն է:

Աշակերտները ներկայացրին Թումանյանի կյանքն ու գործունեությունը, որը հեշտ ու խաղաղ չի անցել: Պատկերավոր ու հուզիչ էր նրանց խոսքը՝ լի մեծագույն հպարտությամբ և անսահման ակնածանքով: Ներկայացված բանաստեղծություններում փայլում էր Թումանյանի անմահ տաղանդը, անսահման հայրենասիրությունը, խորը վերքը ժո-



ղովորի ցավի հանդեպ և խորիմաստ բովանդակությունը: Բանաստեղծը կյանքի վերջին տարիներին ամբողջացրեց աշխարհից ստացած իր տապալորությունները, հասարակության և բնության մասին կուտակած իր խոհերը: Այդ կենսական հարստությունից ծնվեցին հանճարեղ քառյակները, որոնց մեծ տեղ տրվեց միջոցառմանը:

Բեմական հագուստներով և վարպետորեն ներկայացվեցին «Շունն ու կատուն», «Էսպես չի մնա» լեզենդները: Աշակերտները մեծ ըմբռնումով ունկնդրեցին Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերայից հատվածները:

Միջոցառման ունեցավ դաստիարակչական և ուսուցողական մեծ նշանակություն. մեկ անգամ ևս կարևորվեց ու արժևորվեց մեր մեծերի կյանքն ու գործունեությունը:

Սուսաննա ԱՏԵՓԱՆՅԱՆ
Մարտի. հ. 6 հիմն. դպրոցի փոխվարչ

ՄԵՐ ԿՅԱՆՔԻ ՄՇՏԱԿԱՆ ՈՒՂԵԿԻՑԸ

Հովհ. Թումանյանը դեմ էր գրողի կամ մշակույթի մեկ այլ գործի կենդանության ժամանակ հոբեյանը նշելուն: Նմանապես և իր հիսնամյակը: Սակայն թիֆլիսի բոլոր դպրոցներում միջոցառումներ կազմակերպվեցին, և հրավիրեցին գրողին: Նվարդ Թումանյանի հուշերից իմանում ենք, որ ամեն անգամ այդ երեկույթներից Հովհ. Թումանյանը վերադառնում էր ոգևորված, գոհ, ուրախ, քանզի երեխաներն էին ներկայացնում իր ստեղծագործությունները:



Շուրջ հարյուր տարի հետո գրողի հերթական հոբելյանն ենք մշում ամեն կրթօջախում, ամեն սերունդ իր Թումանյանն է ներկայացնում, և դարձյալ մե՛նք ենք, քանզի մա միշտ մեզ հետ է, մեր մեջ է: Ինչպես մեր ալեհեր հայոց լեզուն ամեն մանկան հետ ծնվում է և երիտասարդ մնում, այդպես էլ Ամենայն հայոց բանաստեղծ Թումանյանը. նա բոլորի շուրթերին է՝ թթոթվախոս մանուկից մինչև ալեհեր ծերունի:

Ստեփանակերտի պարավեստի քուլեջի թումանյանական ցերեկույթը ներկաներին տարավ մինչև սիրելի գրողի ծննդավայրը, ծնողների մոտ, երիտասարդական տարիները, ընտանիքը... Մեծ անհատը մեծ է ոչ միայն իր ստեղծածով, այլև ապրած կյանքով, ամեն օրով: Ինչքան շատ են խորանում նրա էության, ստեղծածի մեջ, զգում են, որ նա անհատնում է, հիրավի տիեզերք, որտեղ ամեն սերունդ գտնում է իր գալակտիկան:

Միջոցառման կազմակերպիչներ՝ քուլեջի փոխտնօրեն Ստելլա Զաքարյանը և հայոց լեզվի և գրականության ու-

սուցչուհի Գայանե Բաղունցը կարողացել են երեխաների միջոցով ներկայացնել Թումանյանի աշխարհը, ներկաների մեջ արթնացնել մեծ արվեստի հետ առնչվելու սքանչազման պահեր: Միևնույն ժամանակ խորհել տալ ապրածը կյանքի իմաստի, մարդ լինելու կարողության և մարդկային հոգին վեհացնող էլի շատ բաների մասին: Թումանյանի հոբեյանը նշելն ամենից առաջ պետք է տվյալ սերնդին՝ որպես ինքնամաքրման և կատարյալին ծագելու ազնիվ արարողություն, որպես կենսական էներգիա ստանալու լավագույն միջոց:

Թումանյանի ապրած ժամանակաշրջանը բարդ էր ու հակասական: Այսօր էլ նրա գրույցի կարիքն ունեն, ինչպես տարիներ առաջ: Նրա երազածը հաշտ ու խաղաղ մարդկությունն էր, և այսօր էլ իմաստուն է հնչում նրա միտքը՝ թե՛ս ինքնամաքրման և կատարյալին ծագելու ազնիվ արարողություն, որպես կենսական էներգիա ստանալու լավագույն միջոց:

Ուսուցիչների մտքերը զեղեցիկ կերպով շարունակում են երեխաները՝ մեկ բանաստեղծությունների, մեկ քառյակների, «Գիթոր»-ից կամ «Անուշ»-ից փոքրիկ դրվագներ ներկայացնելով, բայց ամենից շատ՝ պարերով: Հասկանալի է, մասնագիտացված դպրոցը յուրովի պիտի ներկայացնար:

Քուլեջի տնօրեն Կարինե Հարությունյանն իր գոհունակությունը հայտնեց միջոցառման կայացման առթիվ՝ շնորհակալություն հայտնելով կազմակերպիչ ուսուցիչներին և մասնակից երեխաներին, ինչպես նաև պարուսույցներ Լուսինե Փաշայանին, Տատյանա Միրզոյանին, Գարի Ավանեսյանին:

Ստեփանակերտի քաղաքապետարանի ԿՍ բաժնի պետ Կառլեն Մարգարյանը արժևորեց թումանյանական հանդեսը, ինքն էլ պահն օգտագործելով՝ իր զգացումներն արտահայտեց Թումանյանի հանդեպ: Ինչ խոսք, Թումանյանը մեծություն է, բայց մեծ մնալու համար հարկավոր են այդպիսի երեխաներ և նրանց կրթող ուսուցիչներ, որոնք ամենօրյա խոսքում կրկնեն Թումանյանի մտքերը, մեզմից յուրաքանչյուրը անմնացորդ նվիրվի իր բնագավառին այնպես, որպեսզի յուրաքանչյուրս մեր գործով մոտեցնենք Թումանյանի երազած հայրենիքը:

«Երջանկությունը գոհունակություն զգացում է, մարդուցն է կախված, երջանկությունը ամեն օր կա, մարդը պիտի ուզենա, կարողանա»,- թումանյանական այս իմաստությամբ ապրենք մեր յուրաքանչյուր օր:

Ս. ՉԱԲԻԵԼՅԱՆ

ՔՆԱՐԱԿԱՆ

ՇՇՈՒԿՆԵ՛Ր, ՇՇՈՒԿՆԵ՛Ր...

Այս ի՞նչ շշուկներ են, այս ի՞նչ փսփոսոցներ, որ մեղմիկ շո- յուն են ականջներս, թափանցուն հոգուս խորքը ու ստիպում սրտիս՝ տրոփե՛լ, տրոփե՛լ, հաճելի պահեր ունենալ, զգալ՝ չգիտեմ, թե ինչ...

Դուրս եմ նետվում, անուշ հովը գալիս, հպանցիկ անցնում է: Ա՛յ, հովն է շշուկում ուրախացած, որ կարող է բարին ավետել, սակայն չի համարձակվում, քանի որ փետրվարը դեռ չի վեր- ջացել: Աչքս ընկնում է ձյունից ազատված փոքրիկ լանջին, և ո՛վ գարնանը՝ եղինջի երկու փոքրիկ կարմրավուն գլխիկներ: Ահա թե ինչ փսփոսոցներ են: Ուրեմն՝ գարունն արդեն աննկա- տելի և հուշիկ, կամա՛ց-կամաց քանդում է խանձարուրի կապե- րը՝ ազատելով ձեռ ու ոտ, թափանցուն մեր սրտերը՝ ստիպելով անսովոր դող զգալ, քաղցր տրոփյուն:

Գարունն ինքն արթնացել ու իր հետ արթնացնում է բնու- թյունը, շշուկով կանչում մայր հողի գրկում քնած ծիլերին ու շատերին, բնությունը լցնում նորածին ծիլերի թոթով փսփոսո- ցներով, հովի շշուկներով: Շուտով, շատ շուտով առվի կարկաչը, թռչնահամերգը, օդում ճախրող գույնզգույն ծաղկանման թի- թեռները հրավերը կանեն, կտոնեն գարնան տոնը, կլցվեն մարդկանց սրտերը, կպարզեն բերկրանք ու հմայք՝ գարթոն- քը դարձնելով խենթացնող:

Իսկ մա՛րդը... Մարդը՝ բնության անգին գարդը, կըմբռնի գարնան գեղեցկությունը, հոգին կլցնի անհուն բարությանը, կգինվի նոր եռանդով, լայնաթոք կժպտա: Կսկսի հողի հետ իր սովորական գրույցը՝ խոստանալով անկեղծ ու նվիրված մոտե- ցում:

Գարունը գեղեցկություն է, որ իր հետ բերում է ուրախ ու գե- ղեցիկ տոներ: Արդյոք, բնության մեջ կա՞ առավել գեղեցիկ, առեղծվածային էակ, քան կինն է: Ու գարունն իր հմայքը առա- ջին հերթին ընծայում է կանանց՝ նրանց տալով նոր հմայք, նոր երջակություն, նոր ծաղկող ժայիտներ: Մի ամբողջ միանայակ

գարունը նվիրել է չքնաղ հայուհիներին: Նրանք հիրավի արժա- նի են նման մեծարանքի, քանի որ Արցախյան գոյամարտում զենքը ձեռքներին կանգնած են եղել իրենց քաջ այրերի կող- քին, նրանց նեցուկ դարձել ու կրկնակի զինել իրենց սիրով ու նվիրվածությամբ: Գարունը շոյում է նրանց մետաքսե վարսերը, տալիս անպատմելի քնքշություն ու հնազանդության հասնող հարգանք:

Ինչպես կուզեք նկարագրեք, գարունն արթեցնող է ու կա- խարող, երբ ծաղկած ծառերը հսկա ծաղկեփնջեր են հիշեց- նում, երբ բողբոջները բամբասկոտ կանանց նման ուր որ է՝ կպայթեն:

Իսկ մայի՞սը...

Այլ է մեր շքեղ եռատոն ամիսը, երբ տոնականորեն գար- դարված Չայոց աշխարհում գարնան շքեղ գույներին խառն- ված՝ կծփա մեր եռագույնը, կծածանվի անկախ ու ազատ, դրախտանման Արցախ աշխարհի գլխավերևում: Գարուն, գե- ղեցիկ ես ու շլացնող, հարուստ ես ու խենթացնող, մատաղ սր- տերի տիրակալ ես ու սիրո սերմնացան...

Կանգնած գարնան շենին, ականջս պահած գարթոնը ծիլե- րի փսփոսոցներին, անուշ հովերի շշուկներին, բողբոջների գաղտնի գրույցին, չեմ զգում, որ արդեն մարմին են առնում, շունչ ու հոգի ստանում գարնան կանչով ծնված մտքերս...

Ծով գարնան շնչով մարմին են առնում Ու գարնան նման վարար հորձանքում Իմ խենթ մտքերը՝ բարությանը օժտված, Ափովում, ճախրում են բուրմունքով արբած:

Յրանուշ ՄԱՄԱՐԵՅԱՆ
Շահումյանի շրջանի Նոր Ղարաջևարի
միջև. դպրոցի ուսուցչուհի,
ժողկրթության գերագնացիկ

Խոսք հիշատակի

ՆԱԻՐԱ ՉԱՆՅԱԿԻ ԱՄՐՅԱՆ



Մարտի 7-ին երկրա- յին կյանքին հրաժեշտ տվեց Ստեփանակերտի Ե.Չարենցի անվան հ.7 հիմնական դպրոցի բազ- մավաստակ ուսուցչուհի Նաիրա Ասրյանը:

Նաիրա Ասրյանը ծն- վել է 1952թ. հունվարի 20- ին, Ասկերանի շրջանի Խնապատ գյուղում:

Ավարտել է Ստեփա- նակերտի Ե.Չարենցի ան- վան հ.7 միջնակարգ դպ- րոցը: Մանկավարժական կրթություն է ստացել

Ստեփանակերտի պետական մանկավարժական ինստիտու- տում:

1974 թվականից մինչև կյանքի մայրամուտն աշխատում էր Ե.Չարենցի անվան հ. 7 սկզբում՝ միջնակարգ, այժմ՝ հիմ- նական դպրոցում:

Ուն գեթ մի անգամ բախտ է վիճակվել հաղորդակցվելու Նաիրա Ասրյան մարդու հետ, չի կարող մոռանալ նրան:

Բոլոր ածականները խամրում են նրա անվան կողքին: Վե- հաշուք, ազնվատոհմիկ կին՝ միշտ ժպտադեմ, միշտ պատ- րաստ խորհուրդ տալու, օգնելու դիմացիմին:

Նրան ճանաչողները գիտեն, որ նա հիանալի մանկավարժ էր, նվիրված կին, ընկեր ու բարեկամ, հոգատար մայր ու տա- տիկ: Լավատես էր ամեն ինչում: Անկեղծ էր, ազնիվ:

Ճակատագրի անողորմ հարվածներն անգամ չէին կարո- ղացել կոտրել նրա աննկուն ոգին: Թե սրտի խորունկ խորքե- րում ինչ վիշտ էր պահում՝ բոլորին էր հայտնի, բայց դրա մա- սին երբեք չէր խոսում: Թե խոսում էլ էր՝ վաղամեռիկ որդու մանկության լուսավոր պահերն էր հիշում:

Սիրում էր կրկնել. «Ես իմ եռթյամբ կենսափսիմը մարդ եմ և չեմ էլ ուզում այլ կերպ ինձ դրսևորել, չեմ ուզում իմ վշտից ու- րիշին մաս հանել», իսկ ահա ուրախությունը շռայլորեն կի- սում էր բոլորի հետ: Առիմբնող հմայք ուներ, հունդրով հա- բուստ՝ խոսք:

Ապրեց՝ իր շուրջը լույս ու ջերմություն սփռելով, պտղունց- պտղունց իր հոգուց մաս հանելով իր հարյուրավոր սաներին, որոնք իրենց հետ կտանեն սիրելի ուսուցչուհու լուսե ժպիտն ու իմաստուն խորհուրդները:

Մեր լավ ընկեր ու բարեկամ, քո մասին անցյալ ժամանա- կով խոսել չի ստացվում: Դեպի հավերժություն տանող քո ճա- նապարհը նման է մարող աստղի հետագծին:

Թող օրինյալ լինի հիշատակը...

Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնա- կան դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ԱՅՐԴԻՍԻՆ ՆԱ ԿՄԱ ՄԵՐ ՍՐՏԵՐՈՒՄ

Բնական է, որ մարդ մի օր աշխարհ է գալիս, մի օր էլ պետք է հեռանա այս աշխարհից: Բայց երբ անժամանակ է այդ հե- ռանալը, ափսոսանքն ու ցավն ավելի խորն են: Անժամանակ էր նաև մեր սիրելի ուսուցչուհու՝ Ե. Չարենցի անվան հ. 7 հիմ- նական դպրոցի 4 «բ» դասարանի դասվար Նաիրա Ասրյանի մահը:

Ո՞վ կարող է ավելի լավ ճանաչել ուսուցչին, եթե ոչ այն մարդիկ, ովքեր միշտ եղել են նրա կողքին, լսել նրա խրատնե- րը, սովորել նրանից և՛ գիտություն, և՛ կյանքի դասեր քաղել նրա խոսքից:

Ցավալի է, որ նման բազմաբեղուն ու եռանդուն մարդը անսպասելիորեն իր մահկանացուն կնքեց՝ թողնելով վառ հիշատակ նախ ընտանիքի, ապա գործընկերների, աշակերտ- ների և իրեն ճանաչողների հուշերում: Նա մեզանից հեռացավ ոչ միայն որպես ուսուցիչ, այլ պարզապես որպես Մարդ՝ մեծ հոգու տեր, ուժեղ, պայքարող... Այդպիսին նա կմնա մեր սրտե- րում:

Խորին վշտով սզում ենք մեր սիրելի ուսուցչուհի Նաիրա Ասրյանի կորուստը և ցավակցում ընտանիքի անդամներին:

Ստեփանակերտի հ. 7 հիմնական դպրոցի 4-րդ «բ» դասարանի ծնողներ

ԿԱՐՈՏԻ ՆՎԱԳՆԵՐ

Կարոտիս անափ հեռուներում դեռ, Գիշերներում բազում անհուն ու անքուն Կանգնած ես դու լուռ ու զլխահակ, Կանգնած՝ լռիմ, խորհրդավոր... Երազներիս անափ հեռուներում Բոցե շողեր ես նետում իմ ճամփին, Կորած տարիների թանձր մշուշում, Փնտրում եմ, սակայն չգիտեմ՝ ինչ:

Անցնում եմ բակով այն, որ փողոց է հիմա, Անցնում՝ հուշերը մեր կոխկրտելով. Ոտքերիս ամեն հպումից անձայն Փոքրիկ մի հուշ է գարթնում կարոտով: Կա այն բակը մեր սիրո բողբոջի, Ապրում է հիմա, փողոց է փոքրիկ. Ապրում եմ ես էլ մեր սիրո բակում, Իսկ դու՝ հեռավոր, անձանոթ երկրում:

Արի՛ բակը այն՝ մեր բողբոջ սիրո, Տաճարը սիրո կառուցվածք կրկին. Գուցե այս մեծ կարոտը անձոր Փարատվի այնտեղ՝ մեր սիրո բակում: Ոչ... Դու մնա հեռվում՝ քո խոհերի հետ, Ես՝ այստեղ, հուշերի մեր բակում կրկին Շշուջամ բոլոր խոսքերն այն անգին, Որ ուզում էի, բայց չխախտեցի երբևէ ասել:

Մեկնումից առաջ խոստացար՝ կգամ: Գնացիր, սակայն չդարձար նորեն: Քեզանից հետո աշխարհը փոխվեց, Մեր բակը սիրո դարձավ մի փողոց: Ձեր տունն էլ, ցավոք, ուրիշը առավ, Ուրիշի ոտքեր հավեցին հողին. Եվ փոխվեց, փոխվեց ամեն բան այնտեղ, Ինձ համար, սակայն, մնաց միշտ «ձեր տուն»:

Տարիք ենք առել, դու՛ քո, ես՝ իմ խենթ սիրով, Չասուն ենք դարձել մեր ապրած-չապրածով, Բայց խենթ մի զգացում գիշերում հաճախ Այցի է գալիս՝ հանգիստ չի տալիս:

Արդյո՞ք դու էլ մեր բակն ես հիշում՝ Խենթ պատանության արշալույսը վառ, Թե՞ մարած է հուրն ահեղ տարերքի, Որ մեր սրտերն էր այնպես փոթորկում:

Արի՛ բակը մեր: Խոսքեր չեն հնչի իմ ու քո բակում, Պարզապես իրար հեռվից կժպտանք: Կկանգնես կրկին ձեր հին պատի տակ Ու պարզ գիշերվա աստղալույսի մեջ «սիրում եմ» կասես...

Դատարկ է հիմա տիեզերքն իմ հոգու, Ինչպես երկինքը մայրամուտից հետո. Միայն հեռավոր հորիզոնի ուսին Կյանքիս լուսաստղն է հեռվից առկայծում: Երգը այս ծնվեց նույն այն փողոցում, Ուր սերն էր մեր ծնվում անմեկին. Որ ծնվեց այնպես՝ լուռ, խորհրդավոր, Որ ոչ քեզ հասավ կյանքում ու ոչ էլ ինձ...

ՆԱՄԱԿԸ

Չգիտեմ՝ ինչու իմ ծնողները Արգելում էին ինձ հանդիպել քեզ, Մեծերը, երկի, փորձ են ունենում Իրենց իսկ կյանքի դասերից քաղած:

Թե՞ այն նամակը եղավ հենց պատճառ, Որ ուղարկեցիր ինձ բոլորից թաքուն. Գրեցիր՝ կարդա՛ ու պատռի՛ր իսկույն, Իսկ ես խենթի պես պահեցի այն:

Պահեցի, սակայն գտան մեծերը (Դե՛, մեծ են, էլի, փորձ ունեն կյանքի), Ու իմ խենթության արդյունքում ահա Կորցրի անդարձ իմ սերն առաջին:

Ս. ՂԱԶԱՐՅԱՆ
Խնապարի միջև. դպրոցի
հ. լեզվի եւ գրակ. ուսուցչուհի

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝
«Լուսարար»
ՓԲԸ

Ստեփանակերտ,
Ղ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99,
E-mail: gorcort@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստույ- գությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պար- տավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՍՊԸ-ում: Տպագրանակ՝ 3150: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 17.03.2014թ.: